Անկախ հաշվետվական մեխանիզմ

# Հայաստան 2012-13թթ Առաջընթացի հաշվետվություն

Արտակ Քյուրումյան,
անկախ հետազոտող

First Progress Report

Open Government Partnership
INDEPENDENT REPORTING MECHANISM

Open Government Partnership

## Անկախ հաշվետվական մեխանիզմ

# Հայաստան

## 2012-13թթ Առաջընթացի հաշվետվություն


EXECUTIVE SUMMARY: ARMENIA ... 3

ՍԵՂՄԱԳԻՐ ... 11

I | Նախաբան ... 23

II | Գործողությունների ծրագրի մշակման գործընթաց ... 27

III | Խորհրդակցություններ իրականացման ժամանակ ... 31

IV | Պարտավորությունների կատարումը ... 33

1.1. Էլեկտրոնային կառավարման միջոցով բաց կառավարության խթանում ... 36

1.1.ա. Միասնական վճարումների համակարգի ներկայացում (պորտալ) ... 38

1.1.բ. Պետավտոտեսչության ոլորտի բարեփոխումներ ... 41

1.1.գ. Էլեկտրոնային համակարգի ներդրում հյուպատոսական ծառայությունների մատուցման համար ... 43

1.1.դ. «Mail-Armenia» համակարգի ներդրում ... 45

1.1.ե. «E-statistics» համակարգի ներդրում ... 47

1.1.զ. Քաղաքային համայնքներում էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառության համակարգի ներդրում ... 49

1.2. Կարգավորող նորմատիվ իրավական ակտերի վերանայում (Կարգավորման «Guillotine» ծրագիր) ... 51

Open Government Partnership

1.3. Պետական հատվածում ներքին աուդիտի համակարգի բարելավում ..... 53
1.4. Գնումների ընթացակարգերի բարելավում ..... 55
1.5. Բյուջեի պլանավորման և հաշվետվական համակարգերի բարելավում՝ ծրագրային բյուջետավորման ամբողջական կիրառման միջոցով ..... 57
2.1. Տեղեկատվության մատչելիության խթանում ..... 59
2.1.ա. Գույքի և եկամուտների հայտարարագրման թափանցիկության ապահովում ..... 61
2.1.բ. Պաշտոնական ինտերնետային կայքերի բովանդակության ստանդարտացում ..... 63
2.1.գ. Տեղեկատվության ազատության վերաբերյալ պետական ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավում ..... 65
2.2 Հարկային վարչարարության գործընթացներում թափանցիկության և օբյեկտիվության խթանում ..... 67
2.3. Կոռուպցիայի դեմ պայքար ..... 71
V | Ինքնագնահատման զեկույց ..... 75
VI | Հետագա քայլեր ..... 77
Հավելված. մեթոդաբանություն ..... 81

# EXECUTIVE SUMMARY

## INDEPENDENT REPORTING MECHANISM (IRM): ARMENIA PROGRESS REPORT 2012-2013

**Armenia's national action plan contained fifteen commitments, of which five were ambitious. Seven of these were relevant to an OGP Value, and eight were substantially or completely implemented. The next action plan provides, both, civil society and government an opportunity to work together and enhance the relevance of OGP for citizens.**

The Open Government Partnership (OGP) is a voluntary international initiative that aims to secure commitments from governments to their citizenry to promote transparency, empower citizens, fight corruption, and harness new technologies to strengthen governance. The Independent Reporting Mechanism (IRM) carries out a biannual review of the activities of each OGP participating country.

The Republic of Armenia officially began participating in OGP in October 2011, when Edward Nalbandian, the Minister of Foreign Affairs, declared the government's intent to join.

In Armenia, a working group set up by a Prime Minister's decree was in charge of drafting the OGP action plan. The representatives from Ministries of Foreign Affairs, Territorial Administration, Justice, and Finance and Economy were appointed to the working group. The America department of the Ministry of Foreign Affairs was in charge of coordinating activities related to drafting the action plan.

The action plan was approved by a "protocol decree" on 5 April 2012 by the Ministerial Committee on Institutional-Legal Affairs

### OGP PROCESS

Countries participating in OGP follow a process for consultation during development of their OGP action plan and its implementation.

Armenia developed its OGP action plan with participation from select civil society organizations (CSOs) that work in the areas of freedom of information, accountability, and anticorruption. However, several factors limited participation. Most notably, the government did not provide advance notice for consultations or invite CSOs to submit proposals for the draft action plan.

Eight representatives of CSOs participated in in-person consultations, which they considered "meaningful." However, these organizations noted that the draft action plan was not posted on the government website for public comment. The Freedom of Information Center created a website dedicated to OGP, which was recognized by the government. The government's process for seeking stakeholder comments when drafting its progress report on implementation, had several weaknesses, including the lack of a two-week public comment period, before the September 30, 2013 deadline as mandated by OGP guidelines.

### AT A GLANCE

MEMBER SINCE: 2011
NUMBER OF COMMITMENTS: 15

| LEVEL OF COMPLETION | |
|---|---|
| COMPLETED: | 7 OF 15 |
| SUBSTANTIAL: | 1 OF 15 |
| LIMITED: | 7 OF 15 |

| TIMING | |
|---|---|
| ON SCHEDULE: | 6 OF 15 |
| AHEAD OF SCHEDULE: | 1 OF 15 |

| COMMITMENT EMPHASIS | |
|---|---|
| ACCESS TO INFORMATION: | 4 OF 15 |
| CIVIC PARTICIPATION: | 1 OF 15 |
| ACCOUNTABILITY: | 7 OF 15 |
| TECH & INNOVATION FOR TRANSPARENCY & ACCOUNTABILITY: | 3 OF 15 |

| NUMBER OF COMMITMENTS WITH | |
|---|---|
| CLEAR RELEVANCE TO AN OGP VALUE: | 7 OF 15 |
| MODERATE OR TRANSFORMATIVE POTENTIAL IMPACT: | 5 OF 15 |
| SUBSTANTIAL OR COMPLETE IMPLEMENTATION: | 8 OF 15 |
| **ALL THREE (✪):** | **1 OF 15** |

*This report was prepared by Artak Kyurumyan, Independent Researcher.*

## COMMITMENT IMPLEMENTATION

As part of OGP, countries are required to make commitments in a two-year action plan. Table 1 summarizes each of Armenia's 15 commitments, including its potential impact, its level of completion, whether it is on schedule, and the key next steps for future OGP action plans. Armenia's plan covered a wide variety of sectors and had ambitious commitments. Armenia completed 7 of its 15 commitments. Table 2 summarizes the IRM researcher's assessment of progress on each commitment.

### Table 1 | Assessment of Progress by Commitment

| COMMITMENT SHORT NAME | POTENTIAL IMPACT | | | | LEVEL OF COMPLETION | | | | TIMING | NEXT STEPS |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ✪ COMMITMENT IS CLEARLY RELEVANT TO OGP VALUES AS WRITTEN, HAS SIGNIFICANT POTENTIAL IMPACT, AND IS SUBSTANTIALLY OR COMPLETELY IMPLEMENTED. | NONE | MINOR | MODERATE | TRANSFORMATIVE | NO T STARTED | LIMITED | SUBSTANTIAL | COMPLETE | | |
| **1.1 a. Introduce a unified payment system (portal):** Introduce an online unified payment system for state fees (e.g., licenses, permits, services). | ■ | ■ | | | ■ | ■ | ■ | ■ | On schedule | None: Completed commitment |
| **1.1.b. Improve system for car inspection and licensing:** Use the one-stop shop principle for car registration and other vehicle services. | ■ | ■ | | | ■ | ■ | ■ | ■ | On schedule | **New commitment** based on existing implemntation |
| **1.1.c. Implement an electronic system for consular services:** Implement electronic consular services. | ■ | ■ | | | ■ | ■ | ■ | | Behind schedule | None: Abandon commitment |
| **1.1.d. Implement Mail-Armenia system:** Citizens who apply for a passport for the first time will be provided with an email address, which will be used for all state notifications. | ■ | ■ | | | ■ | ■ | | | Behind schedule | Revision of commitment to be more achievable or measureable |
| **1.1.e. Introduce e-statistics system:** Introduce an electronic filing system for state statistical service reports. | ■ | ■ | | | ■ | ■ | | | Behind schedule | New commitment |
| **1.1.f. Introduce e-documentation sharing system in urban communities:** Connect 48 urban administrations to the Mulberry electronic document-sharing system. | ■ | ■ | | | ■ | ■ | ■ | ■ | On schedule | None: Completed commitment |

| COMMITMENT SHORT NAME | POTENTIAL IMPACT | | | | LEVEL OF COMPLETION | | | | TIMING | NEXT STEPS |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ✪ COMMITMENT IS CLEARLY RELEVANT TO OGP VALUES AS WRITTEN, HAS SIGNIFICANT POTENTIAL IMPACT, AND IS SUBSTANTIALLY OR COMPLETELY IMPLEMENTED | NONE | MINOR | MODERATE | TRANSFORMATIVE | NO T STARTED | LIMITED | SUBSTANTIAL | COMPLETE | | |
| **1.2. Review the regulatory normative legal acts (Regulatory Guillotine Project):** Create a national regulatory framework, inspired by international best practices, to ensure a business- and citizen-friendly regulatory enviornment. | ■ | ■ | | | ■ | ■ | ■ | ■ | On schedule | New commitment |
| **1.3. Improve the internal audit system for the public sector:** Imple-ment the new internal audit system, based on international standards and best practices, in all central govern-mental entities, town communities and **commercial and noncommercial government organizations.** | ■ | ■ | | | ■ | ■ | ■ | ■ | On schedule | None: Completed implementation |
| **1.4. Improve procurement procedures:** Disclose detailed information, ensure better compliance, trasnsparency and competition to improve the procurement system and enhance the institutional capacity of public procurement bodies. | ■ | ■ | ■ | | ■ | ■ | | | Behind schedule | **Further work** on basic implementation |
| **1.5. Improve budget planning and reporting systems through full utilization of program budgeting:** Introduce program budgeting by 2014 to improve reporting on the use of public funds to ensure accountability and transparency in sectors and Ministries, and strengthen internal and external auditing procedures. | ■ | ■ | ■ | ■ | ■ | ■ | | | Behind schedule | Further work |
| 2.1 Promoting Access To Information | | | | | | | | | | |
| **2.1.a. Ensure transparency of asset disclosure:** Ensure public access to asset and income declarations of high-ranking officials by posting the declarations on the website of the newly established Ethics Commission. | ■ | ■ | ■ | ■ | ■ | ■ | | | Behind schedule | Further work |
| **2.1.b. Standardize official website content:** Ensure regular publication of information related to budgets as well as day-to-day functions of government, in keeping with the law on freedom of information. | ■ | ■ | ■ | | ■ | ■ | | | Behind schedule | **Maintenance and monitoring** of completed implementation |

| COMMITMENT SHORT NAME | POTENTIAL IMPACT | | | | LEVEL OF COMPLETION | | | | TIMING | NEXT STEPS |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ✪ COMMITMENT IS CLEARLY RELEVANT TO OGP VALUES AS WRITTEN, HAS SIGNIFICANT POTENTIAL IMPACT, AND IS SUBSTANTIALLY OR COMPLETELY IMPLEMENTED | NONE | MINOR | MODERATE | TRANSFORMATIVE | NO T STARTED | LIMITED | SUBSTANTIAL | COMPLETE | | |
| ✪ **2.1.c. Improve knowledge and skills of public servants about access to information:** Organize traing sessions, in collaboration with civil society organizations, to improve knowledge and skills of public servants on access to information. | | | | | | | | | On schedule | Maintenance and monitoring |
| **2.2. Promote transparency and objectivity in tax administration:** By the end of 2013 use electronic processingfor 90 percent of taxpayers' reports, and create information centers to raise awareness and provide assistance to taxpayers. | | | | | | | | | Ahead of Schedule | New commitment |
| **2.3. Fight against corruption:** Develop government anticorruption policies based on feedback from civil society. Set up a Secretariat to assist the Council on the Fight against Corruption, as well as to faciltate interaction between state and civil society organizations. | | | | | | | | | Behind Schedule | Further work |

## Table 2 | Summary of Progress by Commitment

| COMMITMENT | SUMMARY OF FINDINGS |
|---|---|
| ✪ COMMITMENT HAS CLEAR RELEVANCE TO OGP VALUES AS WRITTEN, SIGNIFICANT POTENTIAL IMPACT, AND SUBSTANTIAL OR COMPLETE IMPLEMENTATION. | |
| **1.1.a. Introduce a unified payment system (portal):**<br>• OGP value relevance: Unclear<br>• Potential impact: Minor<br>• Completion: Complete | The unified payment system is designed to make payments observable by the state body. The commitment lacked relevance to core OGP values. Civil society representatives did not express an interest in this commitment. |
| **1.1.b. Improve system for car inspection and licensing:**<br>• OGP value relevance: Unclear<br>• Potential impact: Minor<br>• Completion: Complete | This commitment improved provision of car registration and other vehicle related services. However, according to civil society representatives, this commitment lacked relevance to core OGP values. |
| **1.1.c. Implement an electronic system for consular services:**<br>• OGP value relevance: Unclear<br>• Potential impact: Minor<br>• Completion: Substantial | This system was implemented in more than half the consular services; however, civil society organizations (CSOs) did not consider it an important OGP commitment. |
| **1.1.d. Implement Mail-Armenia system:**<br>• OGP value relevance: Unclear<br>• Potential impact: Minor<br>• Completion: Limited | The commitment has been partially implemented; however, rather than only receive government notifications the system should enable citizens to submit questions and requests for information to government. Further work is required to make this commitment relevant to core OGP values of access to information and public participation. |
| **1.1.e. Introduce e-statistics system:**<br>• OGP value relevance: Unclear<br>• Potential impact: Minor<br>• Completion: Limited | The commitment is difficult to understand. As written it does not articulate how it will promote the OGP values of access to information and accountability. |
| **1.1.f. Introduce e-document sharing system in urban communities:**<br>• OGP value relevance: Unclear<br>• Potential impact: Minor<br>• Completion: Complete | Implementation is complete. However, its relevance for OGP is unclear. Although sharing electronic documents through the Mulberry system is beneficial for exchanging information among state bodies, the commitment does not provide public access to government information. |
| **1.2. Review the regulatory normative legal acts (Regulatory Guillotine Project):**<br>• OGP value relevance: Unclear<br>• Potential impact: Minor<br>• Completion: Complete | This commitment was fulfilled. Some CSOs suggested simplifying the business process as an important commitment. In the next action plan the Government should formulate a new commitment building on this one to improve the business environment in Armenia. |
| **1.3. Improve internal audit system for the public sector:**<br>• OGP value relevance: Unclear<br>• Potential impact: Minor<br>• Completion: Complete | Improving an internal auditing system focused on increasing transparency and strengthening the public financial management system. CSOs were less interested in this commitment because the results of internal audit investigations are not subject to public disclosure. |

| NAME OF COMMITMENT | SUMMARY OF RESULTS |
|---|---|
| **1.4. Improve procurement procedures:**<br>• OGP value relevance: Clear<br>• Potential impact: Moderate<br>• Completion: Limited | Even though there is an opinion that the Armenian legislation on procurement is generally in line with international standards, according to civil society organisations and experts are of the view that its implementation needs further efforts to identify endemic problems with the existing procurement system, and to ensure better implementation. |
| **1.5. Improve budget planning and reporting systems through full utilization of program budgeting:**<br>• OGP value relevance: Clear<br>• Potential impact: Transformative<br>• Completion: Limited | Implementation of this commitment will strengthen parliamentary as well as public oversight of different budgetary programs. As a result, the public as well as parliament will gain more access to program- and sector-specific performance indicators. Program budgeting was to be fully introduced in 2014 as defined in the action plan, but this commitment is behind schedule and will be fully introduced in 2018. |
| **2.1 Promoting Access To Information** | |
| **2.1.a. Ensure transparency of asset declaration:**<br>• OGP value relevance: Clear<br>• Potential impact: Transformative<br>• Completion: Limited | The GoA is working on program budgeting since 2004 and the first legislative changes related to program budgeting took place only in 2013. A legislation to ensure transparency in assets declaration was in place for several years, but there was no tool to implement it. This commitment assumed introduction of website to publicly disclose assets and income of all high-ranking public officials. CSOs proactively monitored its implementation. Although the commitment represents a significant step forward, only half of all high-ranking public officials' assets and income declarations have been made public. |
| **2.1.b. Standardize official website content:**<br>• OGP value relevance: Clear<br>• Potential impact: Moderate<br>• Completion: Limited | A draft government decree was presented that ensures all information as prescribed by the Law on Freedom of Information is published regularly. This draft decree however, is yet to be finalized. While the government self-assessment report states it consulted analysts on how to implement this commitment, it is unclear whether any CSOs were consulted. The government is yet to disclose the results of the consultations and approve the decree. |
| ✪ **2.1.c. Improve knowledge and skills of public servants about access to information:**<br>• OGP value relevance: Clear<br>• Potential impact: Moderate<br>• Completion: Complete | In collaboration with a CSO, the government trained officials on the Law on Freedom of Information. This commitment is a good example of collaboration between civil society and government. |
| **2.2. Promote transparency and objectivity in tax administration:**<br>• OGP value relevance: Clear<br>• Potential impact: Minor<br>• Completion: Complete | This commitment called for an online system to process at least 90 percent of all taxpayers' reports. Service and information centers were also established to assist taxpayers. Although the service centers and online system have become popular with taxpayers, it is early to assess the impact of the new system to enhance transparency in tax administration. |
| **2.3. Fight against corruption:**<br>• OGP value relevance: Clear<br>• Potential impact: Minor<br>• Completion: Limited | Since 2009, the government has made continuous efforts to fight corruption; however, limited information on specific activities on its fight against corruption is publicly available. This commitment included the establishment of a Secretariat to assist the government's Council on Fight against Corruption and an obligation to consult with CSOs and based on the results of consultations to make changes to specific anti-corruption activities. In general the GoA doesn't consult with the CSOs or consults with selected CSOs, thus this was an important commitment. However, as of June 2013 the secretariat has not been established as required by the governments anti-corruption strategy for 2009-2012 and there is no evidence that the government consulted the civil society on its fight against corruption and made changes to its activities based on these consultations. |

## RECOMMENDATIONS

In Armenia, for the OGP to be an important tool that makes government more open, accountable, and responsive to its citizens, both civil society and government need to work together to improve the relevance of OGP and its core values among citizens and officials. Based on the challenges and findings identified in this action plan, the principal recommendations are:

1. The action plan preparation process should comply with the following minimum standards: (a) include wider public involvement; (b) provide advance notice for all public consultations; (c) publish summaries of recommendations received; (d) clearly formulate timelines and responsibilities for agencies and officials responsible for the commitments.
2. To guarantee that important issues relevant to the Armenian people are incorporated in the action plan, civil society organizations must get involved with the OGP process, participate in consultations, and use opportunities created by the government for the upcoming action plan.
3. The action plan should include commitments that are directly related to OGP values in the areas of: (a) fight against corruption; (b) public financial management (including public procurements and program budgeting); (c) education; (d) health; (e) environmental protection; (f) tax administration and (g) transparency of asset and income declarations of high level government officials.

## ELIGIBILITY REQUIREMENTS: 2012

To participate in OGP, governments must demonstrate commitment to open government by meeting minimum criteria on key dimensions of open government. Third-party indicators are used to determine country progress on each of the dimensions. The OGP Support Unit converts the raw data into a four-point scale, listed in parentheses below. For more information, visit http://www.opengovpartnership.org/how-it-works/how-join/eligibility-criteria. Raw data has been recoded by OGP staff into a four-point scale, listed in parentheses below.

### BUDGET TRANSPARENCY:
Not Evaluated

### ACCESS TO INFORMATION:
Law Enacted

(2 OF 4)

### ASSET DISCLOSURE:
Elected officials to Parliament only

(3 OF 4)

### CIVIC PARTICIPATION:
5.88 OF 10

(3 OF 4)

Artak Kyurumyan is an independent researcher with experience in public policy and administration. He has worked for the Ministry of Finance, Government of Armenia. He got his Master in Engineering from the American University, Armenia (1995), and an MBA from Tulane University (2003).

Open Government Partnership
INDEPENDENT REPORTING MECHANISM

The Open Government Partnership (OGP) aims to secure concrete commitments from governments to promote transparency, empower citizens, fight corruption, and harness new technologies to strengthen governance. OGP's Independent Reporting Mechanism assesses development and implementation of national action plans to foster dialogue among stakeholders and improve accountability.

TOC

# Անկախ հաշվետվական մեխանիզմ
# Հայաստան
# 2012-13թթ Առաջընթացի հաշվետվություն

Գործողությունների ազգային ծրագիրը պարունակում էր 15 պարտավորություն, որոնցից 5-ը՝ հավակնոտ: Պարտավորություններից 7-ը համապատասխանում են ԲԿԳ արժեքներին, 8-ը էականորեն կամ ամբողջությամբ կատարվել են: Գործողությունների հաջորդ ծրագրի նախապատրաստման գործընթացը քաղաքացիական հասարակությանը և կառավարությանը հնարավորություն է տալիս միասին աշխատել իրենց քաղաքացիների համար ԲԿԳ դերը մեծացնելու ուղղությամբ:

Բաց կառավարման գործընկերությունը կամավոր միջազգային նախաձեռնություն է, որի նպատակն է ապահովել կառավարությունների կողմից իրենց քաղաքացիների առջև թափանցիկության խթանմանը, նրանց լիազորություններ տալու, կոռուպցիայի դեմ պայքարելու և կառավարման որակը բարելավելու նպատակով նոր տեխնոլոգիաների օգտագործման հետ կապված պարտավորությունների ստանձնումը: ԱՀՄ-ն երկու տարին մեկ կատարում է ԲԿԳ մասնակից բոլոր երկրների կողմից իրականացվող միջոցառումների ուսումնասիրություն:

Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես անդամակցում է ԲԿԳ-ին 2011թ. հոկտեմբերից, երբ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը հայտարարեց նախաձեռնությանն անդամակցելու կառավարության մտադրության մասին: ԲԿԳ գործողությունների ծրագրի նախագծումը դրվել էր վարչապետի կողմից ստեղծված աշխատանքային խմբի վրա: Աշխատանքային խմբում ընդգրկված են եղել արտաքին գործերի, տարածքային կառավարման, արդարադատության, ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունների ներկայացուցիչներ: Գործողությունների ծրագրի նախագծման հետ կապված աշխատանքների համակարգումը դրվել էր արտաքին գործերի նախարարության ամերիկայի վարչության վրա: Մշտապես գործող նախարարական պետաիրավական կոմիտեի 2012թ. ապրիլի 5-ի նիստում հավանության է արժանացել Հայաստանի ԲԿԳ գործողությունների ծրագիրը հաստատող ՀՀ կառավարության արձանագրային որոշումը:

## Ամփոփ

Անդամակցություն՝ 2011
Պարտավորությունների քանակը՝ 15

### Կատարման աստիճանը

| | |
|---|---|
| Կատարված՝ | 15-ից 7-ը |
| Զգալի չափով՝ | 15-ից 1-ը |
| Սահմանափակ՝ | 15-ից 7-ը |

### Ժամկետայնությունը

| | |
|---|---|
| Ժամանակին կատարված՝ | 15-ից 6-ը |
| Ժամկետից շուտ կառարված՝ | 15-ից 1-ը |

### Պարտավորությունների ուղղվածությունը

| | |
|---|---|
| Տեղեկատվության հասանելիություն | 15-ից 4-ը |
| Հանրային մասնակցություն՝ | 15-ից 1-ը |
| Հաշվետվողականություն՝ | 15-ից 7-ը |
| Տեխնոլոգիաները և նորարարությունը թափանցիկության և հաշվետվողա-կանության համար՝ | 15-ից 3-ը |

### Պարտավորություններ, որոնք՝

| | |
|---|---|
| Հստակ կերպով կապված են ԲԿԳ արժեքներից որևէ մեկի հետ՝ | 15-ից 7-ը |
| Հնարավոր տրանսֆորմատիվ կամ չափավոր ազդեցություն կարող են ունենալ՝ | 15-ից 5-ը |
| Լրիվ կամ զգալի չափով կատարված՝ | 15-ից 8-ը |
| **Բոլոր երեքը (✪)՝** | **15-ից 1-ը** |

*Արփակ Քյուրումյան, անկախ հետազոտող*

**ԲԿԳ գործընթաց**

ԲԿԳ-ին անդամակցող երկրներն իրենց գործողությունների ծրագրերի նախագծման և ներդրման ժամանակ հետևում են խորհրդակցությունների որոշակի ընթացակարգերի:

Հայաստանը ԲԿԳ գործողությունների իր ծրագիրը մշակել է տեղեկատվության ազատության, հաշվետվողականության և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում աշխատող քաղաքացիական հասարակության մի քանի ընտրված կազմակերպությունների (այսուհետ՝ ՔՀԿ) մասնակցությամբ: Սակայն մի շարք գործոններ սահմանափակել են քննարկումներին մասնակցությունը: Նախ և առաջ կառավարությունը կանխավ հայտարարություն չի տարածել խորհրդակցությունների մասին և ՔՀԿ-ներին չի առաջարկել գործողությունների ծրագրի նախագծում ընդգրկելու համար առաջարկություններ ներկայացնել:

ՔՀԿ-ների ութ ներկայացուցիչներ մասնակցել են դեմ առ դեմ քննարկումներին, որոնք նրանք համարել են իմաստալից: Սակայն այդ կազմակերպությունները նշել են, որ գործողությունների ծրագրի նախագիծը կարծիքներ ստանալու նպատակով չի տեղադրվել կառավարության ինտերնետային կայքում: Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ն ստեղծել է ԲԿԳ-ին նվիրված ինտերնետային կայք, որը կառավարության կողմից ճանաչվել է որպես պաշտոնական կայքէջ:

Գործողությունների ծրագրի կատարման վերաբերյալ ինքնագնահատման զեկույցի նախագծման ժամանակ կառավարության կողմից շահառուներից մեկնաբանություններ ստանալու գործընթացը մի շարք թերություններ է ունեցել: Մինչև 2013թ. սեպտեմբերի 30-ի վերջնաժամկետը կառավարությունը ԲԿԳ ուղեցույցներով պահանջվող երկշաբաթյա ժամկետ չի տրամադրել հանրությունից կարծիքներ ստանալու համար:

## Պարտավորությունների կատարումը

Որպես ԲԿԳ մասնակիցներ, երկրները պետք է երկամյա գործողությունների ծրագրով պարտավորություններ ստանձնեն: Աղյուսակ 1-ում ամփոփված են Հայաստանի կողմից ստանձնած բոլոր 15 պարտավորությունները, ներառյալ դրանց հնարավոր ազդեցությունը, կատարման աստիճանը, թե, արդյոք, դրանց ընթացքը սահմանված ժամկետի շրջանակներում է, ինչպես նաև ԲԿԳ գործողությունների հաջորդ ծրագրերի հետ կապված հետագա քայլերի վերաբերյալ առաջարկություններ: Հայաստանի ծրագրում ներկայացված էին տարատեսակ ոլորտներ և հավակնոտ պարտավորություններ: Հայաստանը կատարել է իր 15 պարտավորություններից 7-ը: Աղյուսակ 2-ում ամփոփված են յուրաքանչյուր պարտավորության գծով առաջընթացի վերաբերյալ ԱՀՄ հետազոտողի գնահատականները:

### Աղյուսակ 1 | Առանձին պարտավորությունների գծով առաջընթացը

| Պարտավորության կարճ նկարագիրը | Հնարավոր ազդեցությունը | | | | Կատարման աստիճանը | | | | Կատարման ժամկետը | Հետագա քայլերը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ✪ Պարտավորությունն ամբողջությամբ համապատասխանում է ԲԿԳ արժեքային համակարգի պահանջներին, ունի զգալի հնարավոր ազդեցություն և զգալի չափով կամ ամբողջությամբ կատարվել է | Ոչ մի | Փոքր | Չափավոր | Տրանսֆորմատիվ | Չսկսած | Սահմանափակ չափով կատարված | Զգալի չափով կատարված | Կատարված | | |
| **1.1.ա.** Միասնական վճարումների համակարգի ստեղծում (պորտալ). Պետական տուրքերի (լիցենզիա-ների, թույլտվությունների, ծառայությունների և այլ)վճարմանմիասնական էլեկտրոնային համակարգի ներդրում | | | | | | | | | Համաձայն ծրագրի | Ոչինչ: Պարտավորությունը կատարված է |
| **1.1.բ.** Պետավտոտեսչության ոլորտի բարեփոխումներ. Մեքենաների գրանցման և այլ ծառայությունների մատուցման նպատակով մեկ պատուհանի սկզբունքի ներդրում | | | | | | | | | Համաձայն ծրագրի | Գոյություն ունեցող պարտավորության հիման վրա ձևակերպել նոր պարտավորություն |
| **1.1.գ.** Էլեկտրոնային համակարգի ներդրում հյուպատոսական ծառայություններում. Հյուպատոսական ծառայությունների մատուցման համար էլեկտրոնային համակարգի ստեղծում | | | | | | | | | Ժամանակացույցից հետ է մնում | Ոչինչ: Հրաժարվել պարտավորությունից |

| Պարտավորության կարճ նկարագիրը | Հնարավոր ազդեցությունը | | | | Կատարման աստիճանը | | | | Կատարման ժամկետը | Հետագա քայլերը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ✪ Պարտավորությունն ամբողջությամբ համապատասխանում է ԲԿԳ արժեքային համակարգի պահանջներին, ունի զգալի հնարավոր ազդեցություն և զգալի չափով կամ ամբողջությամբ կատարվել է | Ոչ մի | Փոքր | Չափավոր | Տրանսֆորմատիվ | Չսկսված | Սահմանափակ չափով կատարված | Զգալի չափով կատարված | Կատարված | | |
| **1.1.դ.** «Mail-Armenia» համակարգի ներդրում. Առաջին անգամ անձնագիր ստանալու համար դիմած քաղաքացիներին էլեկտրոնային հասցեի տրամադրում՝ պետության կողմից կատարվող ծանուցումների համար | ■ | ■ | | | ■ | ■ | | | Ժամանակացույցից հետ է մնում | Վերաձևակերպել պարտավորությունն այն ավելի կատարելի կամ չափելի դարձնելու համար |
| **1.1.ե.** «E-statistics» համակարգի ներդրում. Ազգային վիճակագրական ծառայությանը տրամադրվող հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի ներդրում | ■ | ■ | | | ■ | ■ | | | Ժամանակացույցից հետ է մնում | Գոյություն ունեցող պարտավորության հիման վրա ձևակերպել նոր պարտավորություն |
| **1.1.զ.** Քաղաքային համայնքներում փաստաթղթերի էլեկտրոնային շրջանառության համակարգի ներդրում. 48 քաղաքային համայնքների վարչական մարմինների ընդգրկում Mulberry էլեկտրոնային համակարգում | ■ | ■ | | | ■ | ■ | ■ | ■ | Համաձայն ծրագրի | Ոչինչ: Պարտավորությունը կատարված է |
| **1.2.** Կարգավորող իրավական ակտերի վերանայում (կարգավորման «Guillotine» ծրագիր). միջազգային լավագույն փորձի հիման վրա պետական կարգավորման համակարգի ստեղծում՝ գործարարների ու քաղաքացիների համար բարենպաստ կարգավորող միջավայրի ապահովման նպատակով | ■ | ■ | | | ■ | ■ | ■ | ■ | Համաձայն ծրագրի | Գոյություն ունեցող պարտավորության հիման վրա ձևակերպել նոր պարտավորություն |
| **1.3.** Պետական հատվածում ներքին աուդիտի համակարգի բարելավում. Միջազգային ստանդարտների և լավագույն փորձի վրա հիմնված ներքին աուդիտի նոր համակարգի ներդրում կարևոր պետական կառույցներում, քաղաքային համայնքներում և առևտրային ու պետական ոչ առևտրային կազմակերպություններում | ■ | ■ | | | ■ | ■ | ■ | ■ | Համաձայն ծրագրի | Ոչինչ: Պարտավորությունը կատապարված է: |

| Պարտավորության կարճ նկարագիրը | Հնարավոր ազդեցությունը | | | | Կատարման աստիճանը | | | | Կատարման ժամկետը | Հետագա քայլերը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ✪ Պարտավորությունն ամբողջությամբ համապատասխանում է ԲԿԳ արժեքային համակարգի պահանջներին, ունի զգալի հնարավոր ազդեցություն և զգալի չափով կամ ամբողջությամբ կատարվել է | Ոչ մի | Փոքր | Չափավոր | Տրանսֆորմատիվ | Չսկսած | Սահմանափակ չափով կատարված | Զգալի չափով կատարված | Կատարված | | |
| **1.4.** Գնումների համակարգի բարելավում. Գնումների համակարգի և գնումներով զբաղվող մարմինների ինստիտուցիոնալ կարողությունների բարելավում, մանրամասն տեղեկատվության հրապարակում, օրենքների ավելի լավ կատարման երաշխիք, թափանցիկության և մրցակցության ապահովում, էլեկտրոնային գնումների համակարգի ներդրում և այլն | | | | | | | | | Ժամանակացույցից հետ է մնում | Հետագա քայլեր ներդրման ուղղությամբ |
| **1.5.** Ծրագրային բյուջետավորման ամբողջական կիրառման միջոցով բյուջեի պլանավորման և հաշվետվության համակարգերի բարելավում. պետական միջոցների օգտագործման վերաբերյալ հաշվետվությունների բարելավման, հաշվետվողականության և թափանցիկության ապահովման նպատակով մինչև 2014թ. ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրում | | | | | | | | | Ժամանակացույցից հետ է մնում | Հետագա քայլեր ներդրման ուղղությամբ |
| **2.1.ա.** Գույքի և եկամուտների հայտարարագրման թափանցիկության ապահովում. բարձրաստիճան պետական պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրերի հրապարակում էթիկայի հանձնաժողովի ինտերնետային կայքում՝ դրանք հանրությանը հասանելի դարձնելու նպատակով | | | | | | | | | Ժամանակացույցից հետ է մնում | Հետագա քայլեր ներդրման ուղղությամբ: |
| **2.1.բ**. Պաշտոնական ինտերնետային կայքերի բովանդակության ստանդարտացում. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան բյուջեների և կառավարության ամենօրյա գործունեության վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնության ապահովման համար | | | | | | | | | Ժամանակացույցից հետ է մնում | Պահպանել պարտավորությունը և դիտարկել դրա կատարումը |

| Պարտավորության կարճ նկարագիրը | Հնարավոր ազդեցությունը | | | | Կատարման աստիճանը | | | | Կատարման ժամկետը | Հետագա քայլերը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ✪ Պարտավորությունն ամբողջությամբ համապատասխանում է ԲԿԳ արժեքային համակարգի պահանջներին, ունի զգալի հնարավոր ազդեցություն և զգալի չափով կամ ամբողջությամբ կատարվել է | Ոչ մի | Փոքր | Չափավոր | Տրանսֆորմատիվ | Չսկսած | Սահմանափակ չափով կատարված | Զգալի չափով կատարված | Կատարված | | |
| ✪ **2.1.գ.** Տեղեկատվության ազատության վերաբերյալ պետական ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավում. ՔՀԿ-ների հետ համատեղ տեղեկատվության ազատության վերաբերյալ պետական ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավմանը նպատակաուղղված դասընթացների կազմակերպում | | | | | | | | | Համաձայն ծրագրի | Պահպանել պարտավորությունը և դիտարկել դրա կատարումը |
| **2.2.** Հարկային վարչարարության գործընթացներում թափանցիկության և օբյեկտիվության խթանում. 2013թ. վերջի դրությամբ հարկատուների առնվազն 90 տոկոսի հաշվետվությունների առցանց մշակում, իրազեկվածության բարելավում և հարկատուներին օժանդակելու նպատակով տեղեկատվական կենտրոնների ստեղծում, այլ բարեփոխումներ | | | | | | | | | Համաձայն ծրագրի | Գոյություն ունեցող պարտավորության հիման վրա ձևակերպել նոր պարտավորություն |
| **2.3.** Կոռուպցիայի դեմ պայքար. ՔՀԿ-ների հետ քննարկումների հիման վրա Կառավարության կողմից իրականացվող հակակոռուպցիոն քաղաքականության ձևակերպումների և իրականացման գործընթացում ուղղումների կատարում և կառավարության կառուցվածքում Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին և նրան առընթեր Մոնիտորինգային հանձնաժողովին աջակցող Քարտուղարության ստեղծում՝ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցությանը նպաստելու համար | | | | | | | | | Ժամանակացույցից հետ է մնում | Հետագա քայլեր ներդրման ուղղությամբ: |

## Աղյուսակ 2. Պարտավորությունների գծով առաջընթացի ամփոփում

| Պարտավորության կարճ նկարագիրը | Արդյունքների ամփոփումը |
|---|---|
| ✪ Պարտավորությունն ամբողջությամբ համապատասխանում է ԲԿԳ արժեքային համակարգի պահանջներին, ունի զգալի հնարավոր ազդեցություն և զգալի չափով կամ ամբողջությամբ կատարվել է | |
| 1.1.ա. Միասնական վճարումների համակարգի ստեղծում (պորտալ).<br>• ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. ***պարզ չէ***<br>• Հնարավոր ազդեցությունը. ***փոքր***<br>• Կատարման աստիճանը. ***կապարված*** | Այս համակարգը նախատեսված է վճարումները պետական մարմինների համար դիտարկելի դարձնելու համար: Այս պարտավորությունը բավարար չափով չի առնչվում ԲԿԳ արժեքային համակարգի հետ: ՔՀԿ-ների ներկայացուցիչները հետաքրքրություն հանդես չեն բերել այս պարտավորության նկատմամբ: |
| 1.1.բ. Պետավտոտեսչության ոլորտի բարեփոխումներ<br>• ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. ***պարզ չէ***<br>• Հնարավոր ազդեցությունը. ***փոքր***<br>• Կատարման աստիճանը. ***Կապարված*** | Այս պարտավորությունը բարելավել է մեքենաների գրանցման և տրասնպորտային միջոցների հետ կապված այլ ծառայությունների մատուցման աշխատանքները: Սակայն համաձայն ՔՀԿ-ների ներկայացուցիչների այս պարտավորությունը չի առնչվում ԲԿԳ արժեքային համակարգին: |
| 1.1.գ. Էլեկտրոնային համակարգի ներդրում հյուպատոսական ծառայությունների մատուցման համար<br>• ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. ***պարզ չէ***<br>• Հնարավոր ազդեցությունը. ***փոքր***<br>• Կատարման աստիճանը. ***զգալի չափով կապարված*** | Այս համակարգը ներդրվել է հյուպատոսական կետերի մեծ մասում: ՔՀԿ-ներն այս պարտավորությունները չեն դիտարկել որպես ԲԿԳ կարևոր պարտավորություն: |
| 1.1.դ. «Mail-Armenia» համակարգի ներդրում<br>• ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. ***պարզ չէ***<br>• Հնարավոր ազդեցությունը. ***փոքր***<br>• Կատարման աստիճանը. ***սահմանափակ չափով կապարված*** | Պարտավորությունը որոշ չափով կատարվել է, սակայն միայն կառավարությունից ծանուցումներ ստանալու փոխարեն այն պետք է քաղաքացիներին հնարավորություն տա նաև կառավարությանը հարցեր և դիմումներ ներկայացնել: Լրացուցիչ աշխատանք է հարկավոր այս պարտավորությունը ԲԿԳ տեղեկատվության հասանելիության և հանրային մասնակցության արժեքների պահանջներին համապատասխանեցնելու համար: |

✪ Պարտավորությունն ամբողջությամբ համապատասխանում է ԲԿԳ արժեքային համակարգի պահանջներին, ունի զգալի հնարավոր ազդեցություն և զգալի չափով կամ ամբողջությամբ կատարվել է

| | |
|---|---|
| 1.1.ե. «E-statistics» համակարգի ներդրում<br>• ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. ***պարզ չէ***<br>• Հնարավոր ազդեցությունը. ***փոքր***<br>• Կատարման աստիճանը. ***սահմանափակ չափով կատարված*** | Պարտավորության իմաստը դժվար է հասկանալ: Ներկա ձևակերպմամբ չի մանրամասնվում, թե այն ինչպես է խթանում ԲԿԳ տեղեկատվության հասանելիության և հաշվետվողականության արժեքները: |
| 1.1.բ. Պետավտոտեսչության ոլորտի բարեփոխումներ<br>• ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. ***պարզ չէ***<br>• Հնարավոր ազդեցությունը. ***փոքր***<br>• Կատարման աստիճանը. ***Կատարված*** | Այս պարտավորությունը բարելավել է մեքենաների գրանցման և տրասնպորտային միջոցների հետ կապված այլ ծառայությունների մատուցման աշխատանքները: Սակայն համաձայն ՔՀԿ-ների ներկայացուցիչների այս պարտավորությունը չի առնչվում ԲԿԳ արժեքային համակարգին: |
| 1.1.զ. Քաղաքային համայնքներում էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառության համակարգի ներդրում<br>• ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. ***պարզ չէ***<br>• Հնարավոր ազդեցությունը. ***փոքր***<br>• Կատարման աստիճանը. ***Կատարված*** | Այս պարտավորությունը կատարված է: Սակայն ԲԿԳ արժեքային համակարգի հետ կապը պարզ չէ: «Mulberry» համակարգի միջոցով փաստաթղթերի էլեկտրոնային շրջանառությունը թեև բարելավել է պետական մարմինների միջև տեղեկատվության փոխանակումը, սակայն պարտավորությունը կառավարության ունեցած տեղեկատվությունը հասանելի չի դարձնում հանրության համար: |
| 1.2. Կարգավորող իրավական ակտերի վերանայում («Guillotine» ծրագիր)<br>• ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. ***պարզ չէ***<br>• Հնարավոր ազդեցությունը. ***փոքր***<br>• Կատարման աստիճանը. ***Կատարված*** | Այս պարտավորությունը կատարված է: Որոշ ՔՀԿ-ներ այն կարևոր են համարել: Գործողությունների հաջորդ ծրագրում կառավարությունը կարող է այս պարտավորության հիման վրա ձևակերպել նորը՝ Հայաստանում գործարար միջավայրը բարելավելու նպատակով: |

| ✪ Պարտավորությունն ամբողջությամբ համապատասխանում է ԲԿԳ արժեքային համակարգի պահանջներին, ունի զգալի հնարավոր ազդեցություն և զգալի չափով կամ ամբողջությամբ կատարվել է | |
|---|---|
| 1.3. Պետական հատվածում ներքին աուդիտի համակարգի բարելավում<br>• ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. ***պարզ չէ***<br>• Հնարավոր ազդեցությունը. ***փոքր***<br>• Կատարման աստիճանը. ***Կատարված*** | Ներքին աուդիտի համակարգի կատարելագործումը նպատակ ունի հզորացնել պետական ֆինանսական կառավարման համակարգը և բարելավել թափանցիկության ապահովումը: ՔՀԿ-ները քիչ էին հետաքրքրված այս պարտավորությամբ, քանի որ ներքին աուդիտի հետազոտության արդյունքները հանրությանը հասանելի չեն: |
| 1.4. Գնումների համակարգի բարելավում<br>• ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. ***պարզ չէ***<br>• Հնարավոր ազդեցությունը. ***չափավոր***<br>• Կատարման աստիճանը. ***սահմանափակ չափով կատարված*** | Չնայած գոյություն ունի կարծիք, որ գնումների վերաբերյալ հայկական օրենսդրությունն, ընդհանուր առմամբ, համապատասխանում է միջազգային չափանիշներին, սակայն լրացուցիչ ջանքեր են պահանջվում գոյություն ունեցող խնդիրները բացահայտելու և օրենսդրությունն ավելի լավ կիրառելու համար: |
| 1.5. Ծրագրային բյուջետավորման ամբողջական կիրառման միջոցով բյուջեի պլանավորման և հաշվետվության համակարգերի բարելավում<br>• ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. ***պարզ չէ***<br>• Հնարավոր ազդեցությունը. ***փրանսֆորմափիվ***<br>• Կատարման աստիճանը. ***սահմանափակ չափով կատարված*** | Այս պարտավորության կատարումը կհզորացնի բյուջետային տարբեր ծրագրերի կատարման նկատմամբ խորհրդարանի և հանրության վերահսկողությունը: Արդյունքում, հանրությունը և խորհրդարանը ավելի շատ տեղեկատվություն կստանան ծրագրերի և ոլորտների ծրագրային ցուցանիշների վերաբերյալ: Ծրագրային բյուջետավորումը պետք է ամբողջությամբ ներդրվեր 2014թ., ինչպես սահմանված է գործողությունների ծրագրում, սակայն այս պարտավորության կատարումը ետ է մնացել ժամանակացույցից և համաձայն կառավարության գործունեության վերջին ծրագրի, այն ամբողջությամբ կներդրվի 2018թ: |
| 2.1.ա. Գույքի և եկամուտների հայտարարագրման թափանցիկության ապահովում<br>• ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. ***պարզ չէ***<br>• Հնարավոր ազդեցությունը. ***փրանսֆորմափիվ***<br>• Կատարման աստիճանը. ***սահմանափակ չափով կատարված*** | Այս պարտավորությունը ենթադրում էր ինտերնետային կայքի ստեղծում, որտեղ կհրապարակվեն բարձրաստիճան պետական պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրերը: ՔՀԿ-ները ակտիվորեն դիտարկել են պարտավորության կատարումը: Թեև պարտավորությունը նշանակալից առաջընթաց քայլ է, սակայն բարձրաստիճան պետական պաշտոնյաների միայն կեսի գույքի և եկամուտների հայտարարագրերն են հասու եղել հանրությանը: |

| ✪ Պարտավորությունն ամբողջությամբ համապատասխանում է ԲԿԳ արժեքային համակարգի պահանջներին, ունի զգալի հնարավոր ազդեցություն և զգալի չափով կամ ամբողջությամբ կատարվել է | |
|---|---|
| 2.1.բ. Պաշտոնական ինտերնետային կայքերի բովանդակության ստանդարտացում<br>• ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. ***պարզ չէ***<br>• Հնարավոր ազդեցությունը. ***չափավոր***<br>• Կատարման աստիճանը. ***սահմանափակ չափով կատարված*** | Պատրաստվել է կառավարության որոշման նախագիծ, որի համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով պահանջվող տեղեկատվությունը ստանդարտացված կերպով պարբերաբար պետք է հրապարակվի: Սակայն կառավարության որոշման այս նախագիծը դեռևս ավարտուն տեսք չունի: Կառավարության ինքնագնահատման զեկույցում նշվում է, որ այն քննարկվել է տեխնիկական մասնագետների հետ, սակայն պարզ չէ, թե ՔՀԿ-ների հետ, արդյո՞ք, եղել են քննարկումներ: Կառավարությունը դեռևս պետք է հրապարակի քննարկումների արդյունքները և հաստատի որոշումը: |
| ✪ 2.1.գ. Տեղեկատվության ազատության վերաբերյալ պետական ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավում<br>• ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. ***պարզ չէ***<br>• Հնարավոր ազդեցությունը. ***չափավոր***<br>• Կատարման աստիճանը. ***կատարված*** | ՔՀԿ-ի հետ համագործակցությամբ կառավարությունը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ վերապատրաստել է պաշտոնյաներին: Այս պարտավորությունը կառավարության և քաղաքացիական հասարակության համագործակցության լավ օրինակ է: |
| 2.2. Հարկային վարչարարության գործընթացներում թափանցիկության և օբյեկտիվության խթանում<br>• ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. ***պարզ չէ***<br>• Հնարավոր ազդեցությունը. ***փոքր***<br>• Կատարման աստիճանը. ***կատարված*** | Այս պարտավորությամբ նախատեսվում էր հարկատուների հաշվետվությունների առնվազն 90 տոկոսը մշակել առցանց: Ստեղծվել են հարկատուների սպասարկման և տեղեկատվական կենտրոններ: Դեռևս վաղ է գնահատել բարեփոխումների ազդեցությունը հարկային վարչարարության թափանցիկության և օբյեկտիվության վրա: |
| 2.3. Կոռուպցիայի դեմ պայքար<br>• ԲԿԳ արժեքային համակարգին համապատասխանությունը. ***պարզ չէ***<br>• Հնարավոր ազդեցությունը. ***փոքր***<br>• Կատարման աստիճանը. ***սահմանափակ չափով կատարված*** | 2009թ. ի վեր ՀՀ կառավարությունը կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ շարունակական ջանքեր է գործադրում: Սակայն հանրությանը քիչ տեղեկատվություն է հասու կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ կառավարության կողմից իրականացվող կոնկրետ միջոցառումների վերաբերյալ: Պարտավորությունը ենթադրում էր կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին աջակցող Քարտուղարության ստեղծում և քաղաքացիական հասարակության հետ քննարկումներ ունենալու ու դրանց հիման վրա իրականացվող հակակոռուպցիոն քաղաքականության մեջ փոփոխությունների կատարում: Սակայն 2013թ. հունիսի դրությամբ քարտուղարությունը չի ստեղծվել և չկա վկայություն, որ կառավարությունը կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ քննարկումներ է ունեցել քաղաքացիական հասարակության հետ ու դրանց հիման վրա փոփոխություններ կատարել իր գործողություններում: |

## Առաջարկություններ

Հայաստանում կառավարության գործունեության թափանցիկության, հաշվետվողականության և քաղաքացիների կարիքներին արձագանքման գործում ԲԿԳ-ն կարևոր գործիք դարձնելու համար ՔՀԿ-ները և կառավարությունը պետք է միասին աշխատեն ԲԿԳ դերը բարձրացնելու և նրա հիմնական արժեքները քաղաքացիների ու պաշտոնյաների շրջանում արմատավորելու համար: Սույն հաշվետվության բացահայտումների և հայտնաբերված մարտահրավերների հիման վրա այս բաժնում ներկայացվում են հիմնական առաջարկությունները:

1. Գործողությունների ծրագրի նախագծման գործընթացը պետք է բավարարի հետևյալ նվազագույն պահանջները. (ա) ապահովի հասարակության ավելի լայն շերտերի ընդգրկում; (բ) նախօրոք տեղեկատվություն տարածի առաջիկա բոլոր հանրային քննարկումների վերաբերյալ; (գ) հրապարակի ստացված առաջարկությունների ամփոփումը; (դ) հստակ ձևակերպի պարտավորությունների կատարման ժամանակացույցերը և ներգրավված մարմինների ու պաշտոնյաների պարտականությունները:
2. Որպեսզի երաշխավորվի, որ հայ ժողովրդի համար կարևոր հարցերը ներառված են գործողությունների ծրագրում, ՔՀԿ-ները պետք ներգրավվեն ԲԿԳ գործընթացում, մասնակցեն քննարկումներին և օգտագործեն գործողությունների հաջորդ ծրագրի նախագծման ժամանակ կառավարության կողմից տրվող հնարավորությունները:
3. Գործողությունների ծրագիրը պետք է ներառի պարտավորություններ հետևյալ ոլորտների վերաբերյալ, որոնք ուղղակի առնչվում են ԲԿԳ արժեքներին. (ա) կոռուպցիայի դեմ պայքար, (բ) պետական ֆինանսական կառավարում (ներառյալ պետական գնումներ և ծրագրային բյուջետավորում), (գ) կրթություն, (դ) առողջապահություն, (ե) բնապահպանություն, (զ) հարկային վարչարարություն, (է) բարձրաստիճան պետական պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրերի թափանցիկություն:

### 2012թ. ընտրության չափանիշները:

ԲԿԳ-ին անդամակցելու համար կառավարությունները պետք է հավատարմություն ցուցաբերեն բաց կառավարության սկզբունքների նկատմամբ՝ բավարարելով բաց կառավարության չափորոշիչների նվազագույն պահանջները: Յուրաքանչյուր ոլորտում երկրի զարգացումը գնահատելու համար օգտագործվել են երրորդ տարբեր կողմերի ցուցանիշները: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք http://www.opengovpartnership.org/how-it-works/how-join/eligibility-criteria. Առկա տվյալները ԲԿԳ աշխատակազմի կողմից դասակարգվել է մեկից չորս սանդղակով, որոնք ստորև ներկայացված են փակագծերում:

**Բյուջեի թափանցիկություն.**
(4-ից՝ 0)

**Տեղեկատվության ազատություն.**
Օրենքը գործում է
(4-ից՝ 2)

**Հայտարարագրերի հրապարակում.**
Միայն ընտրված պաշտոնյաները՝ խորհրդարանին
(4-ից՝ 3)

**Հանրային մասնակցություն.**
10-ից՝ 5.88
(4-ից՝ 3)

Արտակ Քյուրումյանը պետական քաղաքականության և կառավարման բնագավառում փորձ ունեցող անկախ հետազոտող է, ով աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարությունում: 1995թ. նա ճարտարագիտության բնագավառում մագիստրոսի կոչում է ստացել Հայաստանի ամերիկյան համալսարանից, իսկ 2003թ. գործարար կառավարման բնագավառում մագիստրոսի կոչում է ստացել Ռյուկյենի համալսարանից:

Open Government Partnership
INDEPENDENT REPORTING MECHANISM

Բաց կառավարության գործընկերությունը նպատակ է հետապնդում անդամակցող կառավարությունների կողմից թափանցիկության, հանրային մասնակցության, կոռուպցիայի դեմ պայքարի և կառավարումը բարելավելու նպատակով նոր տեխնոլոգիաներն օգտագործելուն նպատակաուղղված կոնկրետ պարտավորությունների ստանձնում: Շահառուների միջև երկխոսությունը խթանելու և հաշվետվողականությունը բարելավելու նպատակով ԲԿԳ անկախ հետազոտական մեխանիզմը գնահատում է ազգային գործողությունների ծրագրերի մշակման և իրականացման գործընթացը:

TOC

# I | Նախաբան

Բաց կառավարության գործընկերությունը (այսուհետ՝ ԲԿԳ) բազմաթիվ շահառուների կողմից կամավորության սկզբունքով ձևավորված միջազգային նախաձեռնություն է, որի նպատակն է երաշխավորել, որ կառավարություններն իրենց գործունեության թափանցիկությունը խթանելու, իրենց քաղաքացիներին կառավարման գործընթացներում ավելի լայնորեն ներգրավելու, կոռուպցիայի դեմ պաքարը և տեղեկատվական տեխնոլոգիաների օգնությամբ կառավարման համակարգը բարելավելու նպատակով կոնկրետ պարտավորություններ ստանձնեն: Այս նպատակներին հետամուտ լինելու համար ԲԿԳ-ն երկխոսության և մտքերի փոխանակության միջազգային հարթակ է տրամադրում կառավարություններին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (այսուհետ՝ ՔՀԿ) և մասնավոր հատվածին, որոնք բոլորը հետամուտ են բաց կառավարության ընդհանուր նպատակի մեջ ներդրում ունենալու գործում: ԲԿԳ շահառուների թվում են մասնակից կառավարությունները, ինչպես նաև քաղաքացիական հասարակությունը և մասնավոր հատվածի այն ներկայացուցիչները, որոնք սատարում են ԲԿԳ սկզբունքներն ու առաքելությունը:

## Ներածություն

Հայաստանը ԲԿԳ-ին անդամակցելու գործընթացն սկսել է 2012 թվականի հունվարին: ԲԿԳ շրջանակներում Հայաստանի գործողությունների ծրագրի նախագիծը նախապատրաստելու համար ՀՀ վարչապետի որոշմամբ[1] ստեղծվել է աշխատանքային խումբ:

ԲԿԳ-ին անդամակցելու համար կառավարությունները պետք է բաց կառավարության սկզբունքին հավատարմություն ցուցաբերեն՝ բավարարելով բաց կառավարության համար առանցքային ոլորտներում նվազագույն այնպիսի ցուցանիշներ, որոնք հատկապես կարևոր են կառավարության արագ արձագանքման կարողությունը, քաղաքացիների ներգրավվածությունը և կոռուպցիայի դեմ պայքարը բարելավելու տեսակետից: Օգտագործվում են ցուցանիշներ, որոնք մշակվում են, ոչ թե ԲԿԳ-ի, այլև այլ կազմակերպությունների կողմից, որպեսզի որոշեն երկրի առաջընթացի աստիճանը յուրաքանչյուր ուղղությամբ: Տրված այդ գնահատականները ներկայացված են ստորև: Հայաստանը գործընկերությանը միացավ՝ բավարարելով անդամակցության նվազագույն որոշ պահանջներ և ունենալով բարձր միավորներ որոշ ցուցանիշների գծով: Գործընկերությանը միանալու պահին երկիրն ուներ բաց բյուջեի հնարավոր ամենացածր ցուցանիշը (0՝ հնարավոր 2-ից)[2], «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ գործող օրենքով բավարարում էր տեղեկատվության հասանելիության սկզբունքի պահանջը[3], բարձր էր դասակարգվում բարձրաստիճան պաշտոնյաների գույքի հայտարարագրման ցուցանիշով[4] և 10 հնարավորից 5.88 միավոր ուներ Economist ամսագրի վերլուծական բաժնի ժողովրդավարության ինդեքսի քաղաքացիական ազատությունների ենթանիշով[5]:

ԲԿԳ-ին անդամակցող բոլոր երկրները պետք է մշակեն ԲԿԳ գործողությունների ծրագրեր, որոնք պետք է կոնկրետ պարտավորություններ պարունակեն առաջիկա երկու տարիների համար: Կառավարությունները պետք է իրենց գործողությունների ծրագրերի սկզբում կիսվեն հինգ «հիմնական մարտահրավերների» հաղթահարման ուղղությամբ իրենց ջանքերի վերաբերյալ տեղեկատվությամբ՝ ներառյալ բաց կառավարության ռազմավարության և շարունակական ծրագրերի մասին (հիմնական մարտահրավերները ներկայացված են

TOC

բաժին 4-ում): Այնուհետև գործողությունների ծրագրերում պետք է ներկայացվեն ԲԿԳ շրջանակներում կառավարությունների ստանձնած պարտավորությունները, որոնք հիմնական մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ կառավարությունների վարվելակերպում զգալի բարեփոխումներ պետք է նախատեսեն: Այս պարտավորությունները կարող են հիմնված լինել ինչպես առկա գործընթացների վրա՝ մատնանշելով ընթացքի մեջ գտնվող բարեփոխումների իրականացմանը նպատակաուղղված նոր քայլեր, այնպես էլ գործողություններ նախատեսել բոլորովին նոր ոլորտներում:

ԲԿԳ-ին անդամակցած երկրորդ խմբի երկրների հետ միասին Հայաստանն իր գործողությունների ազգային ծրագիրը մշակել է 2012 թվականի հունվարից մինչև ապրիլն ընկած ժամանակահատվածում: Ապրիլին ներկայացված գործողությունների ծրագրի սկիզբ է համարվում 2012 թվականի հուլիսի 1-ը, որը պետք է կատարվի մինչև 2013 թվականի վերջը: ԲԿԳ գործողությունների ծրագրի իրականացման ինքնագնահատման իր զեկույցը Հայաստանը հրապարակել է 2013 թվականի հոկտեմբերին: ԲԿԳ ժամանակացույցով[6] պաշտոնյաները և քաղաքացիական հասարակության անդամները 2014 թվականի հունվարին՝ խորհրդակցություններ սկսելով, պետք է կամ վերանայեն գործողությունների առաջին ծրագիրը կամ մինչև 2014 թվականի ապրիլը նոր ծրագիր մշակեն:

ԲԿԳ պահանջներին համապատասխան երկրի գործողությունների առաջին ծրագրի մշակման և կենսագործման գնահատման նպատակով ԲԿԳ անկախ հետազոտական մեխանիզմի ստորաբաժանումը (այսուհետ՝ ԱՀՄ) համագործակցել է տեղական փորձառու և անկախ հետազոտողի հետ: Հայաստանում ԱՀՄ-ն համագործակցել է կառավարման բնագավառում փորձառություն ունեցող անկախ փորձագետ Արտակ Քյուրումյանի հետ, ով հեղինակել է այս հաշվետվությունը: ԱՀՄ նպատակն է տեղեկատվություն տրամադրել ԲԿԳ անդամ երկրներից յուրաքանչյուրում հետագա պարտավորությունների մշակման և կենսագործման շուրջ ընթացող երկխոսության վերաբերյալ:

## Ինստիտուցիոնալ ենթատեքստը

ՀՀ վարչապետի որոշմամբ[1] 2012 թվականի հունվարին ստեղծվել է գործողությունների ծրագրի նախագիծը մշակող աշխատանքային խումբ: Արտաքին գործերի նախարարությանը (այսուհետ՝ ԱԳՆ) հանձնարարվել էր պատրաստել գործողությունների ծրագրի նախագիծը և այն ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել մինչև 2012 թվականի մարտի 19-ը: ԲԿԳ աշխատանքային խմբի կազմում ընդգրկվել էր 9 պետական պաշտոնյա: Ներկայացուցիչներ կային ՀՀ կառավարության աշխատակազմից, արտաքին գործերի, տարածքային կառավարման, արդարադատության, ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություններից: Քանի որ ԲԿԳ-ին անդամակցելու հրավերն ստացվել էր ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնից, գործողությունների ծրագրի նախագծման հետ կապված աշխատանքները համակարգելու պարտականությունը դրվել էր ԱԳՆ ամերիկայի վարչության վրա: Գործողությունների ծրագիրը 2012 թվականի ապրիլի 5-ին արձանագրային որոշմամբ հաստատվել է պետաիրավական նախարարական մշտապես գործող կոմիտեի կողմից: Հայաստանում կառավարության կարևոր փաստաթղթերը սովորաբար հաստատվում են կառավարության որոշումներով: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը[7] չի սահմանում «արձանագրային որոշում» հասկացությունը: Այն սահմանվել է ՀՀ Նախագահի 2007 թվականի հրամանագրով[8]: Արձանագրային որոշումներն ընդունվում են հաշվետվություններ, առաջարկություններ և նման այլ փաստաթղթեր հաստատելու համար: Նախարարական կոմիտեներն ստեղծվել են ՀՀ վարչապետի որոշմամբ[9], առանձին բնագավառներում քաղաքականության մշակման և իրավական ակտերի նախագծերի մասին եզրակացություններ տալու նպատակով: ԱՀՄ փորձագետի պրակտիկայում սա առաջին դեպքն է, երբ ՀՀ կառավարության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունը հաստատվել է նախարարական կոմիտեի արձանագրային որոշմամբ: Սակայն պետք է հաշվի առնել, որ ԲԿԳ պարտավորությունների մեծ մասը հիմնվում է իրավական անհրաժեշտ հիմքեր ունեցող արդեն



TOC

իսկ առկա պարտավորությունների վրա: ԱԳՆ ամերիկայի վարչության պետը բացատրել է, որ ՀՀ կառավարությունը ԲԿԳ շրջանակներում Հայաստանի գործողությունների ծրագիրը հաստատել է արձանագրային որոշմամբ, քանի որ ժամանակի սղության պատճառով հնարավոր չի եղել փաստաթուղթն անցկացնել կառավարության որոշում դարձնելու համար անհրաժեշտ բոլոր ընթացակարգերով: ՀՀ գործողությունների ծրագիրը պաշտոնապես ներկայացվել է 2012 թվականի ապրիլի 10-ին ԱԳՆ-ում: Փաստաթղթի ներկայացմանը հրավիրվել են աշխատանքային խմբի անդամները և Ամերիկայի Միացյալ Նահանգների ու Բրազիլիայի դեսպանատների ներկայացուցիչները[10]: ԲԿԳ շրջանակներում ՀՀ գործողությունների ծրագիրը միջազգային հանրությանը պաշտոնապես ներկայացվել է 2012 թվականի ապրիլի 17-18-ին Բրազիլիայում կայացած Բաց կառավարության գործընկերության բարձր մակարդակի տարեկան ժողովում արտաքին գործերի նախարարի տեղակալի կողմից:

## Մեթոդաբանական նշում

ԲԿԳ-ին անդամակցող յուրաքանչյուր երկրի վերաբերյալ հաշվետվություն պատրաստելու և հրապարակելու նպատակով ԱՀՄ-ն համագործակցում է փորձառու, անկախ ազգային հետազոտողների հետ: Հայաստանում ԱՀՄ-ն համագործակցել է կառավարման բնագավառում փորձառություն ունեցող, անկախ հետազոտող Արտակ Քյուրումյանի հետ: ԱՀՄ հետազոտողն ուսումնասիրել է կառավարության կողմից տրամադրված առանցքային երկու փաստաթուղթ՝ գործողությունների ազգային առաջին ծրագիրը[11] և գործողությունների առաջին ծրագրի կատարման վերաբերյալ կառավարության ինքնագնահատման զեկույցը[12]: ԱՀՄ հետազոտողը գործողությունների ծրագիրը և առանձին պարտավորությունները նաև քննարկել է 2013 թվականին կայացած դեմ առ դեմ մի շարք հանդիպումների և հավաքների ժամանակ (այսուհետ՝ ԱՀՄ հետազոտության հանդիպումներ): Նման հանդիպումներ են կայացել հոկտեմբերի 2-ին Գյումրիում, որտեղ ներկա են եղել 4 ՔՀԿ-ի ներկայացուցիչներ, հոկտեմբերի 3-ին՝ Վանաձորում՝ 6 ՔՀԿ-ի ներկայացուցիչներ, հոկտեմբերի 4-ին՝ Երևանում, որտեղ ներկա են եղել Հանրային ցանցի անդամներ, և հոկտեմբերի 23-ին՝ կրկին Երևանում, որտեղ ներկա է եղել 5 ՔՀԿ-ի ութ ներկայացուցիչ: ՔՀԿ-ների մեծ մասը կոռուպցիայի դեմ պայքարը, տեղեկատվության ազատության խթանումը, բյուջեի թափանցիկությունը, պետական գնումների և հարկային վարչարարության բնագավառում թափանցիկությունն ու օբյեկտիվությունը բարելավելուն միտված պարտավորությունները դասել են կարևորագույնների շարքում: Էլեկտրոնային կառավարմանը վերաբերող պարտավորությունները ՔՀԿ-ները համարել են պակաս կարևոր և ԲԿԳ-ին ավելի քիչ առնչվող: ՔՀԿ-ները հետաքրքրություն են ցուցաբերել կրթության, առողջապահության, շրջակա միջավայրի պահպանության և հարկային վարչարարության բնագավառներում հանրային մասնակցությունը բարելավելուն և կառավարության տրամադրության տակ եղած տեղեկատվությունը հասանելի դարձնելուն նպատակաուղղված պարտավորություններ ներառելու վերաբերյալ:

---

[1] ՀՀ վարչապետի 2012 թվականի հունվարի 27-ի «Աշխատանքային խումբ ստեղծելու մասին» N 50-Ա որոշում

[2] Open Budget Partnership, *Open Budgets Change Lives* (Washington, DC: Open Budget Partnership, 2012). http://bit.ly/V5dcPl

[3] http://bit.ly/1jmsefl

[4] Simeon Djankov, Rafael La Porta, Florencio Lopez-de-Silanes, and Andrei Shleifer, "Disclosure by Politicians," (Tuck School of Business Working Paper 2009-60, 2009): http://bit.ly/19nDEfK; Organization for Economic Cooperation and Development (OECD), "Types of Information Decision Makers Are Required to Formally Disclose, and Level Of Transparency," in *Government at a Glance 2009*, (OECD, 2009). http://bit.ly/13vGtqS; Ricard Messick, "Income and Asset Disclosure by World Bank Client Countries" (Washington, DC: World Bank, 2009). http://bit.ly/1clokyf

[5] Economist Intelligence Unit, "Democracy Index 2010: Democracy in Retreat" (London: Economist, 2010). Available at: http://bit.ly/eLC1rE

[6] http://www.opengovpartnership.org/sites/default/files/attachments/OGP%20Calendar%20For%20All%20Countries.docx

[7] «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-320), ընդունվել է 2002 թվականի ապրիլի 3-ին

[8] ՀՀ նախագահի 2007 թվականի ՆՀ 174-Ն հրամանագիր

[9] ՀՀ վարչապետի 2008 թվականի հունիսի 3-ի «Նախարարական կոմիտեներ ստեղծելու մասին» N 306-Ն որոշում

[10] http://www.mfa.am/hy/press-releases/item/2012/04/10/open_gov/

[11] http://bit.ly/I56KYJ

[12] http://bit.ly/I56JUH

TOC

TOC

# II | Գործողությունների ծրագրի մշակման գործընթաց

Գործողությունների ծրագրի վերաբերյալ Հայաստանում իրականացված խորհրդակցությունների գործընթացը չի համապատասխանել ԲԿԳ կառավարման հիմնադրույթների պահանջներին: Թեև խորհրդակցությունները մասնակցային են եղել, սակայն դրանք սահմանափակվել են քաղաքացիական հասարակության մի քանի կազմակերպություններով: ԲԿԳ գործողությունների ծրագրի մշակման ժամանակ անդամ երկրները պետք է հետևեն խորհրդակցությունների անցկացման որոշակի ընթացակարգի: ԲԿԳ կառավարման հիմնադրույթների համաձայն երկրները պետք է.

- Մինչև խորհրդակցություններն սկսելը այդ գործընթացի մանրամասների և ժամանակացույցի վերաբերյալ տեղեկատվություն հրապարակեն (առնվազն՝ համացանցում):
- Ընդլայնված խորհրդակցություններ անցկացնեն հանրության՝ ներառյալ քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածների հետ, ձգտեն տեսակետների լայն շրջանակ բացահայտելուն, հանրային խորհրդակցությունների ամփոփագիրը և ներկայացված բոլոր գրավոր կարծիքները հրապարակեն համացանցում:
- Խորհրդակցություններին հանրային մասնակցությունն ընդլայնելու նպատակով ԲԿԳ վերաբերյալ իրազեկման միջոցառումներ կազմակերպեն:
- Քաղաքացիների ներգրավվածությունն ապահովելու նպատակով բնակչության հետ խորհրդակցություններ, դեմ առ դեմ կամ առցանց հանդիպումներ ունենան՝ դրանց մասին բավականաչափ վաղ տեղեկացնելով:

Հինգերորդ պահանջը, որը վերաբերում է գործողությունների ծրագրի կատարման ընթացքում խորհրդակցություններին, սահմանված է ԲԿԳ կառավարման հիմնադրույթներում: Այս պահանջին անդրադարձ է կատարվել «III. խորհրդակցություններ իրականացման ժամանակ» բաժնում:

Երկրները պետք է ունենան ԲԿԳ ներդրման պարբերական խորհրդակցությունների հարթակ շահառուների լայն շրջանակների հետ քննարկումների համար: Այն կարող է լինել ինչպես գոյություն ունեցող, այնպես էլ՝ նոր: Այս հարցին անդրադարձ է կատարվում հաջորդ բաժնում, սակայն, նպատակահարմարության տեսակետից, մինչև ծրագրի ներդրումը և ներդրման ընթացքում տեղի ունեցած խորհրդակցությունների վերաբերյալ ամփոփ տվյալները ներառված են այստեղ՝ աղյուսակ 1-ում:

TOC

**Աղյուսակ 1 | Գործողությունների ծրագրի վերաբերյալ խորհրդակցությունների գործընթացը**

| Գործողությունների ծրագրի փուլը | ԲԿԳ գործընթացի պահանջը (կառավարման հիմնադրույթներ) | Արդյո՞ք կառավարությունը բավարարել է պահանջը |
|---|---|---|
| Մշակման ընթացում | Ժամանակացույց և գործընթաց. նախապես առկա են եղել | Ոչ |
| | Նախապես տեղեկատվության տրամադրում | Ոչ |
| | Նախապես տեղեկատվության տրամարդում. օրեր | Առկա չէ |
| | Հանրային իրազեկման միջոցառումներ | Ոչ |
| | Խորհրդակցություններ համացանցի միջոցով | Ոչ |
| | Անհատական խորհրդակցություններ | Այո |
| | Կարծիքների ամփոփ տեղեկագիր | Ոչ |
| Իրականացման ընթացքում | Պարբերական քննարկումների հարթակ | Այո |

## Խորհրդակցությունների վերաբերյալ նախնական ծանուցում

ՀՀ կառավարությունը խորհրդակցությունների վերաբերյալ որևէ նախնական ծանուցում չի տրամադրել: ՀՀ վարչապետի որոշմամբ աշխատանքային խմբին հանձնարարվել է ներգրավել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին: ԱԳՆ ամերիկայի վարչության պետը պատրաստել է տեղեկատվության ազատության, թափանցիկության, հաշվետվողականության և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում աշխատող ՔՀԿ-ների ցանկ: 2012 թվականի հունվարին մի քանի ՔՀԿ-ներ էլեկտրոնային  փոստով ԲԿԳ աշխատանքային խմբի նիստին մասնակցելու հրավեր են ստացել: ԱՀՄ հետազոտողն ի վիճակի չի եղել պարզելու հրավեր ստացած ՔՀԿ-ների թիվը, քանի որ հաշվառում չի տարվել: Սակայն, երբ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն (այսուհետ՝ ԻԱԿ) ԲԿԳ աշխատանքային խմբի մասին իմացել է Տեղեկատվության ազատության պաշտպանների միջազգային ցանցից և իր ներկայացուցչին աշխատանքային խմբում ընդգրկելու խնդրանքով դիմել է ՀՀ կառավարությանը: ԱԳՆ-ն բավարարել է ԲԿԳ աշխատանքային խմբի նիստերին մասնակցելու ԻԱԿ-ի խնդրանքը: Չնայած կառավարության կողմից գործողությունների ծրագրի մշակումը նախաձեռնելու գործընթացի սկզբից ի վեր ՔՀԿ-ները ներգրավված են եղել խորհրդակցություններում, սակայն ինչպես դրանց, այնպես էլ ՔՀԿ-ների կողմից կառավարությանը առաջարկություններ ներկայացնելու վերաբերյալ որևէ հայտարարություն չի եղել[1]:

TOC

## Խորհրդակցությունների որակը և բովանդակային խորությունը

Կառավարությունը կազմակերպել է խորհրդակցություններ խմբերի և անհատների հետ, սակայն չի կազմակերպել համացանցային քննարկումներ և չի հրապարակել անհատական քննարկումների ամփոփագրեր: Ավելին՝ չի իրականացվել հանրային իրազեկման որևէ միջոցառում: 2012թ. փետրվարի 7-ին կայացած ԲԿԳ աշխատանքային խմբի առաջին հանդիպմանը մասնակցել է ՔՀԿ-ների 8 ներկայացուցիչ: Գործողությունների ծրագրի նախագծման աշխատանքներին մասնակցած ՔՀԿ-ների ներկայացուցիչները դրանք բնութագրել են որպես մասնակցային: Ըստ ՔՀԿ-ների՝ ներկայացուցիչների խորհրդակցական գործընթացն «իմաստալից էր»: Նրանց գնահատականը հիմնվում է աշխատանքային խմբի ղեկավարի ՔՀԿ-ների հետ խորհրդակցելու և նրանցից ստացված առաջարկությունները գործողությունների ծրագրի նախագծում ներառելու պատրաստակամության վրա: Նվազ թվով ՔՀԿ-ների ներկայացուցիչներ են մասնակցել աշխատանքային խմբի հետագա նիստերին:

ԱԳՆ-ն պատրաստել է գործողությունների ծրագրի նախագիծը և այն տարածել էլեկտրոնային փոստի միջոցով: Պետական պաշտոնյաները ներկայացրել են պարտավորությունների վերաբերյալ առաջարկություններ, որոնք արդեն իսկ ՀՀ կառավարության օրակարգում էին և որոնց իրականացման ուղղությամբ ՀՀ կառավարությունն արդեն իսկ աշխատում էր ընթացքում գտնվող տարբեր ծրագրերի շրջանակներում (դրանց մի մասին աջակցում են միջազգային կազմակերպությունները): ԲԿԳ աշխատանքային խմբի աշխատանքներին մասնակցող պետական պաշտոնյաները նշել են, որ ՀՀ կառավարությունը չէր կարող ԲԿԳ շրջանակներում լրացուցիչ ֆինանսավորում պահանջող նոր պարտավորություններ ստանձնել, քանի որ դրա հնարավորությունը տվյալ պահին չուներ: Կայացել են աշխատանքային խմբի չորս կամ հինգ նիստեր (ոչ ոք չի հիշել ճիշտ թիվը): ԲԿԳ աշխատանքային խմբի առաջին նիստից հետո ՔՀԿ-ներն էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացրել են իրենց առաջարկությունները, որոնք քննարկվել են աշխատանքային խմբի հաջորդ նիստի ժամանակ: Համաձայն ԱԳՆ ամերիկայի վարչության, նախագիծը հրապարակվել է ԱԳՆ պաշտոնական կայքի «Արտաքին քաղաքականություն» - «Երկկողմանի հարաբերություններ» - «ԱՄՆ» բաժնում, սակայն պաշտոնյան չի հիշել, թե ինչքան ժամանակ է նախագիծը տեղադրված եղել կարծիքների համար: Հասկանալի չէ, թե ԲԿԳ գործողությունների ծրագիրն ինչ առնչություն ունի ԱՄՆ-Հայաստան երկկողմանի հարաբերությունների հետ: Այնուամենայնիվ, ՔՀԿ-ներից ոչ մեկը չի հաստատել, որ գործողությունների ծրագիրը հրապարակվել է հանրության կողմից կարծիքներ ստանալու նպատակով: ԲԿԳ աշխատանքային խումբը հանրությունից որևէ առաջարկություն չի ստացել: ԱՀՄ հետազոտողի կարծիքով ՔՀԿ ներգրավվածությունը խիստ սահմանափակ էր, քանի որ բազմաթիվ ՔՀԿ-ներ տեղյակ չեն եղել ԲԿԳ-ի և վերջինիս իրենց կառավարության անդամակցության մասին:

Գյումրիի լրագրողների «Ասպարեզ» ակումբը ԲԿԳ վերաբերյալ տեղեկատվությունը ստացել է Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան կազմակերպությունից (այսուհետ՝ ԲՀՀ): ԲՀՀ-ն «Ասպարեզ» ակումբի նախագահին առաջարկել է մասնակցել ԲԿԳ Բրազիլիայում կայանալիք ժողովին և հոգացել անհրաժեշտ ծախսերը: Բրազիլիայում կայացած ԲԿԳ վեհաժողովին (2012 թվականի ապրիլի 17-18) մասնակցելուց հետո հրապարակած հոդվածում «Ասպարեզ» ակումբի նախագահը նշել է ԲԿԳ հետ կապված մի շարք անհասկանալի հանգամանքների մասին: Օրինակ, նա գրել է, թե բազմաթիվ կառավարությունների գործողությունների ծրագրերում հստակ նշված չեն պատասխանատու պետական մարմինները, պարզ չէ, թե հնարավոր կլինի՞ փոփոխություններ կատարել գործողությունների ծրագրերում, թե, արդյո՞ք, կառավարությունները հրապարակելու են հաշվետվություններ գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ և պարզ չէ, թե ինչպիսի՞ հաճախականությամբ են հրապարակվելու այդ հաշվետվությունները[2]:

TOC

ԱՀՄ հետազոտողի կարծիքով գործընկերության անվանումը հայերեն ճիշտ չի թարգմանվել: Հայերեն թարգմանության մեջ նշվում է Բաց կառավարման գործընկերություն (այլ ոչ թե՝ կառավարության): ԲԿԳ անվանման ներկա հայերեն թարգմանությունը կարող է աղավաղել գաղափարը, տպավորություն թողնելով, թե ԲԿԳ-ն անդրադառնում է ոչ թե կառավարության բաց լինելու անհրաժեշտությանը, այլ կառավարման բաց լինելուն ընդհանրապես: Ավելին, ՀՀ կառավարության կողմից ԲԿԳ շրջանակներում ստանձնած պարտավորությունները մեծամասամբ եղել են նախապես ամրագրված պարտավորություններ, ինչը կասկածի տակ է դնում միջազգային հանրության, ՀՀ կառավարության և Հայաստանի հասարակության համար այս գործընկերությունից սպասվող հավելյալ արդյունքը:

[1] ՔՀԿ-ներին առաջարկություններ ներկայացնելու վերաբերյալ հրավեր չուղարկելու իր որոշումը կառավարությունը բացատրել է այն հանգամանքով, որ այդ դեպքում բազմաթիվ ՔՀԿ-ները կարող էին ԲԿԳ-ին չվերաբերող առաջարկություններ ներկայացնել:

[2] http://www.asparez.am/news-hy/ogp-brazil/



TOC

# III | Խորհրդակցություններ իրականացման ժամանակ

Գործողությունների ծրագրի իրականացման փուլում խորհրդակցությունները հիմնականում կատարվել են գերատեսչությունների մակարդակով կամ ՀՀ վարչապետի կողմից ծրագրից բխող աշխատանքները համակարգելու նպատակով ստեղծված ԲԿԳ աշխատանքային խմբի շրջանակներում[1]: ԲԿԳ-ին մասնակից կառավարությունները պարտավորվում են ունենալ մի հարթակ, որը կարող է լինել ինչպես արդեն գոյություն ունեցող, այնպես էլ՝ նոր ձևավորվող՝ բոլոր շահառուներին ԲԿԳ իրականացման վերաբերյալ բազմակողմանի քննարկումներին մասնակցելու հնարավորություն տալու նպատակով: Այս բաժինն ամփոփում է այդ տեղեկատվությունը:

## Խորհրդակցությունների գործընթացը

Գործողությունների ծրագրի ներդրման համար պատասխանատու ԲԿԳ աշխատանքային խումբն ստեղծվել է ՀՀ վարչապետի որոշումով և խորհրդատվական մարմնի դեր է կատարում: Անհրաժեշտության դեպքում ԲԿԳ աշխատանքային խումբն առաջարկություններ է ներկայացնում վարչապետին, ով ԲԿԳ պարտավորությունների վերաբերյալ հանձնարարություններ է տալիս պետական տարբեր մարմինների:

Սույն հաշվետվությամբ ուսումնասիրվող ժամանակահատվածում ԲԿԳ աշխատանքային խումբն ունեցել է երկու հանդիպում՝ 2012թ. հոկտեմբերի 2-ին և 2013թ. ապրիլի 22-ին: Այս հանդիպումների ժամանակ աշխատանքային խումբը քննարկել է ԲԿԳ պարտավորությունների հետ կապված կառավարության ձեռնարկած տարբեր միջոցառումները: Երկու հանդիպումներն էլ կայացել են ՀՀ կառավարության շենքում:

ԲԿԳ աշխատանքային խումբը նոր հարթակ է, որը խթանում ՔՀԿ-ների և կառավարության միջև շփումները: Սակայն այս աշխատանքային խմբի շրջանակներում ՔՀԿ-ների հետ համագործակցությունը սահմանափակվում է երեք ՔՀԿ-ով. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ, Թրանսփարենսի ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն (այսուհետ՝ ԹԻՀԿԿ) և Գյումրիի լրագրողների «Ասպարեզ» ակումբը: Առաջին երկուսը ներգրավված են եղել նաև ԲԿԳ հայաստանյան գործողությունների ծրագիրը նախագծող աշխատանքային խմբում: Երրորդ ՔՀԿ-ն աշխատանքային խմբին միանալու իրավեր է ստացել այն բանից հետո, երբ նրա ներկայացուցիչը մասնակցել է Բրազիլիայում կայացած ԲԿԳ տարեկան ժողովին:

ԲԿԳ աշխատանքային խմբում ընդգրկված ՔՀԿ-ները հարգանք են վայելում և ճանաչված են շնորհիվ իրենց կողմից իրականացվող տարբեր միջոցառումների, որոնք հիմնականում վերաբերում են տեղեկատվության ազատությանը և կոռուպցիայի դեմ պայքարին: Սակայն ԱՀՄ հետազոտողի կարծիքով այս երեք ՔՀԿ-ները չեն ներկայացնում ՔՀԿ ողջ հանրությունը (և նրանք չպետք է ձգտեն դա անել): Նրանք ՔՀԿ հանրության կողմից լիազորված չեն դա անելու: Չնայած երեք ՔՀԿ-ները բավական հմուտ են տեղեկատվության ազատության և կոռուպցիայի դեմ պայքարին վերաբերող հարցերում, սակայն Հայաստանի հանրային կյանքում գոյություն ունեն մի շարք այլ ոլորտներ, ինչպես, օրինակ, բնության պահպանությունը, առողջապահությունը, կրթությունը, կանանց և հաշմանդամների իրավունքները, տարածքային զարգացումը,

TOC

որոնց առնչվող պարտավորությունները կարող են ներառվել ԲԿԳ շրջանակներում: Հարգանք վայելող բազմաթիվ ՔՀԿ-ներ աշխատում են այս խնդիրների վրա: Այդ իսկ պատճառով ՀՀ կառավարությունը պետք է ստեղծի ավելի ընդարձակ հարթակ, որը տարբեր ոլորտներում աշխատող ՔՀԿ-ներին հնարավորություն կտա հաղորդակցվել կառավարության հետ:

2013թ. ապրիլին կայացած ԲԿԳ աշխատանքային խմբի հանդիպման ժամանակ ՔՀԿ-ներից մեկը՝ ԻԱԿ-ն, առաջարկել է ԲԿԳ գործողությունների ծրագիրը քննարկելու նպատակով կազմակերպել միջազգային համաժողով: ՀՀ կառավարությունը ողջունել է նախաձեռնությունը և համագործացել ԻԱԿ-ի հետ: ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (այսուհետ՝ ԱՄՆ ՄԶԳ) օգնությամբ կազմակերպված միջազգային համաժողովը տեղի է ունեցել 2013թ. հունիսին:

ԱՄՆ ՄԶԳ օգնությամբ ԻԱԿ-ը ստեղծել է նաև ԲԿԳ-ին Հայաստանի անդամակցությանը նվիրված կայքէջ (www.ogp.am), որը տեղեկատվություն է տրամադրում Հայաստանի գործողությունների ծրագրի, աշխատանքային խմբի գործունեության մասին, ինչպես նաև նորություններ քաղաքացիական հասարակության և տեղեկատվության ազատության մասին: ՀՀ կառավարությունը www.ogp.am-ը ճանաչել է որպես ԲԿԳ հայաստանյան պաշտոնական կայքէջ[2]: Սակայն կայքէջում նշվում է, որ «բովանդակության համար պատասխանատու է միայն Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ն»: ԱՀՄ հետազոտողի կարծիքով ՀՀ կառավարությունը պետք է ամբողջությամբ պատասխանատվություն ստանձնի www.ogp.am կայքէջի համար (ներառյալ՝ բովանդակության, ինչպես նաև սպասարկման ու պահպանման ծախսերը) կամ պետք է ստեղծի նոր կայքէջ, որը կծառայի որպես լայն հանրության հետ հարաբերությունների հարթակ: ՀՀ կառավարությունը պետք է բոլոր ՔՀԿ-ների համար իրենց առաջարկություններն առցանց ներկայացնելու հնարավորություններ ստեղծի: Կառավարությունը պետք է պաշտոնական կայքէջում ԲԿԳ-ին վերաբերող բոլոր հարցերին պատասխանելու և ՔՀԿ-ների կողմից բարձրացված հարցերին մեկնաբանություններ տրամադրելու, ինչպես նաև գործողությունների ծրագրում նշված միջոցառումների համար համապատասխան ժամկետներ սահմանելու նոր պարտավորություններ ստանձնի:

[1] ՀՀ վարչապետի 2012 թվականի սեպտեմբերի 29-ի «Աշխատանքային խումբ ստեղծելու մասին» N 931-Ա որոշում
[2] http://www.gov.am/en/open-government/



TOC

# IV | Պարտավորությունների կատարում

ԲԿԳ անդամ բոլոր կառավարությունները մշակում են ԲԿԳ գործողությունների ծրագիր, որում առաջիկա երկու տարվա համար կոնկրետ պարտավորություններ են ստանձնում: Կառավարությունները ԲԿԳ գործողությունների ազգային ծրագրերն սկսում են՝ ներկայացնելով իրենց կողմից ընտրված հիմնական մարտահրավերների դիմակայման ուղղությամբ ներկայումս գործադրվող ջանքերը՝ ներառյալ բաց կառավարությանը վերաբերող կոնկրետ ռազմավարությունները և ընթացքի մեջ գտնվող ծրագրերը: Այնուհետև գործողությունների ծրագրերում նշվում են ԲԿԳ շրջանակներում տարբեր ոլորտներում ստանձնած պարտավորությունները, որոնք նախատեսում են կառավարության գործելակերպի բարեփոխումներ: Այս պարտավորությունները կարող են հիմնված լինել առկա ծրագրերի վրա՝ ներկայացնելով ընթացող բարեփոխումներն իրականացնելուն նպատակաուղղված նոր քայլերը կամ գործողություններ նախաձեռնել բոլորովին նոր ոլորտներում: Պարտավորությունները պետք է լինեն ԲԿԳ հինգ հիմնական մարտահրավերների շրջանակներում կառավարությունների կողմից ընտրված ոլորտներում: ԲԿԳ-ն ընդունում է, որ բոլոր երկրներում նախնական իրավիճակը տարբեր է: Կառավարություններին հնարավորություն է տրվում ընտրել հիմնական մարտահրավերները և դրանց հաղթահարման ուղղությամբ կոնկրետ պարտավորությունները, որոնք առավել առանձնահատուկ են տվյալ երկրին: Որևէ երկրի չի պարտադրվելու գործողությունների ծրագիր, ստանդարտ կամ կոնկրետ պարտավորություն: ԲԿԳ հինգ հիմնական մարտահրավերներն են.

1. **Հանրային ծառայությունների բարելավում.** հանրային ծառայությունների բարելավումը և մասնավոր հատվածի նորարարությունները խթանող միջոցառումներ, որոնք վերաբերում են քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ամբողջական շրջանակին, ներառյալ՝ առողջապահություն, կրթություն, արդարադատություն, ջրամատակարարում, էլեկտրամատակարարում, հեռահաղորդակցություն և ծառայությունների ցանկացած կարևոր այլ ոլորտ:
2. **Հանրային վստահության բարելավում.** միջոցառումներ, որոնք անդրադառնում են կոռուպցիային և հանրային էթիկային, տեղեկատվության ազատությանը, ընտրությունների ֆինանսավորման բարեփոխումներին և մամուլի ու քաղաքացիական հասարակության ազատությանը:
3. **Հանրային միջոցների ավելի արդյունավետ կառավարում.** միջոցառումներ, որոնք անդրադառնում են բյուջեներին, գնումներին, բնական պաշարներին և արտաքին օժանդակությանը:
4. **Անվտանգ համայնքների ստեղծում.** միջոցառումներ, որոնք անդրադառնում են հանրային անվտանգությանը, անվտանգության ոլորտին, աղետներին և ճգնաժամերին արձագանքման համակարգին և բնապահպանական վտանգներին:

TOC

5. **Կորպորատիվ հաշվետվողականության բարելավում.** միջոցառումներ, որոնք վերաբերում են բնապահպանության, կոռուպցիայի դեմ պայքարի, սպառողների շահերի պաշտպանության և համայնքային հարցերում կորպորատիվ պատասխանատվությանը:

Եթե հիմնական մարտահրավերի որևէ ոլորտում կոնկրետ պարտավորությունների բնույթը կարող է ճկուն լինել և թույլ տալ հաշվի առնել երկրի առանձնահատկությունները, ապա ԲԿԳ բոլոր պարտավորությունները պետք է արտացոլեն բաց կառավարության անկյունաքարային արժեքները.

- **Տեղեկատվության հասանելիություն**. Այս պարտավորությունները.
  - վերաբերում են կառավարության ունեցած տեղեկատվությանը,
  - չեն սահմանափակվում միայն թվային տվյալներով, այլ վերաբերում է ողջ տեղեկատվությանը,
  - կարող են անդրադառնալ տեղեկատվության տրամադրման պրոակտիվ (կամավոր) կամ ռեակտիվ (ըստ պահանջի) եղանակներին,
  - կարող են անդրադառնալ տեղեկատվություն ստանալու իրավունքի ընդլայնմանը,
  - պետք է տեղեկատվությունը բաց և հասանելի դարձնեն (այն չպետք հասանելի լինի միայն պետական պաշտոնյաների համար):
- **Հանրային մասնակցություն**. Կառավարությունները ձգտում են քաղաքացիներին ներգրավել հանրային քննարկումներում, ունենալ ներդրում և այնպիսի մասնակցություն, որը հանգեցնում է կառավարման ավելի արձագանքող, նորարարական և արդյունավետ համակարգի ձևավորման: Հանրային մասնակցության վերաբերյալ պարտավորությունները.
  - որոշումների կայացման գործընթացը բացում են հանրության բոլոր շահագրգիռ կողմերի համար: Այսպիսի հարթակները սովորաբար ստեղծվում են կառավարության կամ նրա կողմից լիազորված կառույցների կողմից՝ որոշումների կայացման վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու նպատակով,
  - հաճախ ներառում են տեղեկատվության հասանելիության տարրեր, հանրության շահագրգիռ ներկայացուցիչների կողմից որոշումներում իմաստալից ներդրումը երաշխավորելու նպատակով,
  - հաճախ ավելացնում են քաղաքացիների ձայնը լսելի դարձնելու հնարավորությունները, սակայն դա չի նշանակում, որ առաջարկությունները հաշվի կառնվեն:
- **Հաշվետվողականություն**. Կան կանոններ, օրենքներ և մեխանիզմներ, որոնք պետական պաշտոնյաներից պահանջում են հիմնավորել իրենց գործողությունները, արձագանքել քննադատությանը կամ ներկայացվող պահանջներին և պատասխանատվություն ստանձնել օրենքների պահանջներին կամ ստանձնած պարտավորություններին ոչ համապատասխան գործելու դեպքում:
  - Որպես բաց կառավարության մաս, այս պարտավորությունները «բաց» տարր են պարունակում, ինչը նշանակում է, որ դրանք հաշվետվողականության ներքին համակարգեր չեն՝ առանց հանրային դեմքի:
- **Տեխնոլոգիա և նորարարություն**. Տեխնոլոգիային և նորարարությանը վերաբերող պարտավորությունները.
  - խրախուսում են նոր տեխնոլոգիաները և տեղեկատվությամբ կիսվելու, հանրային մասնակցության և համագործակցության հնարավորություններ են ստեղծում,

TOC

- պետք է ավելի շատ տեղեկատվություն հասանելի դարձնեն հանրությանը, ինչը մարդկանց հնարավորություն է տալիս հասկանալ, թե իրենց կառավարությունն ինչ է անում և ազդել որոշումների կայացման վրա,
- պետք է օժանդակեն կառավարությունների և քաղաքացիների՝ տեխնոլոգիաները թափանցիկության և հաշվետվողականության նպատակով օգտագործելու կարողությանը,
- պետք է օժանդակեն պետական պաշտոնյաների և քաղաքացիների կողմից տեխնոլոգիաների օգտագործմանը:

Կառավարությունները կարող են իրենց պարտավորությունները կենտրոնացնել ազգային, տեղական և/կամ դաշնային մակարդակներում, որտեղ իրենց կարծիքով բաց կառավարության ջանքերն առավելագույն ազդեցություն կունենան: Ընդունելով այն հանգամանքը, որ բաց կառավարության պարտավորությունների կատարումը երբեմն տարիների գործընթաց է, կառավարությունները պետք է իրենց պարտավորությունների այնպիսի ժամանակացույցեր և ուղենիշեր սահմանեն, որոնք, հնարավորության դեպքում ցույց կտան, թե ինչ հաջողություններ պետք է արձանագրված լինեն յուրաքանչյուր տարվա վերջում:

Այս բաժինը մանրամասն անդրադառնում է բոլոր այն պարտավորություններին, որոնք Հայաստանը ներառել է գործողությունների իր առաջին ծրագրում: ԱՀՄ հետազոտողը ԲԿԳ գործողությունների ծրագրի պարտավորությունները դասակարգել է հինգ կլաստերների. (1) հանրային ծառայությունների մատուցման նպատակով էլեկտրոնային կառավարման օգտագործում, (2) գործարար միջավայրի բարելավում (ներառում է կարգավորիչ գիլյոտինի և հարկային ծառայության հետ կապված պարտավորությունները), (3) պետական ֆինանսական կառավարում (ներառում է ներքին աուդիտը, պետական գնումները և ծրագրային բյուջետավորումը), (4) կառավարության թափանցիկություն և հաշվետվողականություն (ներառում է գույքի և եկամուտների հայտարարագրումը, համացանցային կայքերի ստանդարտեցումը, քաղաքացիական ծառայողների վերապատրաստումը) և (5) կոռուպցիայի դեմ պայքար:

Չնայած այն հանգամանքին, որ յուրաքանչյուր պարտավորությունը բնութագրող ցուցանիշների մեծ մասն ինքնին խոսուն է, սակայն մի շարք ցուցանիշներ լրացուցիչ բացատրության կարիք ունեն.

- Համապատասխանությունը. ԱՀՄ հետազոտողը յուրաքանչյուր պարտավորություն գնահատել է ԲԿԳ արժեքներին և ԲԿԳ հիմնական մարտահրավերներին համապատասխանության տեսակետից.
    - ԲԿԳ արժեքները. պարզ չէ, թե որոշ պարտավորություններ ինչպես են առնչվում ԲԿԳ արժեքների հետ: Նման դեպքերն ի հայտ բերելու նպատակով ԱՀՄ հետազոտողը խորությամբ ուսումնասիրել է պարտավորության տեքստը: Դրա արդյունքում ի հայտ են եկել այն պարտավորությունները, որոնց կապը թափանցիկության հիմնարար հասկացությունների հետ կարող է ավելի հստակեցվել:
    - Հիմնական մարտահրավերները. Որոշ պարտավորություններ կարող են համապատասխանել մեկից ավելի հիմնական մարտահրավերի: Հետազոտողը նշել է միայն նրանք, որոնք ներկայացվել են կառավարության կողմից:

TOC

- Հավակնությունը
    - o Հնարավոր ազդեցությունը. ակնկալվում է, որ ԲԿԳ-ին միացած երկրները ստանձնում են հավակնոտ պարտավորություններ (կապված նոր կամ գոյություն ունեցող միջոցառումների հետ), որոնք կառավարության գործունեությունը ներկա իրավիճակի համեմատ զգալի բարեփոխման են ենթարկում: Հիմնվելով կատարած բացահայտումների և հանրային քաղաքականության մասնագետի իր փորձառության վրա՝ ԱՀՄ հետազոտողը եզրակացություն է կատարել, թե պարտավորությունը բարեփոխիչ (տրանսֆորմատիվ) ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ տվյալ քաղաքականության ոլորտում:
    - o Նորը կամ գոյություն ունեցողը. ԱՀՄ հետազոտողն արձանագրել է, թե պարտավորություններից յուրաքանչյուրն, արդյո՞ք, հիմնվում է գործողությունների ծրագրին նախորդող միջոցառման վրա:
- Ժամկետայնությունը
    - o Կատարման նախատեսվող ժամկետը. ԲԿԳ կառավարման դրույթները երկրներին քաջալերում են ստանձնել պարտավորություններ, որոնք ունեն տարեկան արդյունքների հստակ չափորոշիչներ: Այն դեպքերում, երբ հստակ ժամկետներ նշված չեն, ԱՀՄ հետազոտողը առկա տեղեկատվության հիման վրա եզրակացություն է կատարում, թե տվյալ պարտավորությունը գնահատվող ժամանակաշրջանի վերջում որքանով կարող է կատարված լինել:

## 1.1. Էլեկտրոնային կառավարման միջոցով բաց կառավարության խթանում

### 1.1.ա. Միասնական վճարումների համակարգի ներկայացում (պորտալ)

Միասնական վճարումների համակարգի ներկայացում (պորտալ). Պետական տուրքերի (լիցենզիաների, թույլտվությունների, ծառայությունների և այլն) միասնական վճարման համակարգի ներդրումը հնարավորություն կտա վճարումն իրականացնել բանկային քարտով կամ տերմինալով: Այս համակարգի միջոցով վճարված գումարը դիտարկելի կլինի պետական մարմնի համար:

**Պարտավորության նկարագրություն**

| | | |
|---|---|---|
| Պատասխանատվու-թյուն | **Հիմնական հաստատությունը** | Ֆինանսների նախարարություն |
| | **Աջակցող հաստատությունը** | Դատաիրավական բարեփոխումների համար պա-տասխանատու ծրագրի իրականացման գրասենյակ |
| | **Կոնտակտը նշված է** | Ոչ |
| **Կոնկրետությունը և չափելիությունը** | | Բարձր (պարտավորության ձևակերպումը տալիս է հստակ, չափելի, ստուգելի չափորոշիչ, որի օգնությամբ կարելի է գնահատել նպատակին հասնելը) |
| Համապատասխանու-թյուն | **ԲԿԳ հիմնական մարտահրավերները** | Հանրային ծառայությունների բարելավում |

| **ԲԿԳ արժեքները** | | | | |
|---|---|---|---|---|
| **Տեղեկատվության հասանելիություն** | **Հանրային մասնակցություն** | **Հաշվետվողականու-թյուն** | **Տեխնոլոգիաներ և նորարարություն** | **Ոչ մեկը** |
| | | | | ✗ |

**Հավակնոտությունը**

| **Նոր, թե՞ գոյություն ունեցող** | **Հնարավոր ազդեցությունը** |
|---|---|
| Գոյություն ունեցող | Փոքր (բայց դրական քայլ է համապատասխան քաղաքականության ոլորտում) |

**Կատարման աստիճանը**

| **Սկսելու օրը** | **Ավարտելու օրը** | | |
|---|---|---|---|
| 12 հունվարի, 2012թ. | 16 ապրիլի, 2012թ. | Իրական կատարում<br>Կանխատեսված կատարում |  |



**Հետագա քայլերը**

Ոչինչ: Պարտավորությունը կատարված է

TOC

## Ի՞նչ է տեղի ունեցել

Միասնական վճարումների համակարգը ՀՀ կառավարությունը ներդրել է Համաշխարհային բանկի օժանդակությամբ իրականացվող դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրի շրջանակներում: Օգտագործվել են նաև Հոլանդիայի և Ճապոնիայի կառավարությունների կողմից տրամադրված դրամաշնորհային միջոցները: 2012թ. հունվարի 12-ին դատաիրավական բարեփոխումների իրականացման համար պատասխանատու ծրագրի իրականացման գրասենյակը (այսուհետ՝ ԾԻԳ) մատակարարի հետ համաձայնագիր է ստորագրել Հայաստանում վճարումների միասնական համակարգ ստեղծելու վերաբերյալ[1]: Աշխատանքները կատարվել են 2012թ. հունվարից մինչև ապրիլն ընկած ժամանակահատվածում (այն ժամանակ, երբ կառավարությունը մշակում էր ԲԿԳ գործողությունների ծրագիրը): Համակարգն սկսել է գործել 2012թ. ապրիլի 14-ից:

Պետական վճարումների էլեկտրոնային համակարգը (https://www.e-payments.am) ներդրվել է ՀՀ կառավարության որոշմամբ[2] (ՀՀ գործողությունների ծրագիրը հաստատելու հաջորդ օրը):

2012թ. ապրիլի 14-ից 2013թ. հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային համակարգի միջոցով կատարվել է 4162 վճարում[3] (ինչը կազմում է տուրքերի և համանման վճարումների ընդհանուր թվի 11.3 տոկոսը): Համակարգը շարունաբար կատարելագործվում է, որպեսզի օժանդակի այլ վճարումների էլեկտրոնային եղանակով կատարմանը: Այժմ հարկատուները համակարգի օգնությամբ կարող են վճարել նաև հարկերը:

## Ի՞նչ ազդեցություն է ունեցել

Այս պարտավորությունը չի ավելացրել ԲԿԳ արժեքներ հանդիսացող տեղեկատվության հասանելիությունը, հաշվետվողականությունը և հանրային մասնակցությունը: Այս նոր համակարգը ներդնելով կառավարությունն ընդունել է նոր տեխնոլոգիաների կարևորությունը: Քաղաքացիներն այլևս բանկ գնալու կարիք չունեն և կարող են վճարումները կատարել ուղղակի տնից կամ գրասենյակից՝ խնայելով իրենց ժամանակը: Սակայն, ի տարբերություն ԲԿԳ նպատակների, որը կառավարությունը հանրության համար ավելի տեսանելի դարձնելն է, Հայաստանում միասնական վճարումների համակարգը նախատեսված է վճարված գումարները պետական մարմնի համար դիտարկելի դարձնելու նպատակով: Ընդունելով, որ միասնական վճարումների համակարգը էականորեն կբարձրացնի վճարային ծառայությունների որակը, միաժամանակ փաստ է, որ այս համակարգի ներդրումը կառավարության ունեցած որևէ տեղեկատվություն ավելի հասանելի չի դարձնում հանրության համար, չի բարելավում հանրային մասնակցությունը և չի լուծում հաշվետվողականության հետ կապված որևէ խնդիր: ԱՀՄ հետազոտողի կազմակերպած հանդիպումներին մասնակցած ՀԿ-ներն այս պարտավորության կատարման նկատմամբ հետաքրքրություն հանդես չեն բերել:

## Հետագա քայլեր

Այս և էլեկտրոնային կառավարման հետ կապված այլ պարտավորությունները չեն ապահովում մինչև այդ հանրության համար ոչ հասանելի տեղեկատվության հասանելիությունը: Այն նաև չի բարելավում հանրային մասնակցությունը կամ չի խրախուսում հաշվետվողականությունը: ԱՀՄ հետազոտողի կարծիքով այս պարտավորությունը չպետք է ներառվի կառավարության հետագա ԲԿԳ գործողությունների ծրագրերում:

[1] ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնյայից ստացված պատասխան:
[2] 2012 թվականի ապրիլի 19-ի «Պետական վճարումների էլեկտրոնային համակարգի ներդրման և գործարկման մասին» N 496-Ն որոշում (ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի էլեկտրոնային շտեմարան. www.arlis.am)
[3] ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնյայից ստացված պատասխան:

TOC

## 1.1.բ Պետավտոտեսչության ոլորտի բարեփոխումներ

Պետավտոտեսչության ոլորտի բարեփոխումներ՝ մեքենաների գրանցման, վարորդական իրավունքի տրամադրման, տուգանքների և վճարումների էլեկտրոնային համակարգի ներդրում. մեքենաների գրանցումը, վարորդական իրավունքի տրամադրումը, տուգանքների վճարումը կիրականացվի մեկ պատուհանի սկզբունքով, ինչպես նաև հաճախորդին նախապես տրամադրված, 12-նիշանի ծածկագրի միջոցով հնարավորություն կստեղծվի հետևել գործարքի ընթացքին:

### Պարտավորության նկարագրություն

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Պատասխանատվություն | **Հիմնական հաստատությունը** | Ոստիկանություն | | | |
| | **Աջակցող հաստատությունը** | Համաշխարհային բանկ, Եվրոպական Միություն | | | |
| | **Կոնտակտը նշված է** | Ոչ | | | |
| **Կոնկրետությունը և չափելիությունը** | | Ցածր (պարտավորության ձևակերպումը նկարագրում է գործողություն, որը կարելի է  չափելի դիտարկել ընթերցողի կողմից որոշակի մեկնաբանության դեպքում) | | | |
| Համապատասխանություն | **ԲԿԳ հիմնական մարտահրավերները** | Հանրային ծառայությունների բարելավում | | | |
| | **ԲԿԳ արժեքները** | | | | |
| | **Տեղեկատվության հասանելիություն** | **Հանրային մասնակցություն** | **Հաշվետվողականություն** | **Տեխնոլոգիաներ և նորարարություն** | **Ոչ մեկը** |
| | | | | | ✗ |

### Հավակնոտությունը

| | |
|---|---|
| **Նոր, թե՞ գոյություն ունեցող**<br>Գոյություն ունեցող | **Հնարավոր ազդեցությունը**<br>Փոքր (բայց դրական քայլ է համապատասխան քաղաքականության ոլորտում) |

### Կատարման աստիճանը

| **Սկսելու օրը** | **Ավարտելու օրը** | | Չսկսած | Սահմանափակ չափով կատարված | Զգալի չափով կատարված | Կատարված |
|---|---|---|---|---|---|---|
| Հայտնի չէ | 22 մայիսի, 2012թ. | Իրական կատարում | | | | ✓ |
| | | Կանխատեսված կատարում | | | | ✓ |

### Հետագա քայլերը

Գոյություն ունեցող պարտավորության հիման վրա ձևակերպել նոր պարտավորություն

TOC

### Ի՞նչ է տեղի ունեցել

Համակարգը ներդրվել է 2012թ. ապրիլի 2-ին Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող Հանրային հատվածի արդիականացման ծրագրի շրջանակներում: Ներկայումս, մի շարք բիզնես գործընթացներ իրականացվում են բացառապես էլեկտրոնային եղանակով:

### Ի՞նչ ազդեցություն է ունեցել

Այս համակարգի ներդրումը բարելավել է համապատասխան ոլորտում հանրային ծառայությունների մատուցման աշխատանքը: Սակայն, պարտավորությունը ՔՀԿ-ների կողմից չի դիտարկվել որպես կարևոր, հատկապես՝ որպես ԲԿԳ պարտավորություն:

### Հետագա քայլեր

ՀՀ կառավարությունը պետք է հրաժարվի այս պարտավորությունից և ստանձնի նոր պարտավորություն, որը կապված է տեղեկատվության հասանելիության, հաշվետվողականության, հանրային մասնակցության և տեխնոլոգիաներն ու նորարարությունը թափանցիկության և հաշվետվողականության նպատակով օգտագործելու ԲԿԳ արժեքների հետ:

TOC

## 1.1.գ. Էլեկտրոնային համակարգի ներդրում հյուպատոսական ծառայությունների մատուցման համար

Էլեկտրոնային համակարգի ներդրում հյուպատոսական ծառայությունների մատուցման համար. հյուպատոսական ծառայությունները կիրականացվեն էլեկտրոնային համակարգի միջոցով (անձնագրերի տրամադրում և փոխանակում, անձնագրի վավերականության ժամկետի երկարաձգում, տվյալների ստուգում, վերադարձի վկայականների տրամադրում և այլն):

### Պարտավորության նկարագրություն

| | | |
|---|---|---|
| Պատասխանատվություն | **Հիմնական հաստատությունը** | Արտաքին գործերի նախարարություն |
| | **Աջակցող հաստատությունը** | Ոստիկանություն |
| | **Կոնտակտը նշված է** | Ոչ |
| **Կոնկրետությունը և չափելիությունը** | | Միջին (պարտավորության ձևակերպումը նկարագրում է միջոցառում, որի իրականացումն օբյեկտիվորեն կարելի է ստուգել, սակայն չի պարունակում կոնկրետ ժամկետներ և արդյունքներ) |
| Համապատասխանություն | **ԲԿԳ հիմնական մարտահրավերները** | Հանրային ծառայությունների բարելավում |

**ԲԿԳ արժեքները**

| Տեղեկատվության հասանելիություն | Հանրային մասնակցություն | Հաշվետվողականություն | Տեխնոլոգիաներ և նորարարություն | Ոչ մեկը |
|---|---|---|---|---|
| | | | | ✗ |

### Հավակնոտությունը

| **Նոր, թե՞ գոյություն ունեցող** | **Հնարավոր ազդեցությունը** |
|---|---|
| Գոյություն ունեցող | Փոքր (բայց դրական քայլ է համապատասխան քաղաքականության ոլորտում) |

### Կատարման աստիճանը

| **Սկսելու օրը** | **Ավարտելու օրը** | Իրական կատարում / Կանխատեսված կատարում | Չսկսած | Սահմանափակ չափով կատարված | Զգալի չափով կատարված | Կատարված |
|---|---|---|---|---|---|---|
| 1 նոյեմբերի, 2011թ. | 16 ապրիլի, 2012թ. | | | | ▼ (Իրական կատարում) | ▲ (Կանխատեսված կատարում) |

### Հետագա քայլերը

Ոչինչ: Հրաժարվել պարտավորությունից

### Ինչ է տեղի ունեցել

Այս միջոցառման իրականացումը հիմնվում էր ՀՀ կառավարության 2011 թվականի որոշման վրա[1]: Ստեղծվել է աշխատանքային խումբ, որն աշխատել է համակարգի ներդրման վրա: Էլեկտրոնային համակարգը ներդրվել է հյուպատոսական ծառայությունների կեսից ավելիում:

### Ինչ ազդեցություն է ունեցել

ՔՀԿ-ների կողմից այս պարտավորությունը չի նշվել որպես ԲԿԳ տեսակետից կարևոր պարտավորություն:

### Հետագա քայլեր

ՀՀ կառավարությունը պետք է հրաժարվի այս պարտավորությունից և ընդունի մեկ այլ պարտավորություն, որն առնչվում է տեղեկատվության հասանելիության, հաշվետվողականության, հանրային մասնակցության և տեխնոլոգիաներն ու նորարարությունը թափանցիկության և հաշվետվողական նպատակով օգտագործելու ԲԿԳ արժեքների հետ:

[1] ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսական հիմնարկներում Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի տրման, անձնագրի փոխանակման, անձնագրի վավերականության ժամկետ և օտարերկրյա պետություններում անձնագրի վավերականության ժամկետի երկարաձգման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25 N 821 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 974-Ն որոշում, www.arlis.am



TOC

## 1.1.դ. «Mail-Armenia» համակարգի ներդրում

«Mail-Armenia» համակարգի ներդրում. առաջին անգամ անձնագիր ստանալու համար դիմած ՀՀ քաղաքացիներին կտրամադրվի անձնական էլեկտրոնային հասցե: Պետության կողմից բոլոր կարգի ծանուցումները կներկայացվեն այդ հասցեով:

### Պարտավորության նկարագրություն

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Պատասխանատվու-թյուն | **Հիմնական հաստատությունը** | ԷԿԵՆԳ ՓԲԸ | | | |
| | **Աջակցող հաստատությունը** | AI Partnership LTD | | | |
| | **Կոնտակտը նշված է** | Ոչ | | | |
| **Կոնկրետությունը և չափելիությունը** | | Միջին (պարտավորության ձևակերպումը նկարագրում է միջոցառում, որի իրականացումն օբյեկտիվորեն կարելի է ստուգել, սակայն չի պարունակում կոնկրետ ժամկետներ և արդյունքներ) | | | |
| Համապատասխանու-թյուն | **ԲԿԳ հիմնական մարտահրավերները** | Հանրային ծառայությունների բարելավում | | | |
| | **ԲԿԳ արժեքները** | | | | |
| | **Տեղեկատվության հասանելիություն** | **Հանրային մասնակցություն** | **Հաշվետվողականու-թյուն** | **Տեխնոլոգիաներ և նորարարություն** | **Ոչ մեկը** |
| | | | | | ✗ |

### Հավակնոտությունը

| | |
|---|---|
| **Նոր, թե գոյություն ունեցող**<br>Գոյություն ունեցող | **Հնարավոր ազդեցությունը**<br>Փոքր (բայց դրական քայլ է համապատասխան քաղաքականության ոլորտում) |

### Կատարման աստիճանը

| **Սկսելու օրը** | **Ավարտելու օրը** | | |
|---|---|---|---|
| 1 դեկտեմ-բերի, 2012թ. | 1 հուլիսի, 2013թ | Իրական կատարում<br>Կանխատեսված կատարում |  |



### Հետագա քայլերը

Վերաձևակերպել պարտավորությունն այն ավելի կատարելի կամ չափելի դարձնելու համար

TOC

## Ինչ է տեղի ունեցել

2013թ. հունիսի 14-ին կազմակերպված «Բաց կառավարման գործընկերություն - Հայաստան» միջազգային համաժողովի ժամանակ նշվել է, որ Mail-Armenia համակարգի ներդրման համար անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերը համապատասխան մարմիններին կներկայացվեն հաստատման համար[1]: «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծն ուղարկվել է խորհրդարան: Համաձայն նախագծի՝ անձը համարվում է պատշաճ ծանուցված, երբ տեղեկատվությունն ուղարկվել է նրա պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և առկա է այն կարդալու մասին էլեկտրոնային հավաստում: Եթե այն անձը կամ մարմինը, որն ուղարկել է համապատասխան ծանուցագիրը, մեկշաբաթյա ժամկետում չի ստանում կարդալու մասին էլեկտրոնային հավաստումը, սակայն առկա է էլեկտրոնային հավաստում այն մասին, որ այն ստացվել է, ապա պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկվում է երկրորդ ծանուցագիրը: Նույն ծանուցագիրը միաժամանակ հրապարակվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Երկրորդ ծանուցագիրն ուղարկելուց յոթ օր հետո անձը համարվում է պատշաճ կերպով ծանուցված: 2013թ. հոկտեմբերի վերջի դրությամբ կատարվել է տեխնիկական աշխատանքների 50 տոկոսը:

## Ինչ ազդեցություն է ունեցել

ՔՀԿ-ները հատուկ հետաքրքրություն հանդես չեն բերել այս պարտավորության նկատմամբ: ԲԿԳ աշխատանքային խմբի երկրորդ նիստի ժամանակ ԻԱԿ-ի ներկայացուցիչն առաջարկել է Mail-Armenia համակարգի շրջանակներում ստեղծված պաշտոնական էլեկտրոնային հասցեներից ուղարկված էլեկտրոնային հաղորդագրությունները համարել պատշաճ (այսինքն՝ պաշտոնական) հարցումներ: ԱՀՄ հետազոտողն այն կարծիքին է, որ էլեկտրոնային հաղորդակցությունը միակողմանի ճանապարհ չէ: Այսինքն, քաղաքացու էլեկտրոնային հասցեն չպետք է օգտագործվի միայն պաշտոնական աղբյուրներից էլեկտրոնային հաղորդագրություններ ստանալու, այլև պետք է քաղաքացիներին ծառայի պետական պաշտոնյաներին ծանուցումներ, հարցեր և դիմումներ ուղարկելու համար:

## Հետագա քայլեր

Անհրաժեշտ է դիտարկման ենթարկել այս պարտավորության հետագա կատարումը: ՀՀ կառավարությունը պետք է վերախմբագրի պարտավորության սահմանումը, սահմանի հստակ նպատակներ և նշանակի պատասխանատու պաշտոնյա այս պարտավորության կատարման վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու համար:

TOC

[1] http://news.am/eng/news/158092.html; http://news.am/arm/news/158092.html

### 1.1.ե. «E-statistics» համակարգի ներդրում

«E-statistics» համակարգի ներդրում. պետական վիճակագրական ծառայությունը հաշվետվությունները իրականացնելու է էլեկտրոնային հաշվետվությունների համակարգի միջոցով

## Պարտավորության նկարագրություն

| | | |
|---|---|---|
| Պատասխանատվություն | **Հիմնական հաստատությունը** | Ազգային վիճակագրական ծառայություն |
| | **Աջակցող հաստատությունը** | Պետական եկամուտների կոմիտե, արդարադատության նախարարություն, տարածքային կառավարման նախարարություն |
| | **Կոնտակտը նշված է** | Ոչ |
| **Կոնկրետությունը և չափելիությունը** | | Ցածր (պարտավորության ձևակերպումը ստուգելի արդյունքներ և ժամկետներ չի պարունակում) |
| Համապատասխանություն | **ԲԿԳ հիմնական մարտահրավերները** | Հանրային ծառայությունների բարելավում |

**ԲԿԳ արժեքները**

| Տեղեկատվության հասանելիություն | Հանրային մասնակցություն | Հաշվետվողականություն | Տեխնոլոգիաներ և նորարարություն | Ոչ մեկը |
|---|---|---|---|---|
| | | | | ✗ |

## Հավակնոտությունը

| | |
|---|---|
| **Նոր, թե՞ գոյություն ունեցող**<br>Գոյություն ունեցող | **Հնարավոր ազդեցությունը**<br>Փոքր (բայց դրական քայլ է համապատասխան քաղաքականության ոլորտում) |

## Կատարման աստիճանը

| Սկսելու օրը | Ավարտելու օրը | | |
|---|---|---|---|
| Հայտնի չէ | 22 մայիսի, 2012թ. | Իրական կատարում<br>Կանխատեսված կատարում | Չսկսած — Սահմանափակ չափով կատարված — Զգալի չափով կատարված — Կատարված (իրական կատարում՝ սահմանափակ չափով կատարված; կանխատեսված կատարում՝ կատարված) |

## Հետագա քայլերը

Գոյություն ունեցող պարտավորության հիման վրա ձևակերպել նոր պարտավորություն

TOC

### Ի՞նչ է տեղի ունեցել

Համաձայն կառավարության ինքնագնահատման զեկույցի այս պարտավորությունը կկատարվի մինչև 2013թ. վերջը: Սակայն ՀՀ կառավարության կողմից նշանակված փորձագետը հայտնել է, որ առաջադրանքը կատարված չի լինի մինչև 2014 թվականի օգոստոսը:

### Ի՞նչ ազդեցություն է ունեցել

ՔՀԿ-ներն այս պարտավորությունը ԲԿԳ տեսանկյունից կարևոր պարտավորություն չեն համարել:

Պարտավորությունը հստակ ձևակերպված չէ և դժվար հասկանալի է: Օրինակ՝ անհասկանալի է, թե որ հաշվետվություններին է անդրադառնում պարտավորությունը (Ազգային վիճակագրական ծառայությանը ներկայացվող, թե՞ Ազգային վիճակագրության ծառայության կողմից հրապարակվող հաշվետվություններին): Ազգային վիճակագրական ծառայության բազմաթիվ հաշվետվություններ pdf ձևաչափով հասու են պաշտոնական կայքէջում (www.armstat.am) և նոր համակարգն օգտագործվելու է Ազգային վիճակագրական ծառայությանն էլեկտրոնային հաշվետվություններ ներկայացնելու համար: Այսինքն, այս պարտավորությունն, իր ներկա բնույթով, իրականում ոչ էական է ԲԿԳ տեսանկյունից:

### Հետագա քայլեր

ԱՀՄ հետազոտողն այն կարծիքին է, որ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների բազան, ինչպես նաև պետական այլ մարմինների տվյալների բազաները պետք է համացանցի միջոցով հասու լինեն հանրությանը:

ՀՀ կառավարությունը պետք է այս պարտավորության հիման վրա ձևակերպի նոր պարտավորություն և հստակորեն նշի դրա համապատասխանությունը թափանցիկության և հաշվետվողականության նպատակով տեխնոլոգիան ու նորարարությունն օգտագործելու ԲԿԳ արժեքին: Նոր պարտավորությունը պետք է երաշխավորի, որ կառավարության ունեցած վիճակագրական տեղեկատվությունը հանրության համար տեխնոլոգիապես ընթեռնելի ձևաչափով հասու լինի Ազգային վիճակագրական ծառայության ինտերնետային կայքից:

TOC

## 1.1.զ. Քաղաքային համայնքներում էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառության համակարգի ներդրում

Քաղաքային համայնքներում էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառության համակարգի ներդրում. Հայաստանի Հանրապետության բոլոր 48 քաղաքային վարչական մարմինները կմիանան «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառության համակարգին:

### Պարտավորության նկարագրություն

| | | |
|---|---|---|
| Պատասխանատվու-թյուն | **Հիմնական հաստատությունը** | Տարածքային կառավարման նախարարություն |
| | **Աջակցող հաստատությունը** | Ոչ |
| | **Կոնտակտը նշված է** | Ոչ |
| **Կոնկրետությունը և չափելիությունը** | | Բարձր (պարտավորության ձևակերպումը տալիս է հստակ, չափելի, ստուգելի չափորոշիչ, որի օգնությամբ կարելի է գնահատել նպատակին հասնելը) |
| Համապատասխանու-թյուն | **ԲԿԳ հիմնական մարտահրավերները** | Հանրային միջոցների ավելի արդյունավետ կառավարում |

**ԲԿԳ արժեքները**

| Տեղեկատվության հասանելիություն | Հանրային մասնակցություն | Հաշվետվողականու-թյուն | Տեխնոլոգիաներ և նորարարություն | Ոչ մեկը |
|---|---|---|---|---|
| | | | | ✗ |

### Հավակնոտությունը

| Նոր, թե գոյություն ունեցող | Հնարավոր ազդեցությունը |
|---|---|
| Գոյություն ունեցող | Փոքր (բայց դրական քայլ է համապատասխան քաղաքականության ոլորտում) |

### Կատարման աստիճանը

| Սկսելու օրը | Ավարտելու օրը | | Չսկսած | Սահմանափակ չափով կատարված | Զգալի չափով կատարված | Կատարված |
|---|---|---|---|---|---|---|
| 18 հունվա-րի, 2011թ. | 1 մարտի, 2013թ. | Իրական կատարում | | | | ▼ |
| | | Կանխատեսված կատարում | | | | ▲ |

### Հետագա քայլերը

Ոչինչ: Պարտավորությունը կատարված է:

## Ի՞նչ է տեղի ունեցել

Այս պարտավորության կատարումը հիմնվում է 2004թ. ընդունված «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի[1] և ՀՀ կառավարության 2005թ որոշման վրա[2]:

2013թ. հուլիսի 1-ի դրությամբ համակարգը ներդրված էր  քաղաքային 48 համայնքներից 45-ում: Մնացած համայքներում (Ախթալա, Շամլուղ և Դաստակերտ)  լրացուցիչ կազմակերպական, մարդկային, տեխնիկական և տեխնոլոգիական խնդիրներ կային: ՀՀ տարածքային կառավարման նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն[3], հաշվետվությունը գրելու պահին համակարգը տեխնիկապես ներդրվել է քաղաքային բոլոր համայնքներում: Օրինակ, Դաստակերտում, որը 300  բնակիչ ունեցող քաղաքային համայնք է, դեռևս կադրային խնդիր ունեն: Համակարգը ներդրվել է նաև  գյուղական 150 համայնքում (դրանց մի մասի բնակչությունը 5000 մարդուց ավելի է):

Համակարգի ներդրման համար պետական բյուջեի միջոցներ չեն օգտագործվել: Ծրագիրը ներդրվել է համայնքների և Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն ՀԿ-ի միջև կնքված պայմանագրերի շրջանակներում: Ծրագրային ապահովումը և համակարգչային տեխնիկայի մի մասը համայնքներին տրամադրվել է միջազգային կազմակերպությունների կողմից իրականացված ծրագրերի շրջանակներում (Համաշխարհային բանկ, GIZ և այլն):

Նպատակ է սահմանվել Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը ներդնել 1000-ից ավելի բնակչություն ունեցող բոլոր համայնքներում: Ծրագրված է 2014թ.-ին համակարգը ներդնել 500 համայնքում:

## Ի՞նչ ազդեցություն է ունեցել

Mulberry (ինտրանետ) համակարգում տեղեկատվության փոխանակումը հիմնականում կատարվում է պետական մարմինների միջև: Համակարգն ինքնին հանրությանը հասու չի դարձնում կառավարության ունեցած որևէ տեղեկատվություն: Սակայն այն կարող է օգտակար լինել քաղաքացիներից ստացված նամակներին արագ պատասխանելու համար: Այն կարող է նաև բարելավել կառավարության գործառույթների որակը, տեղեկատվական հոսքերը, տվյալների պահպանումը և այլն:

## Հետագա քայլեր

Պարտավորությունը կատարված է: Mulberry համակարգն անհրաժեշտ է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունն ու աշխատանքն ավելի լավ կազմակերպելու համար: Այնուամենայնիվ, ԱՀՄ հետազոտողի կարծիքով կարիք չկա այս պարտավորությունը ներառել գործողությունների հաջորդ ծրագրում, քանի որ այն ուղղակի առնչություն չունի ԲԿԳ արժեքների հետ:

TOC

[1] «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-40), ընդունվել է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին

[2] 2005 թվականի օգոստոսի 4-ի N 1595-Ն «Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման կարգը սահմանելու մասին» որոշում: ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի էլեկտրոնային շտեմարան. www.arlis.am

[3] ՀՀ տարածքային կառավարման նախարարության պաշտոնյայից ստացված պատասխան:

## 1.2. Կարգավորող նորմատիվ իրավական ակտերի վերանայում (Կարգավորման «Guillotine» ծրագիր)

ՀՀ կառավարությունը գործի է դրել լայն ոլորտների կարգավորման պարզեցման բարեփոխումների ծրագիրը՝ «կարգավորման guillotine» անվանմամբ: Հիմնվելով միջազգային լավագույն գործելակերպի վրա՝ բարեփոխման նպատակն է վերացնել կամ պարզեցնել իրավական այն նորմերը, որոնց կարիքը չկա կամ որոնք չեն նպաստում բիզնեսի զարգացմանը: Այս շրջանակային ծրագիրը կհանգեցնի գործարար միջավայրի բարելավմանը՝ առավել լայն հնարավորություններ ստեղծելով արտաքին ուղղակի ներդրումների համար և խթանելով տնտեսական զարգացումն ու աշխատատեղերի ստեղծումը: Ավելին, կառավարության քննարկմանն են ներկայացվել իրավաբանական անձանց պետական գրանցման, **իրավաբանական անձանց** առանձին միավորների, հաստատությունների, **անհատ ձեռնարկատերերի** պետական հաշվառմանը և մի շարք այլ խնդիրներին վերաբերող օրինագծեր, որոնք ուղղված են բարելավելու գործարար միջավայրը:

<table>
<tr><th colspan="6">Պարտավորության նկարագրություն</th></tr>
<tr><td rowspan="3">Պատասխանատվու-թյունը</td><td>Հիմնական հաստատությունը</td><td colspan="4">Տնտեսական ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի վերակառուցման խորհուրդ</td></tr>
<tr><td>Աջակցող հաստատությունը</td><td colspan="4">Զարգացման հայկական գործակալություն, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն, Համաշխարհային բանկ, Միացյալ ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր, Ամերիկայի միացյալ նահանգների Զարգացման գործակալություն</td></tr>
<tr><td>Կոնտակտը նշված է</td><td colspan="4">Ոչ</td></tr>
<tr><td colspan="2">Կոնկրետությունը և չափելիությունը</td><td colspan="4">Ցածր (պարտավորության ձևակերպումը ստուգելի արդյունքներ և ժամկետներ չի պարունակում)</td></tr>
<tr><td rowspan="4">Համապատասխանու-թյունը</td><td>ԲԿԳ հիմնական մարտահրավերները</td><td colspan="4">Հանրային ծառայությունների բարելավումմ</td></tr>
<tr><td colspan="5">ԲԿԳ արժեքները</td></tr>
<tr><td>Տեղեկատվության հասանելիություն</td><td>Հանրային մասնակցություն</td><td>Հաշվետվողականու-թյուն</td><td>Տեխնոլոգիաներ և նորարարություն</td><td>Ոչ մեկը</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td>✗</td></tr>
<tr><th colspan="6">Հավակնոտությունը</th></tr>
<tr><td colspan="2">Նոր, թե՞ գոյություն ունեցող<br>Գոյություն ունեցող</td><td colspan="4">Հնարավոր ազդեցությունը<br>Փոքր (բայց դրական քայլ է համապատասխան քաղաքականության ոլորտում)</td></tr>
</table>

TOC

## Կատարման աստիճանը

| Սկսելու օրը | Ավարտելու օրը | | Չսկսած | Սահմանափակ չափով կատարված | Զգալի չափով կատարված | Կատարված |
|---|---|---|---|---|---|---|
| Հայտնի չէ. | 16 ապրիլի, 2012թ. | Իրական կատարում | | | | ✓ |
| | | Կանխատեսված կատարում | | | | ✓ |

## Հետագա քայլերը

Գոյություն ունեցող պարտավորության հիման վրա ձևակերպել նոր պարտավորություն

### Ի՞նչ է տեղի ունեցել

«Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրի իրականացման գրասենյակ» (այսուհետ՝ ՕԿԱԿ ԾԻԳ) պետական հիմնարկը ստեղծվել է 2011թ.[1] և իր գործունեությունն սկսել է 2012թ. մայիսից: ՀՀ կառավարությունն արդեն իսկ ընդունել է ՕԿԱԿ ԾԻԳ-ի կողմից պատրաստված լիցենզավորման պարզեցման, էլեկտրոնային հաղորդակցության, էլեկտրաէներգիայի, գազամատակարարման և ջրային տնտեսության ոլորտներին, դեղերի արտադրությանը, դեղատնային գործունեությանը, բժշկական օգնության և սպասարկման լիցենզավորմանը վերաբերող առաջարկությունները:

Այժմ ՕԿԱԿ ԾԻԳ-ն զբաղված է հարկային, մաքսային, ձեռնարկատիրության, արտաքին և միջազգային հարաբերությունների, մաշկույթի և սոցիալական ոլորտների օրենսդրական կարգավորման խնդիրների ուսումնասիրությամբ:

Համաձայն ՕԿԱԿ ԾԻԳ-ի ղեկավարներից ստացված տեղեկատվության կենտրոնը չի զբաղվել իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձին միավորների, հաստատությունների, անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառմանը վերաբերող հարցերով, քանի որ դրանք կարգավորվել են 2009-2011թթ. ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացված բարեփոխումների շրջանակներում, որոնց արդյունքում պարզեցվել են իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման, հաստատությունների պետական հաշվառման հետ կապված մի շարք գործառույթներ, ստեղծվել է e-register համակարգը:

### Ի՞նչ ազդեցություն է ունեցել

2009-2011թթ. կատարված բարեփոխումների արդյունքում բարելավվել են իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց, հաստատությունների, անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառմանը և մի շարք այլ խնդիրներին վերաբերող գործընթացներ: Որոշ ՔՀԿ-ներ և անհատներ բիզնես գործընթացների պարզեցումը նշել են որպես կարևոր պարտավորություն:

### Հետագա քայլեր

ԱՀՄ հետազոտողի կարծիքով այս պարտավորությունը կատարվել է և անհրաժեշտ է ձևավորել դրա վրա հիմնված նոր պարտավորություն, որում կնշվեն Հայաստանում բիզնես միջավայրի բարելավման հստակ նպատակներ:

TOC

[1] ՀՀ կառավարության 2011թ. հոկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կանոնադրություն և կառուցվածքը հաստատելու մասին» N 1462-Ն որոշում: ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի էլեկտրոնային տեմարան. www.arlis.am

## 1.3. Պետական հատվածում ներքին աուդիտի համակարգի բարելավում

Կառավարությունը կշարունակի աուդիտի համակարգի հզորացման աշխատանքները՝ պետական ռեսուրսների կառավարման թափանցիկության առավել բարձր մակարդակ ապահովելու նպատակով: Կառավարությունը նախատեսում է սկսել ներքին աուդիտի նոր համակարգի ներդրման իրականացումը սկսել 2012թ.-ի երկրորդ եռամսյակից: 2012թ.-ի ավարտին ներքին աուդիտի համակարգը պետք է ներդրվի բոլոր հիմնական պետական կառույցներում, քաղաքային համայնքներում, առևտրային և պետական ոչ առևտրային կազմակերպություններում: Սա կպահանջի ռիսկի գնահատման արդյունավետ մեթոդների և ընթացակարգերի, ներքին աուդիտի մեթոդների և գործիքների ներդրում, որոնք կհամապատասխանեն միջազգային չափանիշներին և լավագույն գործելակերպերին, նաև կիրականացվեն համապատասխան աշխատակիցների ուսուցման ծրագրեր: Ներքին աուդիտի ոլորտի հետագա զարգացումները խթանելու համար կպահանջվի նաև ներքին աուդիտի որակավորման համակարգի ներդրում, ինչպես նաև ներքին աուդիտորների շարունակական ուսուցման և զարգացման ծրագրերի իրականացում:

<table>
<tr><th colspan="6">Պարտավորության նկարագրություն</th></tr>
<tr><td rowspan="3">Պատասխանատվու-թյունը</td><td>Հիմնական հաստատությունը</td><td colspan="4">Ֆինանսների նախարարություն</td></tr>
<tr><td>Աջակցող հաստատությունը</td><td colspan="4">Four Assist Development Consulting Limited</td></tr>
<tr><td>Կոնտակտը նշված է</td><td colspan="4">Ոչ</td></tr>
<tr><td colspan="2">Կոնկրետությունը և չափելիությունը</td><td colspan="4">Միջին (պարտավորության ձևակերպումը նկարագրում է միջոցառում, որի իրականացումն օբյեկտիվորեն կարելի է ստուգել, սակայն չի պարունակում կոնկրետ ժամկետներ և արդյունքներ)</td></tr>
<tr><td rowspan="4">Համապատասխանու-թյունը</td><td>ԲԿԳ հիմնական մարտահրավերները</td><td colspan="4">Հանրային ծառայությունների բարելավում, հանրային վստահության բարելավում, հանրային միջոցների ավելի արդյունավետ կառավարում</td></tr>
<tr><td colspan="5">ԲԿԳ արժեքները</td></tr>
<tr><td>Տեղեկատվության հասանելիություն</td><td>Հանրային մասնակցություն</td><td>Հաշվետվողականու-թյուն</td><td>Տեխնոլոգիաներ և նորարարություն</td><td>Ոչ մեկը</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td>✗</td></tr>
</table>

<table>
<tr><th colspan="2">Հավակնոտությունը</th></tr>
<tr><td>Նոր, թե գոյություն ունեցող<br>Գոյություն ունեցող</td><td>Հնարավոր ազդեցությունը<br>Փոքր (բայց դրական քայլ է համապատասխան քաղաքականության ոլորտում)</td></tr>
</table>

TOC

## Կատարման աստիճանը

| Սկսելու օրը | Ավարտելու օրը | | Չսկսված | Սահմանափակ չափով կատարված | Զգալի չափով կատարված | Կատարված |
|---|---|---|---|---|---|---|
| 1 ապրիլի, 2012թ. | 31 դեկտեմբերի, 2013թ. | Իրական կատարում | | | | ✔ |
| | | Կանխատեսված կատարում | | | | ✔ |

## Հետագա քայլերը

Ոչինչ. Պարտավորությունը կատարված է

### Ինչ է տեղի ունեցել

«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2010թ. և կարգավորում է պետական հատվածում ներքին աուդիտի գործառույթի հետ կապված հիմնական հարցերը: Ներքին աուդիտի համակարգի բարելավումը ՀՀ կառավարության կողմից ծրագրվել է 2010թ.[1]: 2010թ. «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» (այսուհետ՝ ԱՖԾԿԿ) ՊՀ-ը շահագրգիռ կողմերին առաջարկել է հայտեր ներկայացնել հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի բարելավման աշխատանքների շրջանակներում 2011թ. փետրվարից մինչև 2012թ. փետրվար[2] խորհրդատվություն տրամադրելու համար (Ինստիտուցիոնալ զարգացման հիմնադրամի դրամաշնորհի աջակցությամբ): ՀՀ կառավարությունը հաստատել է հանրային հատվածում ներքին աուդիտի գործառույթի ներդրման ժամանակացույցը[3], համաձայն որի ներքին աուդիտը պետք է ներդրվեր.

- Պետական կառավարման մարմիններում, պետական հիմնարկներում և Երևանի քաղաքապետարանում՝ մինչև 2012թ. ապրիլի 1-ը,
- 2011թ.-ին 500 միլիոն դրամը գերազանցող շրջանառություն կամ համախառն եկամուտ և 50 տոկոսից ավելի պետական մասնաբաժին ունեցող ընկերություններում և պետական ոչ առևտրային կազմակերպություններում՝ մինչև 2012թ. հուլիսի 1-ը,
- Քաղաքային համայնքներում՝ մինչև 2013թ. հունվարի 1-ը, ներառյալ՝ 2011թ.-ին 500 միլիոն դրամ շրջանառություն կամ համախառն եկամուտ ունեցող և 50 տոկոսից ավելի պետական մասնակցությամբ քաղաքային համայնքների առևտրային և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում, քաղաքային համայնքների հիմնարկներում,
- Գյուղական համայնքներում և նրանց առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում ու հիմնարկներում՝ մինչև 2016թ. հունվարի 1-ը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը տրամադրել է այն մարմինների ցանկը (52 պետական մարմին, Երևանի քաղաքապետարան և 44 քաղաքային համայնք), որտեղ արդեն ներդրվել է ներքին աուդիտ:

ՀՀ ֆինանսների նախարարը հաստատել է ներքին աուդիտի մասնագիտական ստանդարտների կիրառման մեթոդական ցուցումները և ներքին աուդիտի կանոնակարգերի մշակման ուղեցույցները, որոնք կանոնակարգել են ներքին աուդիտի մեթոդների և գործիքների հետ կապված հարցերը և հստակեցրել ռիսկերի գնահատման մեթոդներն ու ընթացակարգերը[4]:

ՀՀ ֆինանսների նախարարությունը կազմակերպել է ներքին աուդիտի ստորաբաժանումների աշխատակիցների վերապատրաստման դասընթացներ: ՀՀ ֆինանսների նախարարությունը մշակել է ներքին աուդիտորների որակավորման համակարգի ներդրման ՀՀ կառավարության որոշման նոր նախագիծ: Այս հաշվետվությունը գրելու պահին նախագիծը ներկայացվել էր ՀՀ արդարադատության նախարարություն՝ փորձագիտական եզրակացության

TOC

համար[5]: Սպասվում է, որ ներքին աուդիտի որակավորման համակարգի ներդրման մասին ՀՀ կառավարության որոշումը կիաստատվի մինչև 2013թ. դեկտեմբեր և համակարգը կներդրվի 2014թ.:

### Ի՞նչ ազդեցություն է ունեցել

ՀՀ կառավարությունը նախատեսում էր ներքին աուդիտի գործառույթը ներդնել կենտրոնական իշխանության բոլոր մարմիններում, քաղաքային համայնքներում և առևտրային ու ոչ առևտրային կազմակերպություններում՝ դեռևս մինչև ԲԿԳ գործողությունների ծրագրում այն ներառելը: Ներքին աուդիտի կարողությունների զարգացումը, անկասկած, կուժեղացնի Հայաստանի պետական ֆինանսական կառավարման համակարգը: ՔՀԿ-ները նշել են, որ իրենք հետաքրքրված չեն այս պարտավորությամբ, քանի որ ներքին աուդիտի ուսումնասիրության արդյունքները հրապարակման ենթակա չեն, եթե դա օրենքով նախատեսված չէ:

### Հետագա քայլեր

ԱՀՄ հետազոտողն առաջարկում է այս պարտավորությունը համարել կատարված:

[1] ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 11-ի N44 արձանագրային որոշմամբ հաստատված «Պետական ներքին ֆինանսական հսկողության ռազմավարություն»:
[2] http://www.ffpmc.am/announcements/rfp/2010/09.11.10_27.09.10_Request%20for%20EOI_AV%20arm.pdf
[3] ՀՀ կառավարության 2011թ օգոստոսի 11-ի «Ներքին աուդիտի գործընթացի կազմակերպման, «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազոր մարմնի սահմանման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N 503-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N1233-Ն որոշում: ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի էլեկտրոնային շտեմարան. www.arlis.am
[4] ՀՀ ֆինանսների նախարարի 2011թ.դեկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների կիրառման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» N 974-Ն և 2012թ. փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղղցույցները հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 934-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 143-Ն հրաման: ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի էլեկտրոնային շտեմարան. www.arlis.am
[5] ՀՀ ֆինանսների նախարարության 2013 թվականի հոկտեմբերի 8-ի N4/13.3/14979-13 գրությունը ՀՀ արդարադատության նախարարին:



TOC

## 1.4. Գնումների ընթացակարգերի բարելավում

Պետական գնումների թափանցիկությունը, հաշվետվողականությունը և օրինականությունն ապահովելու նպատակով կառավարությունն ստանձնել է գնումների առկա համակարգը բարելավելու և պետական գնումներով զբաղվող մարմինների ինստիտուցիոնալ կարողությունները հզորացնելու աշխատանքները: Նախատեսվում է ներկայացնել հաշվետվական համակարգ, ըստ որի իրավասու մարմինը պետք է հրապարակի կապալառուների կողմից իրականացված գնումների մասին առավել մանրամասն տեղեկատվություն: Բացի այդ, շահերի բախման ռիսկը նվազեցնելու և պետական գնումների ընթացակարգերին համապատասխանությունն ապահովելու նկատմամբ առավել խիստ վերահսկողություն իրականացնելու նպատակով նախատեսվում է մշակել գնումների համար պատասխանատու պաշտոնատար անձանց վարքի նորմեր: Մինչ այդ, կմշակվեն և կներկայացվեն շարունակական ուսուցման և վերապատրաստման ծրագրեր: Մինչև 2013 թ.-ի ավարտը նախատեսվում է ամբողջությամբ իրականացնել և ապահովել էլեկտրոնային գնումների համակարգի արդյունավետ կիրառումը՝ գործընթացի թափանցիկությունը և պետական գնումների ոլորտում մրցակցությունն ամրապնդելու նպատակով: www.gnumner.am և www.armeps.am պաշտոնական կայքերը կկատարելագործվեն, որպեսզի առավել արդյունավետ գործեն և տրամադրեն ամբողջական տեղեկատվություն գնումների ընթացակարգերի վերաբերյալ:

| Պարտավորության նկարագրություն | | |
|---|---|---|
| Պատասխանատվու-թյունը | Հիմնական հաստատությունը | Ֆինանսների նախարարություն |
| | Աջակցող հաստատությունը | SIGMA (Support for Improvement in Governance and Management), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ, Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) Gmbh |
| | Կոնտակտը նշված է | Ոչ |
| Կոնկրետությունը և չափելիությունը | | Միջին (պարտավորության ձևակերպումը նկարագրում է միջոցառում, որի իրականացումն օբյեկտիվորեն կարելի է ստուգել, սակայն չի պարունակում կոնկրետ ժամկետներ և արդյունքներ) |
| Համապատասխանու-թյունը | ԲԿԳ հիմնական մարտահրավերները | Հանրային ծառայությունների բարելավում, հանրային վստահության բարելավում, հանրային միջոցների ավելի արդյունավետ կառավարում |

| ԲԿԳ արժեքները | | | | |
|---|---|---|---|---|
| Տեղեկատվության հասանելիություն | Հանրային մասնակցություն | Հաշվետվողականու-թյուն | Տեխնոլոգիաներ և նորարարություն | Ոչ մեկը |
| ✗ | | ✗ | ✗ | |

| Հավակնոտությունը | |
|---|---|
| **Նոր, թե՞ գոյություն ունեցող**<br>Գոյություն ունեցող | **Հնարավոր ազդեցությունը**<br>Չափավոր (պարտավորությունը համապատասխան քաղաքականության ոլորտում խոշոր քայլ է, սակայն չափի և խորության տեսանկյունից մնում է սահմանափակ) |

TOC

## Կատարման աստիճանը

| Սկսելու օրը | Ավարտելու օրը | | |
|---|---|---|---|
| 1 հունվարի, 2011թ | 31 դեկտեմբերի, 2013թ. | Իրական կատարում<br>Կանխատեսված կատարում | Չսկսած — Սահմանափակ չափով կատարված — Զգալի չափով կատարված — Կատարված |

## Հետագա քայլերը

Հետագա քայլեր ներդրման ուղղությամբ

### Ինչ է տեղի ունեցել

Գնումների էլեկտրոնային համակարգի ներդրումն սկսվել է 2004թ.: Եվրոպական Միությունը(այսուհետ՝ ԵՄ), Տնտեսական Համագործակցության և Զարգացման Կազմակերպությունը (այսուհետ՝ ՏՀԶԿ), ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալությունը (այսուհետ՝ ԱՄՆ ՄԶԳ) և Համաշխարհային բանկը ՀՀ կառավարությանն օգնել են պետական գնումների համակարգի բարելավման գործում:

ՏՀԶԿ և ԵՄ համագործակցության արդյունքում ստեղծված SIGMA (Support for improvement in Governance and Management[1]) կազմակերպությունն օժանդակել է գնումների բարեփոխումներին: ԱՄՆ ՄԶԳ-ն ֆինանսավորել է ինտերնետային կայքի ստեղծումը, սեմինարների և դասընթացների կազմակերպումը և այլն: Համաշխարհային բանկի կողմից աջակցությունը հնարավոր է դարձել հանրային հատվածի արդիականացման առաջին ծրագրի միջոցով (գործել է 2004թ. մայիսի 4-ից մինչև 2011թ. փետրվարի 28-ը), որն ուներ էլեկտրոնային գնումների ներդրման բաղադրիչ:

Համաշխարհային բանկի կողմից 2009թ.[2] իրականացված երկրի գնումների գնահատման հաշվետվությունում (ԵԳԳ) նշվել է, որ 2004թ. մայիսի[3] ԵԳԳ մի շարք առաջարկություններ ամբողջությամբ չեն ներդրվել (օրինակ՝ մեկ աղբյուրից կատարվող գնումների նվազեցման, վեճերի լուծման, պետական գնումների թափանցիկության վերաբերյալ և այլ առաջարկներ):

ՀՀ կառավարությունն իր 2009 թվականի արձանագրային որոշմամբ[4] հաստատել է գնումների համակարգի բարեփոխումների ռազմավարությունը: 2009 թվականին ՀՀ վարչապետի որոշմամբ[5] հաստատվել է ռազմավարության ներդրման աշխատանքների ժամանակացույցը, որով նախատեսվում էր աշխատանքներն ավարտել 2013 թ.: «Գնումների մասին» ՀՀ օրենքն[6] ընդունվել է 2010թ. (3-րդ օրենքը 2000 թ. ի վեր):

ՀՀ կառավարությունը և ֆինանսների նախարարությունը մեծ աշխատանք են կատարում գնումների համակարգի զարգացման ուղղությամբ և վերջին երկու-երեք տարիներին մի շարք որոշումներ են կայացրել և հրամաններ արձակել, որոնք վերաբերում են պետական գնումներին, էլեկտրոնային գնումներին և պետական գնումների վերաբերյալ հրապարակվող տեղեկատվության ընդլայնմանը[7]:

«Գնումների աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը մշակել է գնումների համար պատասխանատու պաշտոնյաների վերապատրաստման դասընթացների և ուղեցույցների ուսումնական ծրագրերը, որոնք օգտագործվում են գնումների համար պատասխանատու պաշտոնյաների վերապատրաստման համար[8]:

ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնյաների տեղեկատվության համաձայն գնումների համար պատասխանատու պաշտոնատար անձանց վարքի նորմերը մշակման փուլում են:

2011թ. նոյեմբերի 14-ին ֆինանսների նախարարությունը պաշտոնապես հայտարարեց գնումների էլեկտրոնային համակարգի գործարկման մասին[9], որը 2012թ. մայիսին Տիրանայում (Ալբանիա) կայացած պետական գնումների տարածաշրջանային

TOC

8-րդ համաժողովի ժամանակ ներկայացվել է որպես գնումների թափանցիկության ուղղությամբ կատարված մեծ քայլ:

ԲԿԳ աշխատանքային խմբի 2013թ. ապրիլի 22-ին կայացած հանդիպման արձանագրության համաձայն աշխատանքային խումբը գտել է, որ ըստ էության, այս պարտավորությունը կարելի է համարել կատարված:

Չնայած բոլոր այս ջանքերին, 2012թ. սեպտեմբերի 15-ին ՀՀ Նախագահը վարչապետին և նախարարներին քննադատեց գնումների համակարգը ծախողելու համար, այն բանից հետո, երբ Նախագահի վերահսկողական ծառայությունը հաշվետվություն ներկայացրեց պետական գնումների վերաբերյալ, որի համաձայն ոլորտում առկա են համակարգային և կազմակերպչական բնույթի խնդիրներ[10]:

Գնումների հետ կապված խնդիրը ՀՀ կառավարության կողմից քննարկվել է 2012թ. սեպտեմբերի 20-ին[11]:

Վերահսկիչ պալատի (այսուհետ՝ ՎՊ) 2012թ. գործունեության վերաբերյալ հաշվետվության մեջ նշվում է, որ «դեռևս բացահայտվում են հակամրցակցային, անարդյունավետ, ոչ թափանցիկ, ոչ հրապարակային և խտրական հիմքերով կազմակերպված գնման գործընթացներ»[12]: ՎՊ-ն ՀՀ պետական գնումներում առկա խնդիրները բնութագրել է որպես համակարգային և նշել, որ էլեկտրոնային գնումների համակարգն, ըստ էության, չի գործում՝ հայտարարելով, որ ծրագիրը ձախողվել է: ՀՀ ֆինանսների նախարարությունը ընդունել է ձախողման փաստը: ՎՊ համաձայն, էլեկտրոնային գնումների համակարգը բարելավելուն նպատակաուղղված նոր ծրագրի մշակման ժամանակ չեն վերլուծվել նախորդ ձախողումների պատճառները և ռիսկերը, ինչն էականորեն նվազեցնում է նոր բարեփոխումների հուսալիությունը:

2012թ. ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսական վերահսկողության տեսչությունը բացահայտել է գնումների օրենսդրական պահանջների մի շարք խախտումներ[13]:

Էլեկտրոնային գնումների համակարգի գնահատում են կատարել նաև այլ կազմակերպություններ:

2013թ. հոկտեմբերին Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը (այսուհետ ԹԻՀԿԿ) Հայաստանի պետական գնումների համակարգի վերաբերյալ երեք փաստաթուղթ է հրապարակել[14]՝ նշելով.

- Էլեկտրոնային գնումների համակարգը հնարավորություն չի ընձեռում ամբողջությամբ կիրառել ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված բոլոր ընթացակարգերը:
- Համակարգի գործունեության առաջին երկու տարվա ընթացքում էլեկտրոնային եղանակով հայտարարվել է 58 ընթացակարգ, որից կայացել է ընդամենը 35-ը: Որոշ պայմանագրերում նշված չեն պայմանագրի կնքման ամսաթվերը, իսկ որոշ դեպքերում առկա է միայն պայմանագրի նախագիծը:
- Չնայած փաստ է, որ մեկ անձից գնումների քանակը և ծավալներն ավելացել են, մեկ անձից գնումների վիճակագրությունը լիարժեք չէ:
- Բողոքարկման խորհրդի հանձնաժողովում չկա ՀՀ ԿԲ ներկայացուցիչ (ըստ ԱՀՄ հետազոտողի 69 հոգուց կազմված բողոքարկման խորհրդում ՀԿ-ների 2 ներկայացուցիչ կա):
- Բողոքարկման խորհրդի հանձնաժողովների նիստերը չեն ձայնագրվում, ինչը հանձնաժողովի գործունեության թափանցիկության հետ կապված մտահոգության տեղիք է տալիս:
- Չեն նշվում բողոքարկման խորհրդի անդամների լիազորությունների ժամկետները: ԹԻՀԿԿ ներկայացուցիչները մասնակցել են հանձնաժողովի նիստերից մեկին: Չնայած նիստին ներկա է եղել հանձնաժողովի 2 անդամ, որոշման տակ եղել է երեքի ստորագրություն: ԹԻՀԿԿ-ը նշել է մի շարք



TOC

այլ խնդիրների մասին (ներառյալ այն, որ ARMEPS համակարգի ժամային գոտին չի համապատասխանում Հայաստանի ժամային գոտուն):

- Չնայած Ասիական զարգացման բանկի հաշվետվությունը պնդում է[15], որ պետական գնումների շուկան բաց է արտասահմանյան հայտատուների համար, ԹԻՀԿԿ հետազոտությունը փաստում է, որ ոչ ռեզիդենտների մասնակցության հետ կապված խնդիրներ կան և որ էլեկտրոնային գնումների համակարգը բարելավման զգալի կարիք ունի:

2012թ. նոյեմբերին Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության գործադիր տնօրենը կարծիք է հայտնել, որ էլեկտրոնային գնումների համակարգն ընդամենը հայտարարությունների համակարգ է[16]:

Policy Forum Armenia կազմակերպության գնահատականներով մեկ անձից կատարվող գնումների պատճառով պետական բյուջեի տարեկան վնասը 300-400 միլիոն ԱՄՆ դոլարի միջակայքում է[17]:

Գնումների աջակցման կենտրոնը համաձայն է ԹԻՀԿԿ-ի կողմից նշված բազմաթիվ խնդիրների առկայության հետ: Սակայն նաև նշել են, որ 2013թ. հոկտեմբերի դրությամբ բոլոր խնդիրները լուծվել են և որ վերջին անգամ համակարգը խափանվել է (կարճ ժամանակով) 2013թ. օգոստոսի սկզբին: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկն (այսուհետ՝ ՎԶԵԲ) օժանդակում է էլեկտրոնային պլանավորման և էլեկտրոնային գնումների կառավարման բաղադրիչների ներդրմանը: Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության ՎԶԵԲ-ի հետ աշխատող պաշտոնյայի նախարարությունը մշակել է էլեկտրոնային գնումների համակարգի վերանայման տեխնիկական առաջադրանքը: Ակնկալվում է, որ նոր համակարգը կներդրվի 2014թ. և կսկսի գործել 2014թ. երկրորդ կեսից:

2013թ. հուլիսի 3-ի մամուլի ասուլիսի ժամանակ ֆինանսների նախարարը նշել է, որ նախարարությունը միջոցներ է ձեռնարկում գնումների համակարգը բարելավելու ուղղությամբ: 2013թ. հոկտեմբերի 25-ին փոխնախարարը ասուլիս տվեց[18], որի ժամանակ ներկայացրեց գնումների ոլորտի բարեփոխումները: Մասնավորապես բարձրացվել են խոշոր մրցույթներին մասնակցող ընկերություններին ներկայացվող ֆինանսական պահանջները, տուգանքներ են սահմանվել պայմանագրերի կատարումից հրաժարվելու համար:

### Ինչ ազդեցություն է ունեցել

Բազմաթիվ ՀԿ-ների կարծիքով, ներառյալ այն ՀԿ-ները, որոնք ընդգրկված են ԲԿԳ աշխատանքային խմբում, այս պարտավորությունն ամենակարևորներից մեկն էր: ԹԻՀԿԿ-ը ուշադրությամբ հետևել է պետական գնումներին:

Կարծիք կա, որ գնումների ոլորտը կարգավորող Հայաստանում առկա օրենսդրական դաշտը համապատասխանում է միջազգային չափանիշների պահանջներին: Սակայն իրականում օրենսդրության կիրարկումը բավարար թափանցիկ չէ:

Կարծիք կա նաև, որ ՀԿ-ները դժվարությունների են հանդիպում բողոքարկման խորհրդի կազմ մտնելու հարցում, քանի որ ֆինանսների նախարարությունը արհեստական դժվարություններ է ստեղծում նրանց համար այն դեպքում, երբ պետական մարմինների թեկնածուների նկատմամբ ավելի մեղմ վերաբերմունք է ցուցաբերվում:

ՀՀ կառավարությունը ձեռնարկել է էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման ինտենսիվ բարեփոխումներ: Բարեփոխումները լավ են ընթանում այն ոլորտներում, որտեղ դրանք նպաստում են գործարքների կատարմանը (գումարների կամ տեղեկատվության փոխանցում և այլն): Սակայն ավելի բարդ համակարգի ներդրումը՝ ինչպիսին էլեկտրոնային գնումների համակարգն է, դժվարությունների է հանդիպում և ենթարկվում է քննադատության: ԱՀՄ հետազոտողն այն կարծիքին է, որ ՀՀ գնումների համակարգը լավ չի աշխատում և առանց համակարգային հիմնախնդիրներին անդրադառնալու այն աշխատացնելուն ուղղված տեխնիկական լուծումների փորձերը կարող են շարունակաբար ձախողվել: Կարիք կա խորությամբ վերլուծելու այն պատճառները, որոնք խաթարում են գործող համակարգը: Գնումների հուսալի

TOC

համակարգի բացակայությունն ընդհանրապես և էլեկտրոնային գնումների համակարգի բացակայությունը՝ մասնավորապես, թանկ է նստում Հայաստանի հանրության և տնտեսության վրա:

### Հետագա քայլեր

ՀՀ կառավարությունը պետք է շարունակի պետական գնումների հայկական համակարգում գերիշխող խնդիրները բացահայտելուն նպատակաուղղված ուսումնասիրություններ կատարել: Մինչև այդ ուսումնասիրության ավարտը կառավարությունը պետք է դադարեցնի գնումների ոչ մրցակցային եղանակների օգտագործումը և երաշխավորի, որ դրանք օգտագործվում են միայն վարչապետի թույլտվությամբ: Գործողությունների հաջորդ ծրագրում ՀՀ կառավարությունը պետք է ստանձնի պետական տարբեր մարմինների կողմից տարբեր եղանակներով կատարվող գնումների քանակների և ծավալների վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփելու և 2013թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության հետ միասին այդ տեղեկատվությունը հրապարակելու պարտավորություն: ՀՀ կառավարությունը պետք է պետական գնումների վերաբերյալ այլ տեղեկատվություն հրապարակելու պարտավորություն ևս ստանձնի: Էլեկտրոնային գնումների համակարգը պետք է հնարավոր դարձնի այդպիսի հաշվետվությունների արագ պատրաստումը: Այս պարտավորության կատարումը հետագա աշխատանք է պահանջում: Գործողությունների հաջորդ ծրագրում պետական գնումներին վերաբերող պարտավորությունները և ակնկալվող արդյունքները պետք է հիմնվեն խորը ուսումնասիրությունների վրա, ունենան հստակ ժամկետներ: Դրանցում նաև պետք է նշվեն պարտավորության կատարման համար պատասխանատու պաշտոնյաները:

---

[1] http://www.oecd.org/site/sigma/about/
[2] World Bank. (2009). Republic of Armenia: Country Procurement Assessment Report. Report No. 49975-AM, June 29, 2009.
[3] World Bank. (2004). Republic of Armenia: Country Procurement Assessment Report. Report No. 29246-AM, May, 2004.
[4] ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 23-ի «Գնումների համակարգի բարեփոխումների ռազմավարությունը հաստատելու մասին» N 17 արձանագրային որոշում
[5] ՀՀ վարչապետի 2009 թվականի սեպտեմբերի 12-ի «Գնումների համակարգի բարեփոխումների ռազմավարությունից բխող միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N 862-Ա որոշում:
[6] «Գնումների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-206-Ն), ընդունված է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին:
[7] Գնումների գործընթացի կազմակերպման մասին ՀՀ կառավարության 2011թ.փետրվարի 10-ի N168-N, պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքային նամակի օրինակելի ձևի մասին ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 11-ի N1145-Ն որոշումը, պետական գնումների հնարավոր մասնակիցներին ներկայացվող նախաորակավորման պահանջների մասին ՀՀ կառավարության 2011թ. հոկտեմբերի 20-ի N1481-Ն որոշումը, էլեկտրոնային գնումների ընթացակարգերը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 9-ի N1916-Ն որոշումը, ՀՀ կառավարության N168-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ ՀՀ կառավարության 2012թ. սեպտեմբերի 20-ի N1259-Ն որոշումը, ՀՀ կառավարության 2012թ. օգոստոսի 30-ի N1104-Ն որոշումը, որի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունը պարբերաբար (10 օրը մեկ) պետք է թարմացնի ՀՀ կառավարության www.e-gov.am պաշտոնական կայքում առկա մեկ աղբյուրից գնումների վերաբերյալ տեղեկատվությունը: ՀՀ ֆինանսների նախարարի 2012թ. դեկտեմբերի 21-ի N1153-Ն հրամանը և 2013թ. օգոստոսի 2-ի N667-Ա հրամանները սահմանում են գնումների վերաբերյալ օրենքով պահանջվող տեղեկատվության հրապարակման ընթացակարգերը և գնումների ընթացքում օգտագործվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:
[8] Հասու են www.gnumner.am կայքում:
[9] http://old.armradio.am/arm/news/?part=eco&id=44929
[10] http://www.president.am/hy/press-release/item/2012/09/15/President-Serzh-Sargsyan-Governmernt-meeting/
[11] http://www.hhk.am/hy/news/item/2012/09/20/parzabanum/
[12] Հայաստանի Հանրապետության Վերահսկիչ պալատի 2012 թվականի տարեկան հաշվետվություն: Հաստատվել է ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013թ. մարտի 29-ի թիվ 7/1 որոշմամբ:
[13] Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսական վերահսկողության տեսչություն. (2013). 2012 թվականի ընթացքում անցկացված ստուգումների և ուսումնասիրությունների վերաբերյալ հաշվետվություն
[14] ԹԻՀԿԿ. Աշխատանքային փաստաթուղթ Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հանրային գնումների վերաբերյալ: http://transparency.am/
ԹԻՀԿԿ. Աշխատանքային փաստաթուղթ Հայաստանի Հանրապետությունում մեկ անձից հանրային գնումների վերաբերյալ: http://transparency.am/
ԹԻՀԿԿ. Աշխատանքային փաստաթուղթ Հայաստանի Հանրապետությունում Հանրային գնումների բողոքարկման համակարգի վերաբերյալ: http://transparency.am/
[15] Asian Development Bank. (2011). ARMENIA: Case Study on e-Government Procurement Development (Financed by R-CDTA 7437: Asia Pacific Procurement Partnership Initiative) .  Prepared by Karen Baghdasaryan
[16] http://news.am/arm/news/128502.html
[17] Policy Forum Armenia, “Corruption in Armenia,” October 2013, www.pf-armenia.orgcoc_2012_report_english.pdf
[18] http://minfin.am/index.php?art=1304&lang=1

TOC

## 1.5. Բյուջեի պլանավորման և հաշվետվական համակարգերի բարելավում՝ ծրագրային բյուջետավորման ամբողջական կիրառման միջոցով

Որպեսզի ապահովվի բյուջեի վերաբերյալ որոշումների կայացումը ապացույցներով հիմնավորված քաղաքականության համաձայն, կառավարությունն ամբողջությամբ կներկայացնի ծրագրի բյուջետավորումը մինչև 2014 թ.-ը: Բյուջեի կազմավորման բարելավումներին զուգընթաց, նոր համակարգերը կբարելավեն պետական միջոցների օգտագործման հաշվետվությունը և հաշվետվողականությունը՝ պետական մարմինների/նախարարությունների կատարողականների (այլ ոչ միայն ֆինանսական ծախսերի) մասին թափանցիկ հաշվետվությունների ներկայացման միջոցով: Այդ բարեփոխումները կնպաստեն նաև ներքին և արտաքին աուդիտի համակարգի բարելավմանը:

### Պարտավորության նկարագրություն

| | | |
|---|---|---|
| Պատասխանատվու-թյուն | **Հիմնական հաստատությունը** | Ֆինանսների նախարարություն |
| | **Աջակցող հաստատությունը** | Բոլոր պետական մարմինները |
| | **Կոնտակտը նշված է** | Ոչ |
| **Կոնկրետությունը և չափելիությունը** | | Բարձր (պարտավորության ձևակերպումը տալիս է հստակ, չափելի, ստուգելի չափորոշիչ, որի օգնությամբ կարելի է գնահատել նպատակին հասնելը |
| Համապատասխանու-թյուն | **ԲԿԳ հիմնական մարտահրավերները** | Հանրային ծառայությունների բարելավում, հանրային միջոցների ավելի արդյունավետ կառավարում |

| ԲԿԳ արժեքները | | | | |
|---|---|---|---|---|
| **Տեղեկատվության հասանելիություն** | **Հանրային մասնակցություն** | **Հաշվետվողականու-թյուն** | **Տեխնոլոգիաներ և նորարարություն** | **Ոչ մեկը** |
| ✗ | | ✗ | | |

### Հավակնոտությունը

| **Նոր, թե՞ գոյություն ունեցող** | **Հնարավոր ազդեցությունը** |
|---|---|
| Գոյություն ունեցող | Տրանսֆորմատիվ (պարտավորությունը ենթադրում է բարեփոխում, որը համապատասխան քաղաքականության ոլորտում առկա գործընթացները փոխելու կարողություն ունի) |

### Կատարման աստիճանը

| **Սկսելու օրը** | **Ավարտելու օրը** | | |
|---|---|---|---|
| 1 հունվարի, 2011թ. | 31 դեկտեմբերի, 2013թ. | Իրական կատարում | Սահմանափակ չափով կատարված |
| | | Կանխատեսված կատարում | Կատարված |

Չսկսած — Սահմանափակ չափով կատարված — Զգալի չափով կատարված — Կատարված

### Հետագա քայլերը

Հետագա քայլեր ներդրման ուղղությամբ



TOC

## Ինչ է տեղի ունեցել

ՀՀ պետական բյուջեն մեծ ծավալով տեղեկատվություն է տրամադրում կառավարության կողմից իրականացվող ծախսերի վերաբերյալ: Տարեկան բյուջի մասին օրենքները և ՀՀ կառավարության՝ դրանց հետ կապված և բյուջեի կատարումը կանոնակարգող որոշումները բյուջեի բոլոր տողերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն են ներկայացնում: Սակայն բյուջեի ներկա ձևաչափը թույլ չի տալիս հասկանալ, թե արդյո՞ք ՀՀ կառավարությունը հասել է տարբեր ճյուղերի համար իր սահմանած նպատակներին և կատարել է ռազմավարական տարբեր փաստաթղթերում ձևակերպված իր խոստումները:

Ծրագրային բյուջետավորման ներդրման ուղղությամբ ՀՀ կառավարությունն աշխատում է 2005թ. ի վեր: Սա բարդ խնդիր է, քանի որ ենթադրում է պետական ֆինանսական կառավարման փիլիսոփայության փոփոխություն և բյուջետային ծրագրերի տարբեր տողերի նկատմամբ վերահսկողությունից անցում  դեպի կառավարության տարբեր ծրագրերի նպատակների հստակ ձևակերպում, սահմանում և դրանց կատարման դիտարկում: Անհրաժեշտ է ունենալ նաև  ներքին աուդիտի և պետական ֆինանսական ներքին վերահսկողության համակարգ: Անհրաժեշտ է տարբեր ծրագրերի ղեկավարների համար բավարար խթաններ ստեղծել այդ նպատակներին հասնելու համար: Այս համակարգը նաև խորհրդարանին թույլ կտա ավելի շատ ուշադրություն դարձնել  կառավարության ռազմավարական տարբեր ծրագրերում սահմանված ճյուղային նպատակների ապահովման վրա:

Վերջին մի քանի տարիներին Հայաստանում մշակվել են բյուջետային տարբեր ծրագրերի նպատակային ցուցանիշներ: Սակայն մինչև հիմա հանրությունը և խորհրդարանը հատուկ ուշադրություն չեն դարձրել այս ցուցանիշների ապահովմանը և հիմնականում կենտրոնացել են բյուջեի կատարման ֆինանսական ցուցանիշների վրա (ի՞նչ միջոցներ են ծրագրավորվել և ինչքա՞ն միջոցներ են իրականում հատկացվել):

2013թ. ապրիլի 30-ին խորհրդարանը փոփոխություններ կատարեց «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում[1], որով օրենքում ներառեց ծրագրի և արդյունքների հասկացության սահմանումը: Տարբեր ծրագրերը և միջոցառումներն ու դրանց ցուցանիշներն արդեն իսկ քննարկվում են խորհրդարանի տարբեր հանձնաժողովներում:

## Ինչ ազդեցություն է ունեցել

Հանրությունը և պատգամավորներն արդեն իսկ տեղեկատվություն են ստանում և ապագայում ավելի շատ տեղեկատվություն կստանան, թե.

- Ինչու՞ են տարբեր ծրագրեր իրականացվում:
- Որո՞նք են յուրաքանչյուր ծրագրի նպատակները:
- Ինչպե՞ս են դրանք փոխկապակցված կառավարության ռազմավարական նպատակների հետ:
- Որո՞նք են այն ցուցանիշները, որ օգտագործվում են տարբեր ծրագրերի և միջոցառումների առաջընթացն արձանագրելու համար:
- Սակայն ՀՀ կառավարությունը մինչև 2014թ., ինչպես սահմանվել էր պարտավորությամբ, ամբողջությամբ չի ներդնի ծրագրային բյուջետավորումը: Իրականում կառավարության գործունեության ծրագրով[2] նախատեսում է, որ ՀՀ կառավարությունը շարունակելու է աշխատել ծրագրային բյուջետավորման ներդրման ուղղությամբ և դրան մասնակիորեն անցնելու պատրաստ կլինի 2016թ., իսկ ամբողջությամբ այն կներդրվի 2018թ.:

## Հետագա քայլեր

Ծրագրային բյուջետավորումը հնարավորություն է տալիս բյուջետային ծրագրերը համակցել կառավարության ռազմավարական ծրագրերի հետ: ԱՀՄ հետազոտողն առաջարկում է Հայաստանում ծրագրային բյուջետավորման ներդրման հետ կապված տարբեր միջոցառումներն ու քայլերը ներառել ԲԿԳ գործողությունների հաջորդ ծրագրերում: Գործողությունների ծրագիրը պետք է հստակորեն նշի արդյունքները և յուրաքանչյուր միջոցառման ու պարտավորության հետ կապված աշխատանքներն սկսելու և ավարտելու օրերը:

[1] «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխությունների կատարելու մասին » ՀՀ օրենք (ՀՕ-45), ընդունվել է 2013 թվականի ապրիլի 30-ին

[2] ՀՀ կառավարության 2013թ. մայիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N515-Ա որոշում: ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի էլեկտրոնային շտեմարան. www.arlis.am



TOC

## 2.1. Տեղեկատվության մատչելիության խթանում

### 2.1.ա. Գույքի և եկամուտների հայտարարագրման թափանցիկության ապահովում

Գույքի և եկամուտների հայտարարագրման թափանցիկության ապահովում: Բարձրաստիճան պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրերը կիրապարակվեն հանրության համար հասանելի կերպով, ինչպես օրինակ Էթիկայի հանձնաժողովի նորաստեղծ պաշտոնական ինտերնետային կայքում: Էթիկայի հանձնաժողովը նաև կապահովի հայտարարագրերի բովանդակության վերլուծությունը և դրանց հրապարակայնությունը:

**Պարտավորության նկարագրություն**

| | | |
|---|---|---|
| **Պատասխանատվու-թյունը** | **Հիմնական հաստատությունը** | Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով |
| | **Աջակցող հաստատությունը** | Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ, Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն, «Հետք» հետաքննող լրագրողներ |
| | **Կոնտակտը նշված է** | Ոչ |
| **Կոնկրետությունը և չափելիությունը** | | Բարձր (պարտավորության ձևակերպումը տալիս է հստակ, չափելի, ստուգելի չափորոշիչ, որի օգնու-թյամբ կարելի է գնահատել նպատակին հասնելը) |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Համապատասխանու-թյունը** | **ԲԿԳ հիմնական մարտահրավերները** | Հանրային վստահության բարելավում | | | |
| | **ԲԿԳ արժեքները** | | | | |
| | **Տեղեկատվության հասանելիություն** | **Հանրային մասնակցություն** | **Հաշվետվողականու-թյուն** | **Տեխնոլոգիաներ և նորարարություն** | **Ոչ մեկը** |
| | ✗ | | ✗ | ✗ | |

**Հավակնոտությունը**

| | |
|---|---|
| **Նոր, թե՞ գոյություն ունեցող**<br>Գոյություն ունեցող | **Հնարավոր ազդեցությունը**<br>Տրանսֆորմատիվ (պարտավորությունը ենթադրում է բարեփոխում, որը համապատասխան քաղաքականության ոլորտում առկա գործընթացները փոխելու կարողություն ունի) |

**Կատարման աստիճանը**

| | | | |
|---|---|---|---|
| **Սկսելու օրը**<br>1 հունվարի, 2011թ. | **Ավարտելու օրը**<br>31 դեկտեմբերի, 2013թ. | Իրական կատարում<br><br>Կանխատեսված կատարում | |




**Հետագա քայլերը**

Հետագա քայլեր ներդրման ուղղությամբ



TOC

### Ինչ է տեղի ունեցել

2009թ. ՀՀ կառավարությունը հայտարարեց, որ «օրենսդրական փոփոխություններ կկատարի, որոնցով նպատակաուղղված խիստ պատժամիջոցներ կնախատեսվեն բարձրաստիճան պետական այն պաշտոնյաների նկատմամբ, որոնք ներգրավված են բիզնես գործառույթներում»[1]:

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամը[2] (որը նաև ԲԿԳ աշխատանքային խմբի անդամ է) հայտնել է, որ բոլոր բարձրաստիճան պաշտոնատար անձինք ներկայացրել են 2012թ. գույքի և եկամուտների հայտարարագրերը: Այդ հայտարարագրերի մի մասը դեռևս չի տեղադրվել հանձնաժողովի կայքէջում, քանի որ կայքը վերակազմավորվում է:

Հանձնաժողովը վերլուծել է բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների 2011թ. և 2012թ. հայտարարագրերի բովանդակությունը: Հայտարարագրերի լրացման ուղեցույցի պահանջներին անհամապատասխանություններ հայտնաբերելու 100-ից ավելի դեպքերում հայտարարագրերը հանձնաժողովի կողմից վերադարձվել են բարձրաստիճան պաշտոնատար անձնաց՝ անհամապատասխանությունների վերաբերյալ պարզաբանումներ և բացատրություններ ներկայացնելու պահանջով: Հայտարարագրերի վերլուծությունը հնարավորություն է տվել ամփոփելու օրենքի կիրարկման պրակտիկան և նախապատրաստելու առաջարկություններ տեղ գտած բացերի վերացման և հետագա զարգացման ուղղությամբ: Սակայն հանձնաժողովը չի հրապարակել վերլուծությունների արդյունքները, քանի որ օրենսդրությունը նման պահանջ չի ներկայացնում:

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե ՀԿ-ն (այսուհետ՝ ԽԱՊԿ) իրականացրել է Էթիկայի հանձնաժողովի ինտերնետային կայքի մշտադիտարկում: Մշտադիտարկման արդյունքները ներկայացվել են 2013թ. հոկտեմբերի 15-ին Երևանում, Մեդիա կենտրոնում (Սարյան 30) կազմակերպված մամուլի ասուլիսի ժամանակ: Ի հայտ է եկել հետևյալը.

- Էթիկայի հանձնաժողովի կայքում առկա են բարձրաստիճան պաշտոնատար անձանց կեսից պակասի հայտրարագրեր (2012թ. պետք է հրապարակվեր 660 պաշտոնյայի հայտարարագիր, որից միայն 322-ն է հրապարակվել),
- հասու չէին 89 պատգամավորի, բազմաթիվ նախարարների և փոխնախարարների, Սահմանադրական դատարանի նախագահի և 5 անդամի, այլ դատարանների բազմաթիվ դատավորների, գլխավոր դատախազի և նրա երեք տեղակալների, Էթիկայի հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի անդամներից մեկի հայտարարագրերը,
- հայտարարագրերի մի մասը թերի էր, պարունակում էին ոչ ճիշտ կամ նույնիսկ սխալ տեղեկատվություններ:

Այս հարցերը ԽԱՊԿ–ը հանձնաժողովի նախագահի հետ քննարկել է 2013թ. հուլիսի 15-ին կայացած հանդիպման ժամանակ: Հանձնաժողովի նախագահը հայտնել է, որ հանձնաժողովը հայտարարագրերը հանձնելու վերաբերյալ 100-ից ավելի հիշեցում է ուղարկել: Ըստ նրա հանձնաժողովը չունի բավարար լիազորություններ, որոնք թույլ կտան հայտարարագրեր չներկայացնելու, ոչ լիարժեք, ոչ ճիշտ կամ սխալ տեղեկատվություն ներկայացնելու դեպքում պատասխանատվության կանչել պետական պաշտոնյաներին: Պարոն Բաբայանը հայտարարել է, որ ոչ ճիշտ տեղեկատվություն ներկայացնելու համար պետական պաշտոնյաները պետք է պատասխանատվություն զգան ոչ թե իրենց ղեկավարների, այլ հանրության առաջ[3]:

### Ինչ ազդեցություն է ունեցել

2009թ., ստանձնելով պարտավորություն, որ «օրենսդրական փոփոխություններ կկատարի, որոնցով նպատակաուղղված խիստ պատժամիջոցներ կնախատեսվեն բարձրաստիճան պետական այն պաշտոնյաների նկատմամբ, որոնք ներգրավված են բիզնես գործառույթներում» ՀՀ կառավարությունն ընդունել է այն փաստը, որ պետական որոշ պաշտոնյաներ ներգրավված են բիզնեսում: Տարիների ընթացքում հայկական մամուլը հաստատել է այս խնդրի առկայությունը: Սակայն նախորդող



TOC

չորս տարիներին հայ հասարակությունն ականատես չի եղել բարձրաստիճան պետական պաշտոնյայի նկատմամբ բիզնեսով զբաղվելու համար քայլեր ձեռնարկելու որևէ փաստի: Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնը (այսուհետ՝ ԹԻՀԿԿ) նաև դիմումներ է հղել էթիկայի հանձնաժողովին՝ խնդրելով ուսումնասիրել այս հարցը՝ կապված որոշ պետական պաշտոնյաների հետ:

ԱՀՄ հետազոտողի կարծիքով այս պարտավորությունը մասամբ է կատարվել: Էթիկայի հանձնաժողովի կայքում հրապարակվել են բարձրաստիճան պետական ոչ բոլոր պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրերը (քանի որ, ըստ հանձնաժողովի անդամի կայքը վերակազմավորվում էր): ԱՀՄ հետազոտողի կարծիքով էթիկայի հանձնաժողովն ու ՀՀ կառավարությունը պետք ուսումնասիրեին 2012թ. բոլոր հայտարարագրերը էթիկայի հանձնաժողովի հին կայքում հրապարակելու հնարավորությունը, քանի դեռ մշակվում էր նորը: Դեռևս շատ վաղ է գնահատել բարձրաստիճան պետական պաշտոնյաների հայտարարագրերի հրապարակման ազդեցությունը:

### Հետագա քայլեր

ԱՀՄ հետազոտողի կարծիքով օրենսդրական պահանջի բացակայությունը պարտավորությունը չկատարելու բավարար հիմնավորում չէ: ՀՀ կառավարությունը կատարել է առաջին դժվար քայլը և հանրության համար հասանելի վայրում հրապարակել է բարձրաստիճան պետական պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրերը: Սակայն համաձայն ԽԱՊԿ-ի, ոչ բոլոր հայտարարագրերն են հասու: Լրացուցիչ աշխատանք է հարկավոր այս պարտավորության լիարժեք կատարումն ապահովելու համար: ԱՀՄ հետազոտողը գործողությունների հաջորդ ծրագրի համար հետևյալ առաջարկությունն է ներկայացնում.

- ՀՀ կառավարությունը պետք է ստանձնի օրենքով նախատեսված բարձրաստիճան պետական բոլոր պաշտոնյաների հայտարարագրերը հրապարակելու պարտավորություն և երաշխավորի, որ այդ հայտարարագրերի վերլուծությունը հասանելի է:
- Օրենսդրական փաստաթղթեր մշակի, որոնք հստակ պատասխանատվություն կսահմանեն հայտարարագրեր չհրապարակելու, սխալ կամ կեղծ տեղեկատվություն ներկայացնելու համար: Հայտարարագրերի հրապարակումն անիմաստ է, եթե բարձրաստիճան պետական պաշտոնյաները հաշվետվու չեն սխալ տեղեկատվություն հրապարակելու համար:
- Օրենսդրությունը պետք է երաշխավորի, որ բավարար տեղեկատվություն կլինի շահերի բախում պարունակող բոլոր իրավիճակների վերաբերյալ:

Այս պարտավորությունը ՔՀԿ-ների կողմից դիտվել է որպես կարևորագույններից մեկը: Ինչպես նշվել է վերևում, ԽԱՊԿ-ը մշտադիտարկում է իրականացրել այս պարտավորության կատարման նկատմամբ: ԹԻՀԿԿ-ը դիմել է բարձրաստիճան պետական պաշտոնյաների շահերի բախման իրավիճակները ստուգելու խնդրանքով և ստուգել հայտարարգրերում ներկայացված տեղեկատվության ճշտությունը: ԱՀՄ հետազոտողն այն կարծիքին է, որ ՀՀ կառավարությունը և միջազգային դոնոր հանրությունը պետք է օժանդակեն ՔՀԿ-ների մշտադիտարկման գործառույթին և միջոցներ տրամադրեն այն ՔՀԿ-ներին, որոնք մշտադիտարկում են իրականացնում ինտերնետային կայքում առկա հայտարարգրերի ՀՀ օրենսդրության հետ համապատասխանությունն ուսումնասիրելու նպատակով:

[1] 1 ԱՄՀ (Արժույթի միջազգային հիմնադրամ) երկրի վերաբերյալ հաշվետվություն N09/2014, 2009թ հուլիս, հավելված II. Հայաստան. Տնտեսական և ֆինանսական քաղաքականությունների մեմորանդում:

[2] ԱՀՄ հետազոտողն այս պարտավորության կատարումը քննարկել է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամ պարոն Արմեն Խուդավերդյանի հետ (2013թ հոկտեմբերի 10-11-ին կայացած հեռախոսային քննարկումներ և փոխանակված էլեկտրոնային հաղորդագրություններ):3 Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե ՀԿ. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի ինտերնետային կայքի (www.ethics.am) մշտադիտարկման փորձագիտական եզրակացություն 1 ԱՄՀ (Արժույթի միջազգային հիմնադրամ) երկրի վերաբերյալ հաշվետվություն N09/2014, 2009թ հուլիս, հավելված II. Հայաստան. Տնտեսական և ֆինանսական քաղաքականությունների մեմորանդում: 2 ԱՀՄ հետազոտողն այս պարտավորության կատարումը քննարկել է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամ պարոն Արմեն Խուդավերդյանի հետ (2013թ հոկտեմբերի 10-11-ին կայացած հեռախոսային քննարկումներ և փոխանակված էլեկտրոնային հաղորդագրություններ):

[3] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե ՀԿ. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի ինտերնետային կայքի (www.ethics.am) մշտադիտարկման փորձագիտական եզրակացություն

TOC

## 2.1.բ. Պաշտոնական ինտերնետային կայքերի բովանդակության ստանդարտացում

Պաշտոնական ինտերնետային կայքերի բովանդակության ստանդարտացում: Գործընթացն ուղղված է լինելու պետական ինտերնետային կայքերի միասնական կառուցվածքի, պետական կայքերում անհրաժեշտ տեղեկությունների հրապարակման և թիրախային խմբերի համար կայքերի արդյունավետ կիրառելիության ապահովմանը: Ստանդարտացման միասնական չափանիշները նաև կապահովեն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների հրապարակումը, ինչպես օրինակ բյուջեն, բյուջեի կատարման հաշվետվությունները, բյուջեի հետ կապված տվյալները համապատասխան ձևաչափերով ներկայացնելը, որն առավել լայն հնարավորություն կտա համապարփակ վերլուծություն իրականացնել:

### Պարտավորության նկարագրություն

| | | |
|---|---|---|
| **Պատասխանատվու-թյուն** | **Հիմնական հաստատությունը** | Տրանսպորտի և կապի նախարարություն |
| | **Աջակցող հաստատությունը** | Չկա |
| | **Կոնտակտը նշված է** | Ոչ |
| **Կոնկրետությունը և չափելիությունը** | | Բարձր (պարտավորության ձևակերպումը տալիս է հստակ, չափելի, ստուգելի չափորոշիչ, որի օգնու-թյամբ կարելի է գնահատել նպատակին հասնելը) |
| **Համապատասխանու-թյուն** | **ԲԿԳ հիմնական մարտահրավերները** | Հանրային վստահության բարելավում |

| **ԲԿԳ արժեքները** | | | | |
|---|---|---|---|---|
| **Տեղեկատվության հասանելիություն** | **Հանրային մասնակցություն** | **Հաշվետվողականու-թյուն** | **Տեխնոլոգիաներ և նորարարություն** | **Ոչ մեկը** |
| ✗ | | ✗ | ✗ | |

### Հավակնոտությունը

| **Նոր, թե գոյություն ունեցող** | **Հնարավոր ազդեցությունը** |
|---|---|
| Գոյություն ունեցող | Չափավոր (պարտավորությունը համապատասխան քաղաքականության ոլորտում խոշոր քայլ է, սակայն չափի և խորության տեսանկյունից մնում է սահմանափակ) |

### Կատարման աստիճանը

| **Սկսելու օրը** | **Ավարտելու օրը** | | Չսկսված | Սահմանափակ չափով կատարված | Զգալի չափով կատարված | Կատարված |
|---|---|---|---|---|---|---|
| 1 հունվարի, 2011թ. | 31 դեկտեմբերի, 2013թ. | Իրական կատարում | | ▼ | | |
| | | Կանխատեսված կատարում | | | ▲ | |

### Հետագա քայլերը

Պահպանել պարտավորությունը և դիտարկել դրա կատարումը

TOC

## Ի՞նչ է տեղի ունեցել

Այս խնդիրը ՀՀ կառավարության օրակարգում է 2011թ. ի վեր[1]: ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը հանձնարարվել է մշակել և ՀՀ կառավարություն ներկայացնել «Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Այս որոշման անհրաժեշտությունը բխում էր ՀՀ Նախագահի կարգադրությունից[2]:

2012թ.՝ ի պատասխան իր հարցման, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն (այսուհետ՝ ԻԱԿ) ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից տեղեկացվել է, որ նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը[3]: Համաձայն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի կապի և տեղեկատվայնացման վարչության հաշվետվության «Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը լրամշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել 2012թ. երրորդ եռամսյակում[4]: Ի պատասխան ԱՀՄ փորձագետի նամակի ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալը հայտնել է, որ որոշման նախագծի վերջնական տարբերակը ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը[5]:

## Ի՞նչ ազդեցություն է ունեցել

Այս պարտավորության կատարումը գտնվել է մի շարք ՀԿ-ների ուշադրության կենտրոնում (մասնավորապես՝ ԻԱԿ-ի և ԽԱՊԿ-ի):

ՀՀ կառավարության որոշման նախագիծն արդեն երկու տարի է գտնվում է քննարկման փուլում, սակայն որոշում չի դառնում: Այս ժամանակահատվածում մի շարք նախարարություններ ու գերատեսչություններ վերակազմավորել են իրենց ինտերնետային կայքերը՝ առանց ունենալու ՀՀ կառավարության կողմից սահմանված որևէ հստակ չափորոշիչ (օրինակ, ՀՀ ֆինանսների նախարարությունը վերակառուցել է իր ինտերնետային կայքը 2013թ. հոկտեմբերի վերջին): Պետական տարբեր մարմինների, նախարարությունների ու գերատեսչությունների ինտերնետային կայքերն ունեն տարբեր կառուցվածք և տարբեր բովանդակություն, ինչը դժվարացնում է կառավարական տարբեր կայքեր այցելող մարդկանց տեղեկատվություն գտնելու աշխատանքը:

Ինքնագնահատման զեկույցում նշվում է, որ նախագիծը քննարկվել է գործադիր մարմինների և տեխնիկական մասնագետների հետ: Սակայն չի նշվում, թե արդյո՞ք նախագիծը քննարկվել է քաղաքացիական հասարակության կառույցների և վերլուծաբանների հետ, որոնք հաճախ տեղեկատվություն են փնտրում պետական տարբեր մարմինների ինտերնետային կայքերում:

## Հետագա քայլեր

ԱՀՄ հետազոտողի կարծիքով ՀՀ կառավարությունը պետք է այս պարտավորությունը ներառի գործողությունների հաջորդ ծրագրում և աշխատի այն կատարել: ՀՀ կառավարությունը պետք է հրապարակի հանրության հետ իր քննարկումների արդյունքները՝ մասնավորեցնելով, թե ինչ մեկնաբանություններ և առաջարկություններ է ստացել, ով է դրանք ներկայացրել, ինչպիսին է ՀՀ կառավարության կարծիքը մեկնաբանություններից և առաջարկություններից յուրաքանչյուրի վերաբերյալ և նշի այն առաջարկությունները, որոնք ՀՀ կառավարությունը ներառել է որոշման մեջ:

TOC

[1] ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվական գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 111-Ն որոշում, հավելված 1-ի կետ 54

[2] Հայաստանի Հանրապետության Նախագահի 2009 թվականի հունիսի 97-ի «Հայաստանի Հանրապետության տեղեկատվության անվտանգության հայեցակարգը հաստատելումասին» ՆԿ-97-Ն կարգադրություն

[3] ԻԱԿ-ի 2012թ հունիսի 6-ի նամակը

[4] 2012թ երրորդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի կապի և տեղեկատվայնացման վարչության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն

[5] ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալի 2013թ հոկտեմբերի 10-ի N 04/11.2/11941-13 գրությունը

## 2.1.գ. Տեղեկատվության ազատության վերաբերյալ պետական ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավում

Տեղեկատվության ազատության վերաբերյալ պետական ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավում: Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցելով՝ քաղաքացիական և համայնքային ծառայողների համար պարբերաբար կկազմակերպվեն դասընթացներ: Այս դասընթացները հանրային ծառայողներին կօգնեն բաց և հաշվետու աշխատել հանրության հետ, ինչպես նաև պատշաճ կերպով մշակել և արձագանքել տեղեկատվություն ստանալու հարցումներին:

### Պարտավորության նկարագրություն

| | | |
|---|---|---|
| Պատասխանատվու-թյուն | **Հիմնական հաստատությունը** | Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ |
| | **Աջակցող հաստատությունը** | Տարածքային կառավարման նախարարություն, Քաղաքացիական ծառայության խորհուրդ, |
| | **Կոնտակտը նշված է** | Ոչ |
| **Կոնկրետությունը և չափելիությունը** | | Բարձր (պարտավորության ձևակերպումը տալիս է հստակ, չափելի, ստուգելի չափորոշիչ, որի օգնությամբ կարելի է գնահատել նպատակին հասնելը) |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Համապատասխանու-թյուն | **ԲԿԳ հիմնական մարտահրավերները** | Հանրային վստահության բարելավում | | | |
| | **ԲԿԳ արժեքները** | | | | |
| | **Տեղեկատվության հասանելիություն** | **Հանրային մասնակցություն** | **Հաշվետվողականու-թյուն** | **Տեխնոլոգիաներ և նորարարություն** | **Ոչ մեկը** |
| | | | ✗ | | |

### Հավակնոտությունը

| **Նոր, թե՞ գոյություն ունեցող** | **Հնարավոր ազդեցությունը** |
|---|---|
| Գոյություն ունեցող | Չափավոր (պարտավորությունը համապատասխան քաղաքականության ոլորտում խոշոր քայլ է, սակայն չափի և խորության տեսանկյունից մնում է սահմանափակ) |

### Կատարման աստիճանը

| **Սկսելու օրը** | **Ավարտելու օրը** | | Չսկսված | Սահմանափակ չափով կատարված | Զգալի չափով կատարված | Կատարված |
|---|---|---|---|---|---|---|
| 1 հունվարի, 2011թ. | 1 դեկտեմբերի, 2012թ. | Իրական կատարում | | | | ✓ |
| | | Կանխատեսված կատարում | | | | ✓ |

### Հետագա քայլերը

Պահպանել պարտավորությունը և դիտարկել դրա կատարումը



TOC

## Ինչ է տեղի ունեցել

2003-2013թթ. ընթացքում Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ն (այսուհետ՝ ԻԱԿ) համագործակցել է ՀՀ կառավարության հետ, որի շրջանակներում 2843 պաշտոնյա անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ է ստացել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ[1]: 2010թ. ԻԱԿ-ը հիմնադրել է «Տեղեկատվության ազատության ոչ ֆորմալ կրթական կենտրոն»: Կենտրոնի նպատակն է քաղաքացիական և համայնքային ծառայողներին անհրաժեշտ գիտելիքներ տալ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կիրարկման պրակտիկայի, տեղեկատվության էլեկտրոնային կառավարման և պաշտոնյաներին ներկայացվող էթիկական պահանջների վերաբերյալ: Կենտրոնի ստեղծումից ի վեր բազմաթիվ քաղաքացիական ծառայողներ վերապատրաստում են անցել.

- 2011թ. կրթական կենտրոնում վերապատրաստում է անցել 301 քաղաքացիական ծառայող:
- ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ համագործակցության արդյունքում 2011-2012թթ. ընթացքում կրթական կենտրոնում վերապատրաստվել է 400 համայնքային ծառայող:
- 2013թ. մայիսի 13-30-ին կրթական կենտրոնը ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի հետ համատեղ մշակված ուսումնական ծրագրերով վերապատրաստման դասընթացներ է կազմակերպել տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի պատասխանատու 78 քաղծառայողի համար:

Տարբեր դասընթացների կազմակերպման համար ԻԱԿ-ն օժանդակություն է ստացել Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակից և ԱՄՆ ՄԶԳ-ից:

## Ինչ ազդեցություն է ունեցել

Պետական տարբեր մակարդակների պաշտոնյաների համար ԻԱԿ-ի կազմակերպած դասընթացները կարևոր դեր են կատարում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից լրատվամիջոցներին, կազմակերպություններին և անհատ քաղաքացիներին տեղեկատվության տրամադրման աշխատանքները պատշաճ կերպով և ժամանակին կազմակերպելու գործում: Յուրաքանչյուր կազմակերպություն կարող է հարցով դիմել պետական ցանկացած մարմնի և պետական մարմինը պարտավոր է հարցին պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի պահանջներին համապատասխան: ԻԱԿ-ի վերապատրաստման դասընթացները պաշտոնյաներին օգնում են հասկանալու, թե լրատվամիջոցներից, կազմակերպություններից և անհատներից ստացված գրություններին ինչպես պատասխանեն օրենսդրության պահանջներին համապատասխան:

Իր հավակնոտ ծրագրերի իրականացման համար ԻԱԿ-ին հաջողվել է համաձայնության գալ պետական տարբեր մարմինների հետ և համոզել այդ մարմինների ղեկավարներին, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի իմացությունը կօգնի պետական մարմիններին ավելի արդյունավետ կերպով համագործակցել լրատվամիջոցների և հասարակության հետ:

2003թ. ի վեր ԻԱԿ-ը սահմանել է ամենամյա «Ոսկե բանալի» և «Ժանգոտ կողպեք» մրցանակներ: Դրանք շնորհում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև մասնավոր և այլ ընկերությունների ղեկավարներին, պայմանավորված նրանով, թե ինչքանով է պետական և ոչ պետական կառույցների գործունեությունը եղել բաց կամ փակ:

TOC

## Հետագա քայլեր

ԻԱԿ-ը կարևոր աշխատանք է կատարում, ինչի արդյունքում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կառույցների ղեկավարներն ու աշխատակիցները սովորում են հարգել և կատարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջները: Այս պարտավորությունը կառավարության և ՔՀԿ-ների համագործակցության լավ օրինակ է: ԱՀՄ-ի փորձագետը կարծում է, որ պետք է շարունակել ՀՀ կառավարություն-ԻԱԿ համագործակցությունը, յուրաքանչյուր տարի նշելով, թե քաղաքացիական և համայնքային քանի ծառայող պետք է անցնի վերապատրաստման դասընթացներ և անհրաժեշտ միջոցներ հատկացնելով: Այս հաջողված օրինակի հիման վրա ՀՀ կառավարությունը կարող է մշակել ՔՀԿ-ների հետ համագործակցության այլ ծրագրեր, որոնք կնպաստեն կառավարության ունեցած տեղեկատվության հասանելիությունը, հաշվետվողականությունը և ՀՀ կառավարություն-հասարակություն համագործակցությունը բարելավելուն:

[1] http://www.foi.am/en/trainings-overview/

TOC

## 2.2 Հարկային վարչարարության գործընթացներում թափանցիկության և օբյեկտիվության խթանում

Մինչև 2013 թ.-ի ավարտը ծրագրված է հարկային վարչարարությունում բարեփոխել մասնագիտական էթիկայի կանոնները և պատասխանատվությունները, ներկայացնել հարկային վարչարարության ծառայությունների շրջանակներում մասնագիտական վարքագծի վերահսկողության և շահերի բախման կառավարման համակարգը: Նաև նախատեսված է ամբողջությամբ անցնել առցանց համակարգով գործընթացին, ինչը նշանակում է, որ հարկատուների առնվազն 90%-ի հաշվետվությունները պետք է մշակվեն առցանց: Հասարակության իրազեկությունը բարձրացնելու և հաճախորդների սպասարկումը բարելավելու նպատակով կստեղծվի հաճախորդների սպասարկման և տեղեկատվության կենտրոն: Մինչև 2013 թ.-ի ավարտը նախատեսված է ելակետային տվյալների համեմատ 15%-ով մեծացնել սպասարկման ծառայություններից օգտվող հաճախորդների թիվը: Հարկատուների համար համապատասխան ուղեցույցները հասանելի կլինեն առցանց և պարբերաբար կթարմացվեն:

<table>
<tr><th colspan="6">Պարտավորության նկարագրություն</th></tr>
<tr><td rowspan="3">Պատասխանատվու-թյուն</td><td>Հիմնական հաստատությունը</td><td colspan="4">Պետական եկամուտների կոմիտե</td></tr>
<tr><td>Աջակցող հաստատությունը</td><td colspan="4">Համաշխարհային բանկ, ԱՄՆ ՄԶԳ</td></tr>
<tr><td>Կոնտակտը նշված է</td><td colspan="4">Ոչ</td></tr>
<tr><td colspan="2">Կոնկրետությունը և չափելիությունը</td><td colspan="4">Միջին (պարտավորության ձևակերպումը նկարագրում է միջոցառում, որի իրականացումն օբյեկտիվորեն կարելի է ստուգել, սակայն չի պարունակում կոնկրետ ժամկետներ և արդյունքներ)</td></tr>
<tr><td rowspan="4">Համապատասխանու-թյուն</td><td>ԲԿԳ հիմնական մարտահրավերները</td><td colspan="4">Հանրային ծառայությունների բարելավում</td></tr>
<tr><td colspan="5">ԲԿԳ արժեքները</td></tr>
<tr><td>Տեղեկատվության հասանելիություն</td><td>Հանրային մասնակցություն</td><td>Հաշվետվողականու-թյուն</td><td>Տեխնոլոգիաներ և նորարարություն</td><td>Ոչ մեկը</td></tr>
<tr><td></td><td></td><td>✗</td><td></td><td></td></tr>
</table>

<table>
<tr><th colspan="2">Հավակնոտությունը</th></tr>
<tr><td>Նոր, թե գոյություն ունեցող<br>Գոյություն ունեցող</td><td>Հնարավոր ազդեցությունը<br>Փոքր (բայց դրական քայլ է համապատասխան քաղաքականության ոլորտում)</td></tr>
</table>

TOC

## Կատարման աստիճանը

| Սկսելու օրը | Ավարտելու օրը | Իրական կատարում / Կանխատեսված կատարում | Չսկսած | Սահմանափակ չափով կատարված | Զգալի չափով կատարված | Կատարված |
|---|---|---|---|---|---|---|
| 18 մայիսի, 2011թ. | 31 դեկտեմբերի, 2013թ. | Իրական կատարում<br>Կանխատեսված կատարում | | | | |

## Հետագա քայլերը

Գոյություն ունեցող պարտավորության հիման վրա ձևակերպել նոր պարտավորություն

### Ինչ է տեղի ունեցել

Հարկային ծառայության աշխատակիցների էթիկայի և վարքագծի հետ կապված հարցը կարգավորելու համար Հայաստանի օրենսդիր և գործադիր իշխանությունները մի շարք փաստաթղթեր են հաստատել, մասնավորապես՝ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքը[1], ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատված Մասնագիտական էթիկայի կանոնները[2]: 2013 թվականին ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՊԵԿ) նախագահը հաստատել է հարկային ծառայության էթիկայի և վարքագծի կանոնների վերաբերյալ ձեռնարկը[3]: ՊԵԿ նախագահը նաև հիմնել է ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողով[4]: Այս հաշվետվությունը գրելու պահին ծառայողական քննության անցկացման կարգը հաստատող հրամանի նախագիծը քննարկման փուլում էր:

ՊԵԿ-ը 2011թ. սկսել է սպասարկման կենտրոններ հիմնել[5]: Այս հաշվետվությունը գրելու պահին Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Եղեգնաձորում և Սևանում գործում էր սպասարկման 14 կենտրոն: ՊԵԿ-ը չունի իր ծառայություններից օգտվողների թիվը հաշվառող համակարգ: Սակայն հեռախոսազանգերի սպասարկման կենտրոնի կողմից ստացված դիմումների վերաբերյալ տեղեկատվությունը հասու է ՊԵԿ-ի ինտերնետային կայքից[6]:

Համաձայն առկա տեղեկատվության Վանաձորի սպասարկման կենտրոնի կողմից 2013թ. ապրիլ և մայիս ամիսներին այցելուներին տրամադրված պարզաբանումների քանակը նախորդ տարվա նույն ամիսների համեմատ ավելացել է ավելի քան 15 տոկոսով:

Առցանց հաշվետվություններ ներկայացնող հարկատուների թիվն աստիճանաբար ավելացել է: ՊԵԿ-ից ստացված տեղեկատվության համաձայն 2013թ. երրորդ եռամսյակում առցանց հաշվետվություն ներկայացնող հարկատուների տեսակարար կշիռը կազմել է հարկատուների ընդհանուր թվի 81.3 տոկոսը՝ առաջին եռամսյակի 45.2 տոկոսի և երկրորդ եռամսյակի 70.8 տոկոսի համեմատ:

### Ինչ ազդեցություն է ունեցել

Այս պարտավորությունը մի շարք ՔՀԿ-ների կողմից դիտվել է որպես կարևորներից մեկը: Սակայն ժամանակ է հարկավոր էթիկայի և վարքագծի վերաբերյալ նոր կանոնների ազդեցությունը գնահատելու համար: Սպասարկման կետերի և առցանց եղանակով հաշվետվությունների ներկայացման պտուղներն արդեն տեսանելի են, քանի որ ավելի շատ հարկատուներ են առցանց գործիքն օգտագործում իրենց հաշվետվությունները ներկայացնելու համար:

### Հետագա քայլեր

ԱՀՄ հետազոտողն այն կարծիքին է, որ ՀՀ կառավարությունը կարող է հարկային վարչարարության գործընթացներում թափանցիկության և օբյեկտիվության խթանման հետ կապված ավելի հավակնոտ պարտավորություններ ստանձնել: ԱՀՄ հետազոտողն առաջարկում է այս պարտավորության հիման վրա ձևակերպել նոր պարտավորություն:

TOC

[1] «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-407), ընդունվել է 2002 թվականի հուլիսի 3
[2] ՀՀ կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 10-ի «Հարկային ծառայողի վարքագծի կանոնները հաստատելու մասին» N1624-Ն որոշումը:
[3] ՊԵԿ նախագահի 2013 թվականի մայիսի 14-ի N214-Ա հրաման:
[4] ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 20.09.2013թ.-ի «ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային ծառայության մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.02.2012թ. №100-Ա հրամանի 1-ին և 3-րդ կետերն ուժը կորցրած ճանաչելու մասին» №404-Ա հրամանը
[5] Հետևյալ լինքերը տեղեկատվություն են պարունակում վերջին 2-3 տարիներին նոր սպասարկման կետերի բացման վերաբերյալ.
http://www.taxservice.am/MD_News.aspx?ntname=MDOfficialNews&nid=97; http://www.taxservice.am/MD_News.aspx?ntname=MDOfficialNews&nid=1087; http://www.taxservice.am/MD_News.aspx?ntname=MDOfficialNews&nid=1004; http://www.taxservice.am/MD_News.aspx?ntname=MDOfficialNews&nid=1000; http://www.taxservice.am/MD_News.aspx?ntname=MDOfficialNews&nid=959; http://www.taxservice.am/MD_News.aspx?ntname=MDOfficialNews&nid=96; http://www.taxservice.am/MD_News.aspx?ntname=MDOfficialNews&nid=877; http://www.taxservice.am/MD_News.aspx?nid=1099
[6] http://taxservice.am/Content.aspx?itn=TICallCenter/

## 2.3. Կոռուպցիայի դեմ պայքար

Կոռուպցիայի և ինստիտուցիոնալիզացված կաշառակերության դեմ իրավապահ մարմինների և քաղաքացիական հասարակության միջև արդյունավետ համագործակցությունը խթանելու նպատակով, կառավարությունը կանոնավոր կերպով հասարակական կազմակերպությունների հետ կքննարկի կոռուպցիայի մակարդակի և ծավալների, ինչպես նաև մոնիտորինգային և հետազոտական ծրագրերի արդյունքները: Հիմնվելով այդ քննարկումների վրա՝ կառավարությունը կկատարի անհրաժեշտ ուղղումներ իր կողմից իրականացվող հակակոռուպցիոն քաղաքականության ձևակերպման և իրականացման մեջ:

Կառավարության կառուցվածքում կստեղծվի ստորաբաժանում (Քարտուղարություն), որը կաջակցի Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին և նրան առընթեր Մոնիտորինգային հանձնաժողովին՝ արդյունավետ կերպով իրականացնելու իրենց գործառույթները: Քարտուղարությունը նաև կնպաստի պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցությանը:

**Պարտավորության նկարագրություն**

| | | |
|---|---|---|
| **Պատասխանատվություն** | **Հիմնական հաստատությունը** | Պարզ չէ |
| | **Աջակցող հաստատությունը** | Պարզ չէ |
| | **Կոնտակտը նշված է** | Ոչ |
| **Կոնկրետությունը և չափելիությունը** | | Միջին (պարտավորության ձևակերպումը նկարագրում է միջոցառում, որի իրականացումն օբյեկտիվորեն կարելի է ստուգել, սակայն չի պարունակում կոնկրետ ժամկետներ և արդյունքներ) |
| **Համապատասխանություն** | **ԲԿԳ հիմնական մարտահրավերները** | Հանրային վստահության բարելավում |

**ԲԿԳ արժեքները**

| Տեղեկատվության հասանելիություն | Հանրային մասնակցություն | Հաշվետվողականություն | Տեխնոլոգիաներ և նորարարություն | Ոչ մեկը |
|---|---|---|---|---|
| | ✗ | ✗ | | |

**Հավակնոտությունը**

| **Նոր, թե՞ գոյություն ունեցող** | **Հնարավոր ազդեցությունը** |
|---|---|
| Գոյություն ունեցող | Փոքր (բայց դրական քայլ է համապատասխան քաղաքականության ոլորտում) |

TOC

## Կատարման աստիճանը

| Սկսելու օրը | Ավարտելու օրը | Իրական կատարում / Կանխատեսված կատարում | Չսկսած | Սահմանափակ չափով կատարված | Զգալի չափով կատարված | Կատարված |
|---|---|---|---|---|---|---|
| Պարզ չէ | 31 դեկտեմբերի, 2012թ. | | | ▼ | | ▲ |

## Հետագա քայլերը

Հետագա քայլեր ներդրման ուղղությամբ

### Ինչ է տեղի ունեցել

Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը ղեկավարվում է վարչապետի կողմից: Առկա հանրային տեղեկատվության համաձայն վերջին անգամ խորհրդի նիստ տեղի է ունեցել 2012թ. դեկտեմբերին, երբ քննարկվել է 2009-2012թթ. ռազմավարության կատարման հաշվետվությունը: Կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանն անցումային փուլում է: Նախորդ ռազմավարության ներդրման ժամկետն ավարտվել է և կառավարությունը դիտարկում է հետագա քայլերի այլընտրանքները: Դիտարկվող տարբերակների թվում են ընդգրկուն ռազմավարական փաստաթղթի որդեգրումը (ինչպես նախորդ ռազմավարությունը) կամ ոլորտային ռազմավարությունների հաստատումը, որոնք կանդրադառնան առանձին այնպիսի ոլորտներում կոռուպցիայի հաղթահարմանը, ինչպիսիք են արդարադատությունը, առողջապահությունը և կրթությունը: Ընդգրկուն ռազմավարության հաստատումը կպահանջի լրացուցիչ կարողություններ: Մյուս մոտեցումը Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի երկրների (GRECO), ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցի և ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայից (UNCAC) ստացված առաջարկությունների հիման վրա գործողությունների ծրագրի մշակումն է:

Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ տեղեկատվության պակաս կա: ՀՀ կառավարության ինտերնետային կայքում (www.gov.am) կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ վերջին տեղեկատվությունը 2011թ. առաջին կիսամյակի վերաբերյալ հաշվետվությունն է:

Մոնիտորինգային հանձնաժողովի նախագահը Հայաստանի Հանրապետության Նախագահի օգնականն է: Պարզ չէ, թե ինչ պարբերականությամբ են կայանում հանձնաժողովի նիստերը, որտեղ և երբ: ԹԻՀԿԿ-ի ներկայացուցիչները ԱՀՄ հետազոտողին հայտնել են, որ իրենք վերջին անգամ 2010թ. հուլիսին են հրավեր  ստացել և մասնակցել  հանձնաժողովի նիստին: Այդ ժամանակից ի վեր ԹԻՀԿԿ-ը չի ստացել հանձնաժողովի նիստերի վերաբերյալ որևէ ծանուցում: Հաշվի առնելով կոռուպցիայի դեմ պայքարի բնագավառում ԹԻՀԿԿ-ի Հայաստանում և աշխարհում  ունեցած դերն ու հեղինակությունը, այս փաստն անհանգստացնում է:

Չկա որևէ վկայություն այն մասին, որ խորհուրդը կամ հանձնաժողովը քննարկումներ են ունեցել ՔՀԿ-ների հետ կամ ճշգրտումներ կատարել իրենց կողմից իրականացվող հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և իրականացման գործում:

Պնդումներ կան, որ մոնիտորինգային հանձնաժողովը չի աշխատում[1]: Վերջին ամենաթարմ տեղեկատվությունը, որ ԱՀՄ հետազոտողը կարողացել է գտնել, վերաբերել է 2010թ. հոկտեմբերի 12-ին[2], երբ հանձնաժողովի նախագահը զեկուցել է հանձնողովի գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (մասնավորապես, նախատեսվում էր փոփոխության ենթարկել մոնիտորինգային հանձնաժողովի կառուցվածքը):

ԱՀՄ հետազոտողի կարծիքով ՀՀ կառավարությունը պետք է ձևավորի

TOC

քարտուղարություն, որը կաջակցի կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին և նրան առընթեր մոնիտորինգային հանձնաժողովին և կօգնի արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնել, ինչպես նախատեսված է կառավարության հակակոռուպցիոն ռազմավարությամբ[3]: Սակայն 2013թ. հունիսի դրությամբ ՀՀ կառավարության կողմից այդ քարտուղարությունն ստեղծելու որևէ փաստ չկա (կառավարությունը 2013թ. դեկտեմբերին ստեղծել է նման մի մարմին, չնայած որ դա պահանջվում էր 2009-2012թթ. ռազմավարությամբ):

### Ի՞նչ ազդեցություն է ունեցել

Կոռուպցիայի դեմ պայքարում լուրջ միջոցառումների սակավությունը բացասական ազդեցություն է ունեցել, քանի որ գործողությունների բացակայության հետևանքներն ակնհայտ են ամենօրյա կյանքում և վկայակոչվում են միջազգային կազմակերպությունների հաշվետվություններում: 2010թ. հրապարակված ԱՄՀ հաշվետվության մեջ ասվում էր. «գործարարների մեծամասնությունը նշում է, որ կոռուպցիան, ֆինանսների անհասանելիությունը, ինչպես նաև հանցագործությունները, գողությունները և ապօրինությունները վերջին շրջանում Հայաստանում դարձել են մտահոգության հիմնական առարկա»[4]: Թրանսփարենսի ինթերնեշնլի կոռուպցիայի ընկալման համաթիվը (corruption perception index) նույնպես վկայում է, որ 2008թ. ի վեր Հայաստանում կոռուպցիայի ընկալման էական փոփոխություն է տեղի ունեցել (վերջին 9 տարիների կոռուպցիայի ընկալման համաթվի տվյալները ներկայացված են ստորև բերված աղյուսակում)[5]: 2007թ. ի վեր կոռուպցիայի ընկալման համաթիվը 3.0-ից նվազելով՝ 2011թ. դարձել է 2.6 (համաթվի ավելի մեծ արժեքը նշանակում է ավելի քիչ կոռուպցիա, իսկ առավելագույն մեծությունը 10-ն է):

**Թրանսփարենսի ինթերնեշնլի Կոռուպցիայի ընկալման համաթվի փոփոխությունները Հայաստանում 2003-2011 թվականներին**

| Տարի | 2003 | 2004 | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2010 | 2011 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հայաստան | 3.0 | 3.1 | 2.9 | 2.9 | 3.0 | 2.9 | 2.7 | 2.6 | 2.6 |

Աղբյուր. Թրանսփարենսի ինթերնեշնլի կոռուպցիայի ընկալման համաթվի վերաբերյալ տարբեր տարիների հաշվետվություններ:

Նշում. Համաթիվը գնահատվում է 1-10 միավորների միջոցով, որոնցից 1 նշանակում է առավել կոռումպացված, իսկ 10-ը՝ նվազագույն:

### Հետագա քայլեր

ԱՀՄ հետազոտողի կարծիքով ՀՀ կառավարությունը կարող է լուրջ քայլեր ձեռնարկել կոռուպցիայի դեմ պայքարում: Կոռուպցիայի դեմ պայքարը կարող է և պետք է լինի շարունակական, ինչպես նշվել է ինքնագնահատման հաշվետվության մեջ: ԱՀՄ հետազոտողի կարծիքով կոռուպցիայի դեմ պայքարը կարող է լինել շարունակական, սակայն կոռուպցիայի դեմ պայքարին վերաբերող յուրաքանչյուր միջոցառում պետք է ունենա հստակ ժամանակացույց և նպատակներ: ԱՀՄ հետազոտողն առաջարկում է այս պարտավորության նորացված տարբերակը ներառել գործողությունների հաջորդ ծրագրում, որը կունենա նոր բաղադրիչներ, որոնց համաձայն հստակորեն ձևակերպված կլինեն հակակոռուպցիոն միջոցառումները՝ որոշակի ժամկետներով և նպատակներով: Պարտավորության մեջ պետք է նշվի միջոցառման համար պատասխանատու պետական պաշտոնյան, ով բավարար լիազորություններ կունենա պարտավորության կատարման համար:

TOC

TOC

[1] «Առավոտ» օրաթերթ, 2012թ. նոյեմբերի 2 http://www.aravot.am/2012/11/02/310441/

[2] http://www.panarmenian.net/arm/news/55128/

[3] ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի N 1272-Ն որոշում (Հավելված 1-ի կետ 64)

[4] ԱՄՀ երկրի վերաբերյալ 2010 թվականի նոյեմբերի 12-ի No 350 հաշվետվություն:

[5] 2012թ. Թրանսփարենսի ինթենեշնլը փոփոխության է ենթարկել գնահատման մեխանիզմը: Համաձայն Թրանսփարենսի ինթենեշնլի մինչև 2012թ. կոռուպցիայի ընկալման համաթվերը որոշվում էին ոչ միայն տվյալ երկրում կոռուպցիայի ընկալմամբ, այլ նաև այլ երկրներում կոռուպցիայի ընկալումների համատեքստում:

# V | Ինքնագնահատման զեկույց

## ՀՀ կառավարության գործողությունների ծրագրի պարտավորությունները չունեն հստակ ձևակերպված ժամանակացույցեր, ինչն իր ազդեցությունն է թողել ինքնագնահատման հաշվետվության վրա:

ՀՀ կառավարությունը ինքնագնահատման զեկույցը հրապարակել է 2013թ. հոկտեմբերի 1-ին: www.ogp.am կայքում տեղադրված տեքստում չէր նշվում, որ դա ինքնագնահատման հաշվետվության նախագիծն է և հանրությանը չէր առաջարկվում կարծիքներ ներկայացնել: 2013թ. հոկտեմբերի 17-ին պետաիրավական նախարարական կոմիտեն հաստատել է հաշվետվությունը: Դրանում նշվում է մի քանի ՔՀԿ-ների՝ ԻԱԿ, լրագրողների «Ասպարեզ» ակումբ և ԹԻՀԿԿ, ներգրավվածության մասին: Սակայն հաշվետվությունում չի նշվել հանրության լայն շրջանակների հետ քննարկումների մասին: Հաշվետվությունն օգտագործել է յուրաքանչյուր պարտավորության գծով առաջընթացի գնահատման այլ չափորոշիչ. «կատարված», «իրականացման փուլում գտնվող» և «շարունակական աշխատանքներ ենթադրող»:

Կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունները կարող են լինել շարունակական, սակայն յուրաքանչյուր քաղաքականության շրջանակներում իրականացվող առանձին միջոցառումները պետք է ունենան սկիզբ և ավարտ: ԱՀՄ հետազոտողն այն կարծիքին է, որ ՀՀ կառավարության կողմից ԲԿԳ շրջանակներում ստանձնած պարտավորությունները քաղաքականություն չեն, այլ ավելի շատ կոնկրետ միջոցառումներ են, և որոնց կատարման համար սահմանված հստակ ժամկետները բացակայում են:

### Աղյուսակ 2. Ինքնագնահատման ստուգման թերթիկ

| | Այո | Ոչ |
|---|---|---|
| Արդյո՞ք տարեկան առաջընթացի հաշվետվությունը հրապարակվել է: | ☒ | ☐ |
| Արդյո՞ք հաշվետվությունը հրապարակվել է համաձայն ժամանակացույցի: | ☐ | ☒ |
| Արդյո՞ք հաշվետվությունն առկա է մայրենի լեզվով: | ☒ | ☐ |
| Ըստ շահառուների արդյո՞ք հաշվետվությունը արտացոլում կամ բխում է իրական վիճակից: | ☐ | ☒ |
| Արդյո՞ք առկա է հաշվետվության անգլերեն օրինակը: | ☒ | ☐ |
| Արդյո՞ք կառավարությունը երկու շաբաթ ժամանակ է տրամադրել ինքնագնահատման հաշվետվության վերաբերյալ մեկնաբանություններ ներկայացնելու համար: | ☐ | ☒ |
| Արդյո՞ք հանրությունից ստացվել են մեկնաբանություններ: | ☐ | ☒ |

TOC

| | |
|---|---|
| Արդյո՞ք հաշվետվությունը տեղակայվել է ԲԿԳ կայքում : | ☒ Այո ☐ Ոչ |
| Արդյո՞ք ինքնագնահատման հաշվետությունը ներկայացնում է խորհրդակցությունների գործընթացը: | ☐ Այո ☒ Ոչ |
| Արդյո՞ք հաշվետվությունն անդրադարձել է բոլոր պարտավորություններին: | ☒ Այո ☐ Ոչ |
| Արդյո՞ք այն գնահատել է պարտավորությունների կատարումն ըստ ժամանակացույցի | ☐ Այո ☒ Ոչ |
| Արդյո՞ք հաշվետվությունը վերահաստատել է հավատարմությունը բաց գործունեությանը | ☒ Այո ☐ Ոչ |
| Արդյո՞ք հաշվետվությունը ներկայացնում է գործողությունների ծրագրի կապը հիմնական մարտահրավերների հետ: | Պարզ չէ[1] |

1 Այն դեպքում, երբ ՀՀ կառավարությունը նպատակադրվել է կոռուպցիայի դեմ պայքարի նոր ռազմավարություն մշակել, չկա Հայաստանի կողմից առերեսվող այս և այլ մարտահրավերների խորը վերլուծություն:



TOC

# VI | Հետագա քայլեր

Այս բաժինը ԲԳԿ գործողությունների ծրագիրը դիտարկում է ավելի ընդարձակ համատեքստում և առանձնացնում է հնարավոր հաջորդ քայլերն ու շահառուների կողմից մատնանշված առաջնահերթությունները:

## Երկրի առանձնահատկությունները

Երեք կարևոր իրադարձություններ են տեղի ունեցել, որոնց վրա ԲԿԳ գործողությունների ծրագիրը կարող էր ազդեցություն ունենալ: ԲԿԳ գործողությունների ծրագրում չեն ներառվել 2012թ. մայիսին կայացած խորհրդարանական, 2013թ. նախագահական ընտրությունների և Եվրոպական միության հետ ընթացող բանակցությունների վերաբերյալ պարտավորություններ: ԲԿԳ գործողությունների ծրագիրը կարող էր ներառել պարտավորություններ, որոնք կանդրադառնային վերը նշված իրադարձությունների թափանցիկությանը, հանրային մասնակցությանը և հաշվետվողականությանը: Վերջերս կովկասյան տարածաշրջանում աշխատած չորս դեսպաններ հարցեր բարձրացրեցին Հայաստանում կայացած նախագահական ընտրությունների վերաբերյալ[1]:

Կառուցողական կլինի, եթե Հայաստանի կառավարությունը գործողությունների իր հաջորդ ծրագրում պարտավորություններ ստանձնի ընտրությունների կազմակերպման վերաբերյալ, որոնք կվերաբերեն թափանցիկության բարելավմանը և քաղաքացիական հասարակության մասնակցությամբ ընտրությունների դիտարկմանը: Միևնույն ժամանակ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարող են աշխատել ԲԿԳ արժեքային համակարգը և պարտավորությունները դարձնել քաղաքական գործընթացների մաս:

Ընտրություններից հետո ՀՀ կառավարությունը հաջողությամբ ավարտեց Եվրոպական Միության (այսուհետ՝ ԵՄ) հետ ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունները[2]: Սակայն ԵՄ հետ մոտավորապես չորս տարի բանակցելուց հետո ՀՀ կառավարությունը որոշեց անդամակցել Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի մաքսային միությանը: Դժգոհություններ կան, որ որոշումների կայացման գործընթացը թափանցիկ չէր, և կառավարությունը չի անդրադարձել հասարակության տարբեր խմբերի՝ ԵՄ հետ ասոցացման համաձայնագրի նախագիծը հրապարակելու խնդրանք-պահանջին: Կառավարությունը կարող է դիտարկել հետագայում այս գործընթացներն ավելի թափանցիկ դարձնելու վերաբերյալ պարտավորության ստանձնում և հետագա նման գործընթացները դարձնել ավելի թափանցիկ ու մասնակցային:

Գործողությունների ծրագրում այս տարրերն ավելի հստակ նշելով, կառավարությունը կարող է բարելավել քաղաքացիների և պետական պաշտոնյաների համար ԲԿԳ-ի և ԲԿԳ արժեքների կարևորությունը: Եթե ԲԿԳ-ն չկարողանա Հայաստանում սրան հասնել, այն կդադարի երկրում ծառայել որպես գործիք: Միևնույն ժամանակ ԲԿԳ միջազգային աշխատակազմը պետք է ավելի սերտ աշխատի երկրների կառավարությունների հետ, որպեսզի երաշխավորի, որ երկրների կողմից ստանձնած պարտավորությունները լինեն տեղին և հավակնոտ:

Ինչ վերաբերում է ԲԿԳ գործընթացներին, տպավորություն կա, որ գործողությունների ծրագրի մշակման գործընթացը բարելավվում է: Սկզբում ԲԿԳ աշխատանքային խումբը քաղաքացիական հասարակությանն իր աշխատանքներում ներգրավում էր միայն հրավերներ ուղարկելով և հանրությանը տեղեկատվություն չէր տրամադրում նրանց կողմից տրված կարծիքների և առաջարկությունների վերաբերյալ: Ինչևիցե, 2014թ. ներկայացվելիք գործողությունների ծրագրի նախապատրաստման ընթացքում շահագրգիռ բոլոր կողմերին ներգրավելով և պարտավորություններն

TOC

ավելի մասնակցային կերպով քննարկելով, աշխատանքային խումբը հուսադրող քայլեր է կատարում: ԱՀՄ հետազոտողն առաջարկում է շարունակել ջանքեր գործադրել այս ուղղությամբ: Միևնույն ժամանակ մայրաքաղաքից դուրս գործող ՔՀԿ-ները և քաղաքացիական հասարակության առանձին ոլորտներում աշխատող կառույցները պետք է օգտագործեն գործողությունների հաջորդ ծրագրում (որի նախագիծը պետք է ներկայացվի 2014թ. ապրիլին) առաջարկություններ ներկայացնելու այս հնարավորությունները:

## Շահառուների ներկա առաջնահերթությունները

ԱՀՄ հետազոտողը գործողությունների ծրագիրը և առանձին պարտավորությունները քննարկել է ՔՀԿ-ների ներկայացուցիչների հետ դեմ առ դեմ հանդիպումների և Գյումրիում, Վանաձորում և Երևանում կայացած չորս հանդիպումների ժամանակ: ՔՀԿ-ների մեծ մասը կոռուպցիայի դեմ պայքարի, տեղեկատվության հասանելիության, բյուջեի թափանցիկության, պետական գնումների և հարկային վարչարարության թափանցիկության ու օբյեկտիվության վերաբերյալ պարտավորությունները դիտարկել են որպես ԲԿԳ գործողությունների հայկական առաջին ծրագրի ամենից կարևոր պարտավորություններ: ՔՀԿ-ներն առաջարկել են, որ ՀՀ կառավարությունը առողջապահության, կրթության, բնության պահպանության և այլ ոլորտներին վերաբերող տվյալների հասանելիությունը բարելավելու համար պետք է ժամանակակից տեխնոլոգիաներն օգտագործելու պարտավորություն ստանձնի: Հարկատուների շահերի պաշտպանության ՀԿ-ն և Պրոֆեսիոնալներ հանուն քաղաքացիական հասարակության ՀԿ-ն կոնկրետ առաջարկություններ են ներկայացրել հարկային վարչարարության և ՔՀԿ-ներին պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերում ներգրավվելու վերաբերյալ: ՔՀԿ-ներն ավելի նվազ հետաքրքրություն են հանդես բերել էլեկտրոնային կառավարման վերաբերյալ պարտավորությունների նկատմամբ՝ դրանք դիտարկելով որպես պակաս կարևոր և ԲԿԳ-ին ավելի քիչ առնչվող:

## Շահառուների ապագա առաջնահերթությունները

ՔՀԿ-ների ներկայացուցիչները նշել են, որ իրենք կցանկանային տեսնել որոշ պարտավորություններ, որոնք հասու կդարձնեին պետական ֆինանսական կառավարման, կրթության, առողջապահության, բնության պահպանության, հարկային վարչարարության և այլ ոլորտների վերաբերյալ տեղեկատվությունը և հնարավորություն կտային ընդլայնելու այս ոլորտներին վերաբերող հարցերում հանրային մասնակցությունը: Երեք թեմատիկ ոլորտներում նշվել են հետևյալ կոնկրետ առաջնահերթությունները.

**Թափանցիկություն և հաշվետվողականություն**

- Հրապարակել բարձրաստիճան պաշտոնատար բոլոր անձանց գույքի և եկամուտների վերաբերյալ հայտարարագրերը:
- Ստանդարտացնել պետական մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերի բովանդակությունն այնպես, որ դրանք ավելի հասանելի և մատչելի լինեն օգտագործողների համար:
- Հստակ ձևակերպված միջոցառումներ սահմանել կառավարության կոռուպցիայի դեմ պայքարի բնագավառում:
- Հարկային վարչարարության բնագավառում ավելացնել թափանցիկությունը, մասնավորապես՝
    - o ցանկացած դիմում կամ բողոք և ՊԵԿ-ի պաշտոնական պատասխան պետք է տեղադրել ՊԵԿ կայքում.
    - o ՔՀԿ-ների և մամուլի ներկայացուցիչներին, մասնագետներին և շահագրգիռ այլ կողմերին թույլ տալ մասնակցելու ՊԵԿ բողոքների խորհրդի նիստերին.
    - o ՔՀԿ-ների և մամուլի ներկայացուցիչներին, մասնագետներին և շահագրգիռ այլ կողմերին թույլ տալ մշտադիտարկել ներքին հետաքննությունների նիստերը:

TOC

- ՀՀ կառավարությունը պետք է էականորեն բարելավի գնումների համակարգը, այդ թվում ամբողջությամբ ներդնի էլեկտրոնային գնումների համակարգը: 2013թ. պետական բյուջեի հաշվետվության հետ միաժամանակ ՀՀ կառավարությունը պետք է մանրամասն հաշվետվություններ հրապարակի պետական գնումների վերաբերյալ, որոնք առնվազն պետք է պարունակեն հետևյալ տեղեկատվությունը. պետական տարբեր մարմինների կողմից գնումների տարբեր եղանակներով կատարվող գործարքների քանակները և ծավալները:
- ՀՀ կառավարությունը պետք է ՔՀԿ-ներին ներգրավի պետական տարբեր ծրագրերի իրականացման աշխատանքներում և ՔՀԿ-ներին դրամաշնորհներ տրամադրի այդ նպատակներով: Դրա համար.
    - o ՀՀ կառավարությունը պետք է մշակի ՔՀԿ-ների ընտրության (մրցակցային եղանակով) և պետական բյուջեից դրամաշնորհների տրամադրման մեխանիզմ և պարտավորություն ստանձնի, որ բոլոր դրամաշնորհները ՔՀԿ-ներին կտրամադրվեն այդ մեխանիզմով:
    - o ՀՀ կառավարությունը պետք է մշակի և ներդնի ՔՀԿ-ների կողմից իրականացվող ծրագրերի դիտարկման և գնահատման մեխանիզմներ:
    - o ՀՀ կառավարությունը պետք է պարտավորություն ստանձնի հրապարակել պետական բյուջեից ՔՀԿ-ների ֆինանսավորման վերաբերյալ տարեկան հաշվետվություն:

**Կառավարության ունեցած տեղեկատվության հասանելիություն**

ՀՀ կառավարությունը պետք է՝

- Հնարավորություն տա ՀՀ ֆինանսների նախարարության ինտերնետային կայքի միջոցով տեղեկատվական շտեմարաններից Excel կամ CVS ձևաչափով հեշտությամբ ստանալ տեղեկատվություն պետական ֆինանսական կառավարման մասին:
- Հնարավորություն տա ինտերնետային կայքի միջոցով Excel կամ CVS ձևաչափով հեշտությամբ ստանալ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների շտեմարանում առկա տեղեկատվությունը:
- Հնարավորություն տա ՀՀ առողջապահության նախարարության կամ պետական առողջապահական գործակալության կայքի միջոցով Excel կամ CVS ձևաչափով ստանալ պետական առողջապահական գործակալության տվյալների բազայում առկա տեղեկատվությունը (միջազգային կազմակերպությունների հրապարակումները հղում են կատարում ՊԱԳ-ի տվյալների բազային):
- ՀՀ կրթության և գիտության նախարարության միջոցով երաշխավորի, որ՝
    - o Բարձրագույն ուսումնական հաստատությունների (համալսարանների և ինստիտուտների) հաշվետվությունները հասու կլինեն նախարարության ինտերնետային կամ դրա համար նախատեսված կայքում:
    - o Նախարարությունը կգնահատի բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության արդյունավետությունը (ինչպես դա պահանջվում է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի հոդված 15-ի մաս 10-ով[3]):

**Հանրային մասնակցություն**

ՀՀ կառավարությունը պետք է ստեղծի հարթակ որտեղ ԲԿԳ հետ կապված և այլ հարցեր կքննարկի ՔՀԿ-ների հետ:

TOC

## Առաջարկություններ

ՀՀ կառավարությունը կարող է էականորեն բարելավել ԲԿԳ գործողությունների ծրագրի նախապատրաստման գործընթացը: Համաձայն ԲԿԳ աշխատանքային խմբում ներկայացված ՔՀԿ-ների ՀՀ կառավարությունն սկսել է գործողությունների երկրորդ ծրագրի նախապատրաստումը և մինչև այժմ (2013թ. հոկտեմբերի վերջի դրությամբ) այն չի համապատասխանել ԲԿԳ պահանջներին: 2013թ. օգոստոսի սկզբին ԲԿԳ աշխատանքային խմբում ներկայացված երեք ՔՀԿ-ները ստացել են գործողությունների երկրորդ ծրագրի նախագիծը ներառող նամակ և ներկայացված նախագծի վերաբերյալ մինչև նշված ժամկետի ավարտը առաջարկություններ ներկայացնելու խնդրանք: Սակայն ՔՀԿ-ները նամակները ստացել են վերջնաժամկետից 2-3 օր առաջ: Տարօրինակ է, որ այն դեպքում, երբ ՀՀ կառավարությունը կարևորում է նոր տեխնոլոգիաների դերը և հետամուտ է տարբեր ոլորտներում էլեկտրոնային կառավարման բարեփոխումներ իրականացնելու գործին, այս դեպքում չի օգտագործել էլեկտրոնային փոստով հաղորդակցվելու հնարավորությունը, այլ դրա փոխարեն օգտվել է փոստային ծառայությունից, ինչը հանգեցրել է ժամանակի կորստի: ԲԿԳ աշխատանքային խմբի հանդիպումը կայացել է 2013թ. սեպտեմբերի 9-ին: ԲԿԳ աշխատանքային խմբում ներկայացված ՔՀԿ-ները հանդես են եկել մի շարք առաջարկություններով.

- ԻԱԿ-ն առաջարկություն է ներկայացրել ստեղծել անհատական տվյալների պաշտպանության հանձնակատարի ինստիտուտ:
- «Ասպարեզ» ակումբը ներկայացրել է հետևյալ առաջարկությունները.
    - o Իրականացնել տարածքային և տեղական ինքնակառավարման բարեփոխումներին վերաբերող օրենսդրական ակտերի և հայեցակարգային փաստաթղթերի նախագծերի հանրային քննարկումներ:
    - o Բարելավել տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթները՝ շեշտը դնելով դրանք ավելի թափանցիկ դարձնելու վրա:
    - o Երաշխավորել, որ բոլոր կազմակերպությունները, որոնք միջոցներ են ստանում կառավարությունից և/կամ տեղական բյուջեներից կկատարեն տեղեկատվության ազատության մասին օրենսդրության պահանջները:
    - o Փոփոխություններ կատարել հեռահաղորդակցությանը և հանրային հեռուստատեսությանը վերաբերող օրենսդրության մեջ, որպեսզի նրանց գործառույթները դառնան ավելի թափանցիկ և հասանելի դարձնեն բոլոր հեռուստա և ռադիոընկերությունների սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունը:
    - o Այլ առաջարկություններ, որոնք վերաբերում են ոստիկանությանը, դատախազությանը և այլ գերատեսչություններին:
- ԹԻՀԿԿ-ն մի շարք առաջարկություններ է ներկայացրել.
    - o Տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը կիրառել հանրային միջոցներ օգտագործող բոլոր միավորների նկատմամբ:
    - o Մեծացնել բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի թափանցիկությունը:
    - o Հաստատել առանցքային 3-4 ոլորտների ուղղությամբ հակակոռուպցիոն թիրախային ռազմավարություն:
    - o Սահմանափակել մեկ աղբյուրից գնումները:
    - o Երաշխավորել գնումների բողոքարկման խորհրդի անկախությունը:
    - o Անդամակցել հանքային արդյունաբերության թափանցիկության նախաձեռնությանը:

TOC

Սակայն, համաձայն ՔՀԿ-ների, նրանց առաջարկությունների մեծ մասը մերժվել է[4]: ՔՀԿ-ներից երկուսը բավարարված չէին ԲԿԳ գործողությունների հայկական երկրորդ ծրագրի նախագծով և 2013թ. հոկտեմբերի 15-ին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել են, որ դիտարկում են գործողությունների այլընտրանքային ծրագիր պատրաստելու տարբերակը: ԱՀՄ հետազոտողը ՀՀ կառավարությանը և ՔՀԿ-ներին առաջարկում է.

**Կառավարությանը**

ՀՀ կառավարությունը կարող է ստորև ներկայացվող քայլերը կատարելով էականորեն բարելավել ԲԿԳ գործողությունների հայկական երկրորդ ծրագրի նախագծման գործընթացը.

- Գործընթացում ներգրավել ավելի շատ ՔՀԿ-ների, ներառյալ՝ ոլորտային և տարածքային ՔՀԿ-ներ:
- Հրապարակել հանրային քննարկումների արդյունքները, ներառյալ՝ առանձին առաջարկությունները՝ նախաձեռնելով լայնածավալ քննարկումներ:
- Ընտրել պարտավորություններ, որոնք ուղղակի կապված են ԲԿԳ արժեքների հետ: Դրանք են՝ կառավարության ունեցած տեղեկատվության հասանելիություն, հանրային մասնակցություն, հաշվետվողականություն և թափանցիկության ու հաշվետվողականության բարելավման նպատակով նոր տեխնոլոգիաների հասանելիություն:
- Հստակ ձևակերպելով նոր պարտավորությունները, նշել ժամանակացույցերը և սահմանել պարտավորությունների կատարման համար պետական մարմինների ու պաշտոնյաների պատասխանատվությունները (պարտավորության կամ ծրագրի ղեկավարը): Սահմանումների, վերջնաժամկետների և պատասխանատու մարմինների ու պաշտոնյաների հստակությունը, ինչպես նաև լավ կազմակերպված հանրային քննարկումները կօգնեն պատրաստել ինքնագնահատման ավելի լավ զեկույց:

ԱՀՄ հետազոտողը նաև այն կարծիքին է, որ գործողությունների առաջին ծրագրի նախապատրաստման և իրականացման թերությունները հիմնականում պայմանավորված են եղել փորձի պակասով և պետական պաշտոնյաների կողմից ԲԿԳ սկզբունքների ոչ բավարար ընկալմամբ: ՀՀ կառավարությունն ունի անհրաժեշտ կարողություններ այս թերությունները վերացնելու համար և պետք է երաշխավորի, որ գործողությունների հաջորդ ծրագրի մշակումն ու կատարումը կհամապատասխանեն ԲԿԳ պահանջներին:

**ՔՀԿ-ներին**

- Կարևոր է, որպեսզի ՔՀԿ-ները ներգրավվեն ԲԿԳ գործընթացում և աշխատեն, որ հայ ժողովրդի համար ԲԿԳ արժեքների հետ կապված կարևոր հարցերը ներառվեն ԲԿԳ գործողությունների ծրագրում:
- ՔՀԿ-ները պետք աշխատեն կառավարության հետ, մասնակցեն քննարկումներին և օգտագործեն կառավարության ընձեռած հնարավորությունը գործողությունների հաջորդ ծրագրի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու համար (ներկայացման ժամկետը՝ 2014թ. ապրիլ):
- Տարբեր ոլորտներում աշխատող ՔՀԿ-ները կարող են ներգրավվել ԲԿԳ արժեքների առավելությունների, մասնավորապես՝ քաղաքական գործընթացներում թափանցիկության և հանրային մասնակցության, լուսաբանման գործում:

---

[1] Հարավային Կովկասի ընտրությունը, http://nyti.ms/IELKrG
[2] http://eeas.europa.eu/armenia/
[3] «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-62), ընդունվել է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին
[4] ՔՀԿ-ների, ՀՀ կառավարության աշխատակիցների, տարբեր ոլորտներում աշխատող մասնագետների հետ քննարկումներ և փոխանակված էլեկտրոնային հաղորդագրություններ:

TOC

# Հավելված. մեթոդաբանություն

Ի լրումն կառավարության ինքնագնահատման, գնահատման անկախ հաշվետվություն է գրվում կառավարման բնագավառում հետազոտական փորձ ունեցող և հարգանք վայելող փորձագետների կողմից՝ նախապատվությունը տալով ԲԿԳ անդամ երկրի մասնագետներին: Այս փորձագետներն օգտագործում են ԲԿԳ անկախ հաշվետվության հարցաշար և ուղեցույցներ[1], որոնք ԲԿԳ տեղական շահառուների հետ հարցազրույցների և գրասենյակային ուսումնասիրության համադրումն են: Հետազոտության բարձր որակը և փաստարկվածությունը երաշխավորելու նպատակով այդ հաշվետվությունն ուսումնասիրվում է փորձագետների միջազգային խմբի կողմից, որոնց ընտրել է ԲԿԳ խորհուրդը: ԲԿԳ գործողությունների ծրագրի ընթացքի վերլուծությունը հիմնվում է հարցազրույցների, գրասենյակային հետազոտությունների և ոչ կառավարական շահառուների հետ հանդիպումների ժամանակ ստացված տվյալների վրա: ԱՀՄ հաշվետվությունը հիմնվում է նաև կառավարության ինքնագնահատման հաշվետվության բացահայտումների և քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի կամ միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակված գնահատականների վրա: Յուրաքանչյուր տեղական վերլուծող կազմակերպում է շահառուների հանդիպումներ՝ դեպքերի ճշգրիտ նկարագրումը երաշխավորելու նպատակով:

Ելնելով բյուջետային և ժամանակային սահմանափակումներից, ԱՀՄ հետազոտողը չի կարող խորհրդակցել բոլոր շահագրգիռ կամ ազդեցություն կրած կողմերի հետ: Հետևաբար, ԱՀՄ-ն ձգտում է մեթոդաբանական թափանցիկության և այդ նպատակով, հնարավորության սահմաններում, հրապարակային է դարձնում հետազոտությանը շահառուների մասնակցությունը (որն այս բաժնում հետագայում մանրամասնվել է): Երկրների առանձնահատկություններից ելնելով, այն դեպքերում, երբ պահանջվում է պահպանել տեղեկատվությունը տրամադրողների՝ կառավարության կամ ոչ կառավարական կազմակերպությունների աշխատակիցների գաղտնիությունը, ԱՀՄ-ն պահպանում է տեղեկատվությունը տրամադրողների գաղտնիությունը պաշտպանելու իրավունքը: Ի լրումն վերը նշվածի, հաշվի առնելով մեթոդի սահմանափակումները, ԱՀՄ-ն քաջալերում է յուրաքանչյուր երկրի փաստաթղթի նախագծի հանրային քննարկումների վերաբերյալ մեկնաբանությունների ներկայացումը:

## Ներածություն

Այս հաշվետվությունը պատրաստելիս ԱՀՄ հետազոտողն ակտիվ քննարկումներ է ունեցել ՔՀԿ-ների, պետական պաշտոնյաների և տարբեր ոլորտներում աշխատող մասնագետների հետ:

ԱՀՄ հետազոտողը մի շարք հանդիպումներ, հեռախոսային խոսակցություններ և էլեկտրոնային հաղորդագրությունների փոխանակումներ է ունեցել ԲԿԳ աշխատանքային խմբում ընդգրկված երեք ՔՀԿ-ների ներկայացուցիչների հետ:

ԱՀՄ հետազոտողը նաև ակտիվ հաղորդակցություններ է ունեցել տարբեր նախարարություններում և գերատեսչություններում աշխատող պաշտոնյաների հետ: Հետազոտողը պատրաստել է ԲԿԳ հայաստանյան գործողությունների ծրագրում ներառված առանձին պարտավորությունների վերաբերյալ հարցեր և էլեկտրոնային հաղորդագրությամբ ուղարկել այն պաշտոնյաներին, որոնց նշել է ՀՀ կառավարության կողմից նշանակված պատասխանատու անձը: Բոլոր էլեկտրոնային հաղորդագրություններում

TOC

ԱՀՄ հետազոտողը նշել է, որ պատրաստ է անձամբ հանդիպել և քննարկել առանձին պարտավորություններին վերաբերող հարցերը: Պաշտոնյաների մի մասը նախապատվությունը տվել է էլեկտրոնային հաղորդակցությանը, մյուսները նախընտրել են հարցերը քննարկել կամ հեռախոսով, կամ առերես հանդիպումների ժամանակ: Բոլոր այն դեպքերում, երբ տեղի է ունեցել հեռախոսային կամ առերես խոսակցություն, ԱՀՄ հետազոտողը պատրաստել է քննարկման ամփոփում և մեկնաբանությունների ու խմբագրման նպատակով էլեկտրոնային փոստով այն ուղարկել է համապատասխան պաշտոնյային: Որոշ դեպքերում ԱՀՄ հետազոտողն  ուսումնասիրել է պետական մարմինների, ՔՀԿ-ների, հետազոտական կենտրոնների և այլ աղբյուրների կողմից պատրաստված մեծածավալ հրապարակումներ, հաշվետվություններ և փաստաթղթեր: Այս հրապարակումները օգտակար էին հատկապես ՔՀԿ-ների կողմից կարևոր դիտարկված պետական գնումներին, կոռուպցիայի դեմ պայքարին, տեղեկատվության ազատությանը վերաբերող պարտավորությունների կատարումը վերլուծելիս: Բոլոր աղբյուրները նշված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

## Շահառուների ընտրությունը

ԲԿԳ աշխատանքային խմբում քաղաքացիական հասարակությունը ներկայացնելու համար ընտրվել է միայն երեք ՔՀԿ: Քանի որ այս ՔՀԿ-ները չեն ներկայացնում Հայաստանի ամբողջ քաղաքացիական հասարակությունը, ԱՀՄ հետազոտողը տարբեր ՔՀԿ-ների հետ 4 հանդիպում է կազմակերպել: ՔՀԿ-ների հետ քննարկումների, ինտերնետային կայքերի և ՔՀԿ-ների տվյալների բազաների օգնությամբ ԱՀՄ հետազոտողը պատրաստել է Գյումրիի և Վանաձորի ՔՀԿ-ների ցանկ: ՔՀԿ-ների շրջանում ԲԿԳ վերաբերյալ և Հայաստանի գործողությունների ծրագրի նախագծի պատրաստման տեղեկացվածության աստիճանը պարզելու նպատակով ԱՀՄ հետազոտողը փոքրիկ հարցում է իրականացրել: Հարցման արդյունքներով բացահայտվել է տեղեկացվածության բացարձակ բացակայություն: ԱՀՄ հետազոտողը նաև հոկտեմբերի 2-ին Գյումրիում հանդիպել է 4, իսկ հոկտեմբերի 3-ին Վանաձորում՝ 6 ՔՀԿ-ների հետ: Որոշ ՔՀԿ-ներ չեն կարողացել մասնակցել հանդիպումներին այդ օրերին նախնական այլ պայմանավորվածությունների պատճառով: ԱՀՄ հետազոտողը դիմել է Հանրային ցանցի նախագահին՝ խնդրելով հանդիպում կազմակերպել ավելի քան 150 անդամ ունեցող այդ կառույցի հետ: Նախագահը ցանցի անդամների հետ հոկտեմբերի 4-ին հանդիպում է կազմակերպել Երևանի Անի պլազա հյուրանոցում՝ հրավիրելով նաև ՀՀ կառավարության և ԲԿԳ աշխատանքային խմբում ընդգրկված ՔՀԿ ներկայացուցիչներին: ԱՀՄ հետազոտողը դիմել է նաև հարկային քաղաքականության ոլորտում աշխատող և գործարար հանրությունը ներկայացնող ՔՀԿ-ներին: Ցավոք, ՔՀԿ-ներից միայն մեկն է արձագանքել: ԱՀՄ հետազոտողը հոկտեմբերի 23-ին բնության պահպանության, տեղեկատվության ազատության, քաղաքացիական հասարակության զարգացման, հարկատուների և գործարարների շահերի պաշտպանությամբ զբաղվող մի շարք ՔՀԿ-ների ներկայացուցիչներին հրավիրել է մասնակցելու Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամի գրասենյակում կազմակերպված հանդիպմանը: ԱՀՄ հետազոտողը փորձել է կապ հաստատել գործողությունների առաջին ծրագրի նախագծման աշխատանքներում ընդգրկված ՔՀԿ-ների և անհատների հետ: Նա դեմ առ դեմ հանդիպումներ և հեռախոսային քննարկումներ է ունեցել ԲՀԿ գործողությունների հայկական ծրագրի նախագծմանը մասնակցած համապատասխանաբար երկու և մեկ անձանց հետ: ԱՀՄ հետազոտողը բավական արդյունավետ քննարկումներ է ունեցել Հայաստանում քաղաքացիական հասարակության հզորացման գործում ներգրավված կազմակերպությունների՝ Բաց հասարակության հիմնադրամների և Քաունթերփարթ ինթերնեշնլի (պատասխանատու է ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող քաղաքացիական հասարակության հզորացման ծրագրում) ներկայացուցիչների հետ:

## Շահառուների հետ առաջին և երկրորդ հանդիպումները

ԱՀՄ հետազոտողը հանդիպումներն սկսել է Գյումրիում (հոկտեմբերի 2-ին) և Վանաձորում (հոկտեմբերի 3-ին)՝  ներկայացնելով ԲԿԳ-ն, Հայաստանի գործողությունների ծրագիրը և ԲԿԳ անկախ հետազոտական մեխանիզմը: Գյումրիում և

TOC

Վանաձորում հանդիպմանը մասնակցած ՔՀԿ-ները տեղյակ չէին ԲԿԳ-ի, Հայաստանի գործողությունների ծրագրի և ՀՀ կառավարության կողմից պատրաստված ինքնագնահատման հաշվետվության մասին: Ընդհանուր տպավորություն կար, որ մայրաքաղաքից հեռու գտնվելը սահմանափակում է ՀՀ կառավարության կողմից կազմակերպված կարևոր միջոցառումներին մասնակցելու հնարավորությունը: Հանդիպումների մասնակիցների հիմնական կարծիքն այն էր, որ ՀՀ կառավարության ամենակարևոր պարտավորությունները վերաբերում են կոռուպցիայի դեմ պայքարին, տեղեկատվության ազատությանը, պետական գնումներին և գործարար միջավայրի բարելավմանը: Միաժամանակ նշվել է կարևոր այլ բարեփոխումներ նախաձեռնելու և ստորև ներկայացվող ոլորտներում ավելի շատ պարտավորություններ ստանձնելու անհրաժեշտության մասին.

- Տարածքային զարգացում,
- Բնության պահպանություն,
- Առողջապահություն,
- Կրթություն,
- Պետական կադաստր,
- Հարկային բարեփոխումներ,
- Մաքսային վարչարարություն:

Այս երկու հանդիպումներին մասնակցող ՔՀԿ-ները նաև ցանկություն են հայտնել, որպեսզի կառավարությունը երաշխավորի, որ նախարարությունների հանրային խորհուրդներն իրապես գործեն: ՔՀԿ-ներից ստացված առաջարկությունների հիման վրա ԱՀՄ հետազոտողը պատրաստել է հնարավոր պարտավորությունների ցանկ:

## Շահառուների հետ երրորդ հանդիպում

Հանրային ցանցի անդամների հետ Երևանում կայացած երրորդ հանդիպումը նույնպես բացահայտել է, որ ՔՀԿ-ները լավ իրազեկված չեն ԲԿԳ-ի, դրա նպատակների և արժեքների, Հայաստանի գործողությունների ծրագրի և ՀՀ կառավարության կողմից պատրաստված ինքնագնահատման զեկույցի մասին: ՔՀԿ-ները նշել են հանրային իրազեկման անբավարարության և պարտավորությունների սահմանման անորոշության մասին: Հանդիպման մասնակից շահառուները կոռուպցիայի դեմ պայքարին, պետական գնումներին, տեղեկատվության ազատությանը վերաբերող պարտավորությունները դիտել են որպես գործողությունների առաջին ծրագրում ներառված ամենակարևորները: Սակայն կար ընդհանուր ընկալում, որ կառավարությունը տեղեկատվություն է հավաքում նաև այլ ոլորտներում և շատ օգտակար կլինի, եթե ավելի թափանցիկ դարձնի նաև առողջապահության, կրթության և այլ ոլորտներում առկա տեղեկատվությունը:

## Շահառուների հետ չորրորդ հանդիպում

ԱՀՄ հետազոտողը չորրորդ հանդիպումն է ունեցել ՔՀԿ-ների ներկայացուցիչների հետ, որոնք չեն մասնակցել նախորդ երեք հանդիպումներին: Մասնակցել են 5 ՔՀԿ-ի 8 ներկայացուցիչներ, որոնք ներկայացրել են այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են՝ բնության պահպանությունը, առողջապահությունը, հարկատուների իրավունքների պաշտպանությունը, քաղաքացիական հասարակության զարգացումը: ՔՀՄ հետազոտողը ներկայացրել է ԲԿԳ նախաձեռնությունը, Հայաստանի գործողությունների ծրագիրը և ԱՀՄ-ն: Տեղի է ունեցել քննարկում Հայաստանի գործողությունների առաջին ծրագրի և հնարավոր այնպիսի պարտավորությունների մասին, որոնք կարող են ընդգրկվել գործողությունների հաջորդ ծրագրում: Ըստ ներկա ՔՀԿ-ների ՀՀ կառավարությունը չի իրականացրել ՀՀ գործողությունների ծրագրի վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումներ և գործողությունների երկրորդ ծրագիրը պետք է անդրադառնա այլ ոլորտների (օրինակ՝ առողջապահություն, կրթություն, բնության պահպանություն): Կոնկրետ առաջարկություններ են ներկայացվել հարկատուների շահերի պաշտպանության և ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագրերում ՔՀԿ-ների ներգրավման վերաբերյալ:

TOC

## Մեկնաբանություններ հանրության կողմից

Հաշվետվության նախագծի վերաբերյալ հանրության կողմից արված մեկնաբանությունները և ներկայացված առաջարկությունները հասանելի են www.opengovpartnership.org/country/armenia/irm կայքէջում:

## Շնորհակալագիր

ԱՀՄ հետազոտողը շնորհակալ է ՔՀԿ-ների ներկայացուցիչներին, դոնոր հանրությանը և ՀՀ կառավարության և պետական այլ մարմինների աշխատակիցներին՝ հաշվետվության պատրաստման գործում ցուցաբերած աջակցության համար: Նրանց պատասխանները և բացատրությունները, ինչպես նաև այն փաստաթղթերը և լինքերը, որ տրամադրել են, օգնել են այս հաշվետվությունը դարնձնել առավել ընդգրկուն:

ԻԱԿ-ից, ԹԻՀԿԿ-ից և լրագրողների «Ասպարեզ» ակումբից ստացված մեկնաբանությունները նպաստել են ծանոթանալու ԲԿԳ աշխատանքային խմբում ներկայացված տարբեր տեսակետներին, կարծիքներին և դիրքորոշումներին:

ՀՀ կառավարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության ավագ մասնագետ Ռոզա Վարդանյանն օգնել է տարբեր պարտավորությունների համար պատասխանատու տարբեր պաշտոնյաների հետ կապեր հաստատելու գործում: ԱՀՄ հետազոտողը ցանկանում է շնորհակալություն հայտնել լրագրողների «Ասպարեզ» ակումբին, «Լոռու զարգացման կենտրոն» ՀԿ-ին, Լոռու ՀԿ-ների կենտրոնին, «Արազա» ՀԿ-ին, Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամին՝ հանդիպումների կազմակերպման գործում նրանց աջակցության համար:

## Անկախ հաշվետվական մեխանիզմի մասին

Անկախ հաշվետվական մեխանիզմը՝ ԱՀՄ-ն, այն կարևոր գործիքն է, որի օգնությամբ կառավարությունը, քաղաքացիական հասարակությունը և մասնավոր հատվածը երկու տարին մեկ կարող են հետևել կառավարության կողմից ԲԿԳ գործողությունների ծրագրի մշակմանն ու իրականացմանը: Այս հետազոտության նախագծումը և որակի վերահսկողությունն իրականացվում է փորձագետների միջազգային խմբի կողմից, որը բաղկացած է թափանցիկության, հանրային մասնակցության, հաշվետվողականության և սոցիալ-հասարակական ոլորտում (social science) փորձառություն ունեցող մասնագետներից: Ներկա պահին փորձագետների միջազգային խմբում ընդգրկված են հետևյալ մասնագետները.

- Յամինի Այար
- Դեբի Բադլենդր
- Ջոնաթան Ֆոքս
- Ռոզմարի ՄըքԳի
- Գերարդո Մունկ

Համագործակցելով հետազոտողի հետ, Վաշինգտոնում տեղակայված փոքր անձնակազմը կառավարում է ԱՀՄ հաշվետվությունների պատրաստման գործընթացը: Այս հաշվետվության վերաբերյալ հարցերն ու մեկնաբանությունները կարող են ուղղվել irm@opengovpartnership.org հասցեով:

TOC

[1] Ամբողջական ուղեցույցը կարելի գտնել.http://bit.ly/120SROu




Independent Reporting Mechanism
Open Government Partnership
c/o OpenGovHub
1110 Vermont Ave, NW
Suite 500
Washington, DC 20005


Open Government Partnership
INDEPENDENT REPORTING MECHANISM